


ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ՆԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՓԻՆԵ ՄԱԴՈՅԱՆ

ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ
ԽՈՍՔԻ ԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ
ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ
ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՓԻՆԵ ՀԱՄԼԵՏԻ ՄԱԴՈՅԱՆ

ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ԽՈՍՔԻ
ԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ
ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2021

ՀՏԴ 811.111
ԳՄԴ 81.432.1
Մ 136

*Հրատարակության է երաշխավորել ԵՊՀ եվրոպական լեզուների
և հաղորդակցության ֆակուլտետի գիտական խորհուրդը և
անգլիական բանասիրության ամբիոնը:*

Խմբագիր՝ Բ.Գ.Պ., պրոֆեսոր Շ.Հ. Պարոնյան

Գրախոս՝ Բ.Գ.Թ. դոցենտ Գ. Ռ. Հարությունյան

Մաղոյան Արփինե Համլետի

Մ 136 Քննադատական խոսքի գործաբանական քննությունը
անգլերենում/Ա. Հ. Մաղոյան: - Եր., ԵՊՀ հրատ., 2021,
196 էջ:

Մենագրության նպատակն է քննության առնել քննադատական խոսքի դրսևորումներն անգլերենում: Լեզվագործաբանական, հանրալեզվաբանական և դիսկուրսի տեսության դրույթների հաշվառմամբ վեր են հանվում քննադատական ներագդեցության առանձնահատկությունները ասույթի իլլոկուտիվ և պերլոկուտիվ մակարդակներում: Հակընդդեմ երկխոսական միավորների ուսումնասիրությունը իրականացվում է հարատեքստի, համատեքստի, ինչպես նաև հարալեզվական միջոցների հենքի վրա, ինչը հնարավորություն է ընձեռում բացահայտելու այն հաղորդակցական մարտավարությունները, որոնք կիրառվում են քննադատական խոսքում: Կատարված հետազոտությունը կարող է արդյունավետ լինել ներդաշնակ, հակամարտություններից զերծ հաղորդակցություն իրականացնելու գործում: Աշխատությունը կարող է օգտակար լինել խոսքի ներագդեցությանը, դիսկուրսի տեսությանը, հանրալեզվաբանությանն առնչվող հարցերի քննությամբ զբաղվող լեզվաբաններին, ուսանողներին:

ՀՏԴ 811.111
ԳՄԴ 81.432.1

ISBN 978-5-8084-2508-8

© ԵՊՀ հրատ., 2021
© Մաղոյան Ա. Հ., 2021

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....	5
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	11
ԳԼՈՒԽ 1	
ԽՈՍՔԻ ՆԵՐԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ	
ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ.....	12
Խոսքի լեզվագործաբանական քննության հիմնադրույթները	12
Պերլոկուտիվ ակտի հաղորդակցական գործառույթը	
դիսկուրսում.....	39
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	54
ԳԼՈՒԽ 2	
ՔՆՆԱԴԱՏՄԱՆ ՆԵՐԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ ԼԵԶՎԱԳՈՐԾԱԲԱՆԱ- ԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՉԱՄԻՋՈՑՆԵՐԸ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ.....	63
Քննադատական խոսքի սոցիալ-հոգեբանական	
նախադրյալները	63
Քննադատական վերաբերմունքի արտահայտումն ասույթի	
իլլոկուտիվ մակարդակում	79
Քննադատական խոսքի տարատեսակները անգլերենում.....	107
Հարալեզվական միավորների կիրառությունը քննադատական	
խոսքում	117
ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	144
ԳԼՈՒԽ 3	
ԽՈՍՔԻ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՆԵՐԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ	
ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ.....	149
Երկկողմանի քննադատման յուրահատկություններն	
անգլերենում.....	149
Միակողմ քննադատման ներազդեցության դրսևորումն	
անգլերենում.....	165
ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ.....	180
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	185

ՆԵՐԱՄՈՒԹՅՈՒՆ

Խոսքային փոխներգործությունը կարելի է բնութագրել որպես հասարակական գործունեության մի տեսակ, որի միջոցով արտահայտվում են մարդու հոգեկերտվածքը, հոգեկան աշխարհը: Եվ քանի որ լեզուն կիրառվում է կոնկրետ հանրամշակութային միջավայրում, ապա խոսող անհատների վարքը գնահատելու համար նրանց լեզվական միջոցների քննություն կատարելու անհրաժեշտություն է ծագում¹: Խոսընկերների զգացմունքները, նրանց վերաբերմունքը, հիշողությունները քննելիս դարձյալ կարևոր է հենվել դրանց լեզվական դրսևորումների վրա: Ընդամին, խոսքը ոչ թե մտքերի արտահայտման չեզոք միջոց է, այլ ակտիվ, դինամիկ գործընթաց, երբ խոսակիցները կոնկրետ հաղորդակցական նպատակներ են հետապնդում: Կարելի է ասել, որ լեզուն ինքնին միջանձնյա փոխհարաբերությունները գնահատելու գործիք է, ինչից հետևում է, որ մարդկային վարքագծի ուսումնասիրությունը պետք է հենվի խոսքային փոխներգործության քննության վրա: Լեզվական կոնկրետ միջոցների կիրառմամբ խոսողները նյութականացնում են իրենց անհատական և հասարակական դիրքորոշումները, իրենց զգացմունքները: Այսինքն՝ անհատի խոսքային գործունեությունը, որոշակի խոսքային մարտավարության ընտրությունը արտահայտում են նրա հաղորդակցական նպատակները, դիրքորոշումները և հույզերը:

Հարկ է նշել, որ հաղորդակցման ընթացքում զրուցակիցները կարող են ոչ միայն դրական, այլև բացասական դիրքորոշում, տեսակետներ, հույզեր արտահայտել: Բացասական նախատրամադրվածությունը, դիրքորոշումը հաճախ արտահայտվում են քննադատական նրբերանգներ պարունակող լեզվական միջոցների օգնությամբ: Պետք է ասել, որ քննադատումը սովորաբար դիտվում է որպես հասարակական վարքագծի ձև և քննության է

առնվում հասարակական գիտությունների շրջանակում, մասնավորապես սոցիալական հոգեբանության և կոնֆլիկտաբանության ոլորտում: Վերջին շրջանում, սակայն, քննադատումը հայտնվել է նաև լեզվաբանական հետազոտությունների տեսադաշտում, երբ ուսումնասիրվում են հաղորդակցական բախումներին, ներհակ խոսքային փոխներգործությանն առնչվող խնդիրներ (Բեքարյան 2007, Պարոնյան, Բեքարյան 2007, Briggs 1996, Johnson, Johnson 1995, O' Connel 2002, Piazza 1990, Dorril 1997, Kakava 2003, Krabbe 2002, van Eemeren, Grootendorst 2004):

Կապակցված խոսքի՝ դիսկուրսի վերլուծությունը անհրաժեշտաբար ենթադրում է լայն համատեքստի՝ հարատեքստի առկայություն, որտեղ կարևոր դեր են խաղում խոսքը կերպերի փոխհարաբերությունները, խոսքնթացի սոցիալ-հոգեբանական հենքը: Սույն հետազոտության շրջանակներում քննության են առնվում քննադատման լեզվական դրսևորումները, որոնք բնորոշ են խոսքի պերլոկուտիվ մակարդակին: Պետք է ասել, որ ի տարբերություն լոկուտիվ և իլլոկուտիվ ակտերի, որոնք բազմիցս քննարկվել են լեզվաբանական տեսությունների շրջանակներում, պերլոկուտիվ ակտին դեռևս համեմատաբար քիչ անդրադարձ է եղել: Իլլոկուտիվ և պերլոկուտիվ ակտերի տարանջատումը գործաբանության բարդ խնդիրներից է, որը լուսաբանելու համար անհրաժեշտ է ուսումնասիրել խոսքային ակտի իլլոկուտիվ ու պերլոկուտիվ մակարդակները և վերանայել խոսքային ակտերը մեկնաբանող տեսությունները (Austin 1962, Searle 1969, 1975, Gu 1993):

Ինչպես գիտենք, պերլոկուտիվ ակտի գործաբանական գործառույթը խոսողի կողմից հասցեատիրոջ վրա որոշակի ազդեցություն գործելն է: Ի տարբերություն խոսքային ակտի մյուս երկու իմաստային բաղադրիչների՝ լոկուտիվ և իլլոկուտիվ ակտերի պերլոկուտիվ ակտի հաղորդակցական գործողությունը պայմա-

նադրական հենքով չի իրագործվում: Այսինքն՝ լեզվի համակարգում չկան պերլոկուտիվ իմաստ արտահայտող հատուկ միջոցներ (ինչպես, օրինակ, ստորոգում կամ իլլոկուտիվ իմաստ արտահայտող լեզվական միջոցները լոկուտիվ և իլլոկուտիվ ակտերի դեպքում) (Austin 1962, Searle 1969): Այսպիսով, պերլոկուտիվ ակտի էությունն ունկնդրի վրա խոսողի արտաբերած ասույթի անմիջական հետևանքն է, իսկ քանի որ լեզվագործաբանական տեսությունների շրջանակներում խոսընթացի այս կողմի քննությանը հազվադեպ է անդրադարձ արվում, ուստի կարելի է եզրակացնել, որ խոսողի դերն ավելի է կարևորվում, այդ պատճառով ունկնդիրը չի դիտվում որպես հաղորդակցման ակտիվ, լիիրավ մասնակից: Ինչ խոսք, ցանկացած հաղորդակցում իր բնույթով ուղղորդված է որևէ հնարավոր ունկնդրի, և այս համատեքստում վերջինիս դերը նույնքան կարևոր է, որքան խոսողինը: Պերլոկուտիվ ակտի իրագործումը պայմանավորված է նաև ունկնդրի ճիշտ մտահանգում կատարելու կարողությամբ: Այսինքն՝ խոսողի արտաբերած ասույթը ներազդման շարժառիթ է, մինչդեռ դրա հետևանքով ունկնդրի մեջ ի հայտ եկած փոփոխությունը պերլոկուտիվ ազդեցությունն է: Եթե խոսողի արտաբերած ասույթն ունկնդրի վրա ոչ մի ազդեցություն չի թողնում, ապա այն դիտվում է որպես պարզապես «ներազդման փորձ»: Եթե ունկնդրի զգացմունքները, մտքերը, գործողությունները փոփոխվում են մինչև խոսողի կողմից որևէ ասույթ արտաբերելը, ապա այս փոփոխությունները չեն վերագրվում խոսողին, այսինքն՝ վերջինս որևէ պերլոկուտիվ ակտ չի իրագործում: Ընդամին պերլոկուտիվ ակտն իրագործվում է պերլոկուտիվ շարժառիթի և պերլոկուտիվ ազդեցության համատեղմամբ:

Խոսելով պերլոկուտիվ ազդեցության դրսևորումների մասին՝ գործաբանները սովորաբար նշում են, որ անհնար է խոսողի արտաբերած ասույթից ենթադրել դրա առաջացրած ազդեցության

բնույթը (Austin 1980, Searle 1999, Schiffrin 2005): Այսինքն՝ խոսողը չի կանխատեսում և գիտակցաբար չի պլանավորում որոշակի պերլոկուտիվ ակտի իրագործումը: Իլլոկուտիվ ակտի պայմանադրայնության գաղափարից ենթադրաբար հետևում է, որ խոսողը սովորաբար չի սահմանափակում իր արտաբերած ասույթին բնորոշ պերլոկուտիվ իմաստները և, ըստ այդմ, չի փորձում կառավարել խոսընկերոջ վրա ներագդելու գործընթացը: Սակայն խոսքային գործողության սույն իմաստային դաշտի քննությունը մեզ թույլ է տալիս ենթադրել, որ պերլոկուտիվ ազդեցության լեզվական դրսևորումը կարող է լինել կանոնակարգվող հաղորդակցական գործընթաց: Գործաբանական դրույթների և դիսկուրսիվ մարտավարությունների քննությունը թույլ է տալիս պնդել, որ կոնֆլիկտային խոսքային իրադրություններում պերլոկուտիվ ակտ կարող է իրագործվել որոշ պայմանադրական հենքով և սահմանափակվել իլլոկուտիվ ակտերի որոշակի խմբերի գործադրմամբ: Այլ կերպ ասած՝ քննադատման պերլոկուտիվ ազդեցության իրագործումը կարող է խոսողի հաղորդակցական նպատակի մասը կազմել: Քննադատման իրագործումը պայմանավորված է խոսողի բացասական դիրքորոշմամբ և իրագործվում է խոսքային ակտերի որոշակի իմաստային տարատեսակների գործադրմամբ: Քննադատման պերլոկուտիվ ակտի իմաստը ճիշտ ապակողավորելու համար ունկնդրից պահանջվում են հենքային գիտելիքի առկայություն, հարատեքստային ցուցիչների կիրառում և մտահանգում կատարելու ունակություն:

Սույն մենագրական ուսումնասիրությունը նպատակ ունի քննության առնելու խոսքային ակտերի պերլոկուտիվ իմաստային դաշտը և վեր հանելու պերլոկուտիվ իմաստներից մեկի՝ քննադատման լեզվագործաբանական առանձնահատկությունները գեղարվեստական դիսկուրսում: Աշխատանքում առանցքային է համարվում ուսումնասիրել հակընդդեմ երկխոսական միավոր-

ներում առկա քննադատական վերաբերմունքի հաղորդակցական դրսևորումները խոսքային ակտի պերլոկուտիվ մակարդակում: Քննության ենք առնում նաև քննադատական խոսքի լեզվական դրսևորումները խոսքային ակտի իլլոկուտիվ մակարդակում:

Մասնավորապես փորձ է արվում լուսաբանելու քննադատական խոսքի դրսևորումները ուղիղ և անուղղակի խոսքային ակտերի հաշվառմամբ: Այլ կերպ ասած՝ լուսաբանվում են քննադատական դրսևորումների սոցիալ-հոգեբանական դրդապատճառները՝ հենվելով լեզվական քաղաքավարության՝ որպես խոսքի կառավարող կարևորագույն գործոնի վրա: Հակընդդեմ երկխոսական միավորների քննությունը խոսքի վերհատույթային մակարդակում հնարավորություն է ընձեռում որոշարկելու քննադատական խոսքի դրսևորման ուժգնության աստիճանը, քանի որ հնչերանգը և հարալեզվական միջոցները կարող են էապես փոխել հաղորդակցության ընթացքը՝ հանգեցնելով միջանձնյա հակամարտության: Անդրադարձ է կատարվում նաև քննադատման պերլոկուտիվ ազդեցության հաղորդակցական տարատեսակներին՝ ըստ կոնֆլիկտային հարաբերությունների դրսևորման խոսքային առանձնահատկությունների: Առերես հաղորդակցությունը չի կարող զերծ մնալ հակամարտահարույց իրավիճակներից, ուստի քննադատական խոսքի յուրահատկությունները ուսումնասիրությունը այս առումով կարևորվում է, քանի որ շատ հաճախ ոչ լեզվակիր խոսող-անհատներին հասու չէ անգլիախոս զրուցակցի հաղորդակցական նպատակը: Հետևաբար խոսքային ակտերին բնորոշ պերլոկուտիվ իմաստային դաշտի հաղորդակցական առանձնահատկությունների հստակ որոշարկումը դառնում է անհրաժեշտություն: Այսինքն՝ կատարված հետազոտության շրջանակում լուսաբանվում են հնարավոր հաղորդակցական բախումները կանխատեսելու և կառավարելու մեխանիզմները: Քննադատական խոսքի համակողմանի քննությունը խոսքային ակտերի

իլլոկուտիվ և պերլոկուտիվ մակարդակների փոխներգործության տեսանկյունից առավել ամբողջական է դարձնում հակընդդեմ հաղորդակցությանը բնորոշ յուրահասկությունները: Սույն հետազոտության մեջ կատարված քննությունը և ստացված արդյունքները որոշակի ներդրում են գործաբանության, դիսկուրսի տեսության մեջ, քանի որ հնարավորություն են ընձեռում նորովի մեկնաբանելու խոսքային ակտերի իլլոկուտիվ և պերլոկուտիվ իմաստների փոխներգործությունը խոսքում: Բացի դրանից՝ քննադատում պարունակող երկխոսությունների քննությունը հնարավորություն է ընձեռում մշակելու հակամարտահարույց խոսքային իրադրություններից խուսափելու ռազմավարություն: Ուսումնասիրության արդյունքները կարող են կիրառվել անգլերենի դասավանդման գործնական դասընթացներում, գործաբանական լեզվաբանության, դիսկուրսի տեսության խնդիրները լուսաբանող տեսական դասընթացներում և համապատասխան ուսումնամեթոդական ձեռնարկներում:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Որպես խոսող անհատի հասարակական «ես»-ի անբաժանելի մաս՝ լեզուն ուղղորդում է նրա հասարակական վարքագիծը: Պետք է ասել, որ անհատի հասարակական վարքի ուսումնասիրությամբ զբաղվում է սոցիալական հոգեբանությունը, որտեղ լեզվի դերը առաջնային չէ: Մույն գիտակարգի խնդիրն է բացահայտել անհատի հանրային վարքագծի դրսևորման դրդապատճառները, նրա մտածողությունը, զգացմունքները ձևավորող գործոնները: Ըստ այդմ՝ սոցիալական հոգեբանության շրջանակներում երկու կարևոր, միմյանցից անկախ խնդիրներ առաջադրվեցին: Սկզբնապես սոցիալ-հոգեբաններն ուսումնասիրում էին անհատի հանրային վարքագիծը և քննում հասարակական ճանաչողությանն առնչվող խնդիրներ: Հետագայում հանրային վարքագծի և ճանաչողության տարանջատումը վերացավ, ճանաչողությունն ու վարքագիծը որակվեցին որպես սերտորեն փոխկապակցված իրողություններ (Potter, Wetherell 1987, te Molder, Potter 2005): Եթե սկզբում սոցիալական հոգեբանության ներկայացուցիչները լեզուն բնութագրում էին որպես անհատի ներաշխարհի արտահայտման չեզոք միջոց (Tuffin 2005), ապա հետագայում նրանք սկսեցին անդրադառնալ նաև դիսկուրսի հոգեբանությանը՝ խոսքը դիտելով որպես ինքնուրույն, անկախ հասարակական գործունեության դրսևորում: Ընդամին, ներկայումս ընդունված է առանձնացնել խոսքի յուրահատուկ հոգեբանական միավոր, այսպես կոչված, սեփական խոսք (self-discourse), որի միջոցով սոցիալ-հոգեբանները փորձում են ստեղծել անձի հոգեբանական նկարագիրը (Potter, Wetherell 1987):

ԳԼՈՒԽ 1

ԽՈՍՔԻ ՆԵՐԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ

Խոսքի լեզվագործաբանական քննության հիմնադրույթները

Լեզվի կիրառական հայեցակերպի՝ խոսքային գործունեության քննությունը բավականին խորը արմատներ ունի ժամանակակից լեզվաբանության մեջ: Նախորդ դարի 50-80-ական թվականներին հաղորդակցական և գործաբանական լեզվաբանությունները, դիսկուրսի վերլուծության տեսությունը դեռևս հաստատուն տեղ չէին գրավել լեզվաբանական այլ գիտակարգերի կողքին: Այսօր վստահաբար կարելի է ասել, որ դրանք խոսքի քննության կարևորագույն ոլորտներ են, որոնք կիրառում են նախորդ լեզվաբանական հետազոտությունների շնորհիվ կուտակված լեզվի համակարգային բնութագրերին վերաբերող հարուստ տվյալները՝ խոսքի կիրառման յուրահատկությունները գիտականորեն մեկնաբանելու և ճշգրիտ վերլուծելու նպատակով: Այսպիսով, խոսքային համակարգի քննությունը, խոսքին բնորոշ օրինաչափությունների վերծանումը մեծապես հենվում են լեզվական համակարգին առնչվող հետազոտությունների վրա: Քանի որ լեզուն բնորոշ է մարդուն, որը հոգեբանական հատկանիշներով, մտածողական համակարգով օժտված հասարակական էակ է, իսկ խոսքային գործունեությունն էլ իր հերթին ենթադրում է որոշակի հասարակական գործունեություն, ապա պարզ է դառնում, որ խոսքը բազմատարր երևույթ է և առնչվում է մարդու հոգեկան, հասարակական կերտվածքի տարբեր կողմերին: Ընդամին, խոսքային ոլորտի քննությունն էլ անհրաժեշտաբար միջգիտակարգային հենքով պետք է տարվի: Այս առումով կարելի է փաստել, որ գործաբանական լեզվաբանությունը բավականին ընդգրկուն

լեզվամտահորիզոն ունի և առնչվում է մարդու հասարակական ու հոգեկան գործունեության տարբեր կողմերի քննությանը:

Այսպես, ինչպես գիտենք, լեզվի կիրառման գործընթացը՝ խոսքը, ենթադրում է ճանաչողական մեխանիզմների ակտիվացում: Գործաբանական լեզվաբանության մեջ քննության են առնվում խոսքային գործունեության յուրահատուկ դրսևորումները՝ հիմնվելով հաղորդակցման հանրամշակութային համատեքստի վրա, իսկ քանի որ խոսող անհատները մշտապես կանգնած են լեզվական որոշակի միջոցների ընտրության առջև, ապա անհրաժեշտաբար ուսումնասիրվում են տվյալ լեզվական միջոցների կիրառման դրդապատճառները, ինչպես նաև դրանցից բխող հետևանքները (Verschueren 2009):

Ելնելով քննարկվող խնդիրների շրջանակի բնույթից՝ որոշ լեզվաբաններ փորձում են գործաբանական լեզվաբանությունը ներկայացնել որպես ընդհանուր լեզվաբանության բաղադրիչ, որի գործառույթը սահմանափակվում է քերականությանը կամ իմաստաբանությանը վերաբերող լրացուցիչ տեսական լուսաբանումներ տալով: Այսպես, Ջ. Լիչի պնդմամբ քերականությունը և գործաբանական լեզվաբանությունը ընդգրկված են ընդհանուր լեզվաբանության համակարգում (Leech 1983): Դրան հակառակ՝ Փ. Քոուլը գտնում է, որ իմաստաբանության խնդրո առարկան լեզվական նշանների պայմանադրական իմաստի քննությունն է, մինչդեռ գործաբանական լեզվաբանությունն ուսումնասիրում է դրանց ոչ պայմանադրական իմաստը (Cole 1981): Նման տեսակետի է հարում նաև Ջ. Լևինսոնը, որի բնորոշմամբ գործաբանությունը մի գիտակարգ է, որի խնդրո առարկան ոչ պայմանադրական իմաստի ուսումնասիրությունն է, իսկ կարևորագույն գործոնը հարատեքստն է (Levinson 1983):

Գործաբանական լեզվաբանության գիտահետազոտական ընդգրկումն շրջանակը առաջ է քաշում այլ լեզվաբանական գիտա-

կարգերից այն տարանջատելու խնդիրը: Ըստ Ս. Դեյվիսի՝ գործաբանական լեզվաբանությունը, քերականությունը և իմաստաբանությունը չի կարելի դիտել որպես նույն հարթության վրա գտնվող գիտակարգեր, քանզի իմաստաբանությունը և քերականությունը առաջադրում են տեսություններ, որոնք փորձում են վերլուծել խոսողի լեզվական կարողությունները, իսկ գործաբանական լեզվաբանության խնդրո առարկան դեռևս անորոշ է, ինչի հետևանքով այն անարդյունավետ է (Davis 1991):

Շեշտելով գործաբանական լեզվաբանության՝ որպես անկախ լեզվաբանական գիտակարգի կարևորությունը՝ Ջ. Քամինգսը նշում է. «Գործաբանական լեզվաբանությունը, անկասկած, շատ կարևոր տեսական դրույթներ է փոխառել այլ լեզվաբանական գիտակարգերից: Սակայն վերոնշյալ լեզվաբանական գիտակարգի խնդրո առարկան սույն փոխառված տեսությունների քննությունը չէ, քանզի գործաբանական լեզվաբանությունն ունի ուսումնասիրության իր առարկան և կարող է նպաստել այլ լեզվաբանական գիտակարգերում գոյություն ունեցող խնդիրների - լուսաբանմանը: Այսպիսով, գործաբանական լեզվաբանության գործառույթը այլ լեզվաբանական ուղղությունների համար նոր տեսական դրույթներ առաջադրելն է» (Cummings 2005:12): Հատկանշական է, որ չժխտելով գործաբանական լեզվաբանության մեջ ընդգրկված «փոխառված» տեսությունների առկայությունը՝ Ջ. Քամինգսը կարևորում է դրա՝ լեզվաբանական այլ գիտակարգերի վրա ունեցած ազդեցությունը:

Գործաբանական հետազոտություններում հատկապես կարևորվում է հարատեքստը (Levinson 1983, Verschueren 2009), հետևաբար որպես գործաբանական լեզվաբանության խնդրո առարկա կարելի է դիտել հարատեքստային իմաստը՝ ներառելով լեզվի հնչյունական, ձևաբանական, շարահյուսական յուրահատուկ դրսևորումները կոնկրետ հարատեքստում: Կարևորելով

հարատեքստի գործոնը լեզվագործաբանության տեսական դրույթների համակարգում՝ Ռ. Ռայխմանը նշում է. «Նախադասության կառուցվածքի իմացությունից զատ մենք տիրապետում ենք մի այլ գիտելիքի (հարատեքստի), որն էլ նպաստում է տեղեկատվության փոխանցման գործընթացին» (Reichman 1985):

Քննելով գործաբանական լեզվաբանության գիտահետազոտական ոլորտին առնչվող խնդիրներ՝ Ա. Ուայզերը նշում է. «Հայտնի է, որ լեզվագործաբանական մեխանիզմների կիրառումը հանգեցնում է նոր, ձևափոխված շարահյուսական կառույցների առաջացմանը, ինչը, սակայն, պարտադիր չէ դիտել որպես շարահյուսական օրինաչափություն: Լեզվագործաբանները ոչ միայն ընդլայնում են իրենց ուսումնասիրության դաշտը, այլև լեզվի նկատմամբ բացարձակապես նոր տեսական մոտեցումներ կիրառում» (Weiser 1974:729): Ի տարբերություն լեզվաբանական այլ գիտակարգերի՝ գործաբանական լեզվաբանությունը չի սահմանափակվում որոշակի լեզվական ոլորտի շրջանակներում կատարվող հետազոտություններով և շարունակ «սպրդում է» միջգիտակարգային այլ ոլորտներ՝ խախտելով մերթ հանրալեզվաբանության, հոգելեզվաբանության, ճանաչողական լեզվաբանության, լեզվափիլիսոփայության, մերթ սոցիալական հոգեբանության, սոցիոլոգիայի, ճանաչողագիտության սահմանները: Հետևաբար գործաբանական լեզվաբանությունը կարելի է սահմանել որպես լեզվի նկատմամբ գործառույթային դրույթներ կիրառող լեզվաբանական գիտակարգ, որում կարևորվում է լեզվի ճանաչողական, հանրային, մշակութային դրսևորումների համապարփակ ուսումնասիրության կարևորությունը:

Քննելով գործաբանական լեզվաբանության փոխհարաբերությունները այլ լեզվաբանական գիտակարգերի հետ՝ նկատում ենք, որ լեզվափիլիսոփայական մի շարք կարևոր դրույթներ ելակետային են գործաբանական լեզվաբանության համար: Թերևս

այս փաստը մեկնաբանվում է դրա ակունքներում կանգնած լեզվափիլիսոփաների՝ Ջ. Օսթինի և Ջ. Սըրլի առաջադրած խոսքային ակտերի տեսության դրույթներով, որը կարելի է որակել որպես գործաբանական լեզվաբանությունը սահմանող ելակետային ուսմունքերից մեկը (Austin 1962, Searle 1969): Ելնելով այն սկզբունքից, որ լեզվի կիրառությունը խոսքային գործողության ձև է՝ Ջ. Օսթինը և Ջ. Սըրլը հերքեցին բառերը որպես զուտ վերացական հասկացություններ մեկնաբանող ավանդական մոտեցումները: Գործաբանության և մասնավորապես խոսքային ակտերի ուսումնասիրությունների արդյունքում լեզվաբանները հստակ տարբերակում մտցրին թվացյալ նմանություն ունեցող միավորերի՝ նախադասության, ասույթի և խոսքային ակտի միջև: Նախադասությունն ավարտուն միտք է, որն անվանում է օբյեկտիվ իրականությանն առնչվող փաստերն ու իրադարձությունները (Чахоян 1979): Որոշակի խոսքային իրավիճակներում կիրառվելով՝ նախադասությունը վերածվում է ասույթի՝ արտահայտելով խոսողի հաղորդակցական նպատակը (Searle 1969): Խոսքային ակտը հաղորդակցման կարևոր իմաստային բաղադրիչի՝ խոսողի մտադրության փոխանցումն է լսողին: Խոսքային ակտը և դրա յուրահատուկ կառուցվածքը ելակետային են գործաբանական լեզվաբանության և դրա ուսմունքներից մեկի՝ խոսքային ակտերի տեսության համար:

Մյուս կարևոր լեզվափիլիսոփայական դրույթը, որը նույնպես կարելի է դիտարկել որպես ելակետային գործաբանական լեզվաբանության շրջանակում, Փ. Գրայսի առաջադրած համագործակցության սկզբունքն է¹:

Հարկ ենք համարում նշել, որ խոսքային ակտերի տեսությունը ներառում է ներլեզվական և արտալեզվական գործոնների քննություն, որոնք պայմանավորված են խոսքային ակտի իմաստային կառուցվածքով և որոշակի իմաստային մակարդակների

անկայությամբ:

Խոսքային ակտերի տեսության հիմնադիր Ջ. Օսթինը խոսքային ակտի իմաստային կառուցվածքում առանձնացնում է հետևյալ մակարդակները.

- լոկուտիվ մակարդակ, որում արտահայտվում է տվյալ ասույթի ստորոգման բովանդակությունը, այսինքն՝ բառացի իմաստը,
- իլլոկուտիվ մակարդակ, որով արտահայտվում է հաղորդակցման իմաստը՝ խոսողի մտադրությունը,
- պերլոկուտիվ մակարդակ, որով արտահայտվում է լսողի վրա խոսողի ունեցած ազդեցությունը (Austin 1962):

Ինչպես տեսնում ենք, խոսքային գործունեության ընթացքում ներգրավված արտալեզվական գործոնները մեծ դեր են խաղում խոսքային ակտի իլլոկուտիվ և պերլոկուտիվ մակարդակներում: Խոսքային ակտերի տեսության դրույթների համաձայն՝ ասույթը ոչ միայն որոշակի իմաստ է արտահայտում, այլև հաղորդում հաղորդակցման գործաբանական իմաստը, այսինքն՝ խոսողի մտադրությունը, օրինակ՝ հրաման, խնդրանք, հարցում և այլն: Ինչպես Ջ. Սթրլն է նշում, «այն, ինչ կա խոսողի մտքում ասույթն արտաբերելիս, կախված է նրա մտադրությունից: Խոսողի մտքին ներհատուկ դիտավորությունը փոխանցվում է բառերի, նախադասությունների միջոցով, որոնք ոչ միայն պայմանադրական, այլ նաև միտումնավոր, դիտավորյալ իմաստ ունեն, որը լեզվաբանության մեջ հայտնի է որպես խոսողի իմաստ (speaker meaning) (Searle 1999): Իլլոկուտիվ ակտի միջոցով կարելի է արտահայտել տարբեր գործաբանական իմաստներ, որոնք խոսողի մտադրությունը կամ դիտավորությունն են կազմում: Խոսքային ակտի դիտավորությամբ էլ պայմանավորված է դրա գործաբանական գործառույթը խոսքում: Քննելով խոսքային ակտերի մակարդակները՝ Ջ. Լևինսոնը նշում է. «Ունկնդիրը պետք է կարողանա ընկա-

լել խոսողի մտադրային իմաստը» (Levinson 1983: 17):

Հայտնի է, որ բանավոր խոսքի գործադրումը պամանավորված է որոշակի կանոններով (Պարոնյան 2011): Ջ. Օսթինը առաջին լեզվափիլիսոփան էր, որը խոսքային ակտի հաջող կամ անհաջող իրագործման խնդիրը լուրջ լեզվաբանական քննության առարկա դարձրեց: Ստեղծելով պերֆորմատիվ ասույթների անհաջողությունների ուսմունքը՝ նա մշակեց այն նախադրյալները, որոնք պերֆորմատիվ ասույթի հաջողության գրավականն են, և որոնց տարաբնույթ խախտումների դեպքում ասույթը չի կատարում իր պայմանադրական խոսքային գործառույթը²:

Ջ. Սըրլը նշում է, որ որևէ իլլուկուտիվ ակտ իրականացնելու համար հարկավոր է հետևել որոշակի կանոնների: Ըստ նրա՝ իլլուկուտիվ ակտը հաղորդակցման նվազագույն միավոր է, որը կարելի է բնութագրել որպես կանոնակարգվող, որոշակի կանոնների ենթարկվող գործողության ձև³ (Searle 1969):

Ուշագրավն այն է, որ եթե Ջ. Օսթինի անհաջողությունների ուսմունքը պարունակում է ասույթի հաջողությունն ապահովող արտալեզվական տարրեր, ապա Ջ. Սըրլի առաջադրած նախապայմաններն ունեն լեզվական (ստորոգման իմաստի նախապայման) և արտալեզվական (նախապատրաստական, անկեղծության, էական նախապայմաններ) բնույթ (Austin 1962; Searle 1969):

Խոսքային ակտերը քննության առնելիս հարկ է անդրադառնալ նաև Ջ. Օսթինի, Ջ. Սըրլի առաջադրած *նկարագրական և ոչ նկարագրական* դրույթների լուսաբանմանը (Austin 1962; Searle 1969): Քննելով պերֆորմատիվ ասույթները՝ Ջ. Օսթինը ընդգծում է դրանց գործողություն արտահայտելու առանձնահատկությունը: Պերֆորմատիվները իրենք իրենց բնութագրող ասույթներ են, որոնց իմաստը արտակա արտահայտված է պերֆորմատիվ բայի միջոցով: Ի հակադրություն պերֆորմատիվների՝ այն ներկայացնում է կոնստատիվները, որոնք բնորոշվում են նկարագրական

նությանը և կարող են ճշմարիտ կամ կեղծ լինել: Պերֆորմատիվ և ոչ պերֆորմատիվ խոսքային ակտերի տարանջատման խնդիրը բազմաթիվ տարակարծությունների առիթ է դարձել գործաբանության մեջ: Անդրադատնալով վերոնշյալ խնդրին՝ «պերֆորմատիվ վերլուծություն» կոչվող ուղղության կողմնակիցները ներակա պերֆորմատիվ ասույթները բնութագրում են որպես զեղչված արտակա պերֆորմատիվ ասույթների տեսակ, որոնց շարահյուսական կադապարում մշտապես առկա է պերֆորմատիվ նախածանցը՝ տեսանելի (արտակա) կամ ոչ տեսանելի (ներակա) (Ross 1970; Sadock 1974; Lakoff 1975)⁴: Վերլուծելով սույն տեսական դրույթի առանձնահատկությունները՝ կարելի է ասել, որ նման քննությամբ պերֆորմատիվ ասույթները դառնում են սերողական իմաստաբանության ուսումնասիրության առարկա, որի հետևանքով էլ նվազում է գործաբանության մեթոդաբանություն կիրառելու անհրաժեշտությունը:

Ի հակադրություն վերոնշյալ լեզվաբանների՝ Ջ. Լևինսոնը նշում է, որ պերֆորմատիվ ասույթների քննությունը պետք է կատարել միայն գործաբանության շրջանակներում: Ըստ նրա՝ պերֆորմատիվները որոշակի իմաստային առանձնահատկություններ ունեն, ուստի դրանց քննությունը լիովին պետք է իրականացնել լեզվագործաբանության տեսական դրույթների շրջանակներում (Levinson 1983):

Քննելով իլլոկուտիվ ակտերի և պերֆորմատիվ բայերի խնդիրը՝ Ջ. Լիչը նշում է, որ իլլոկուտիվ բայերի քննությունը պետք է կատարել քերականության տեսանկյունից, իսկ ասույթի իլլոկուտիվ իմաստը պետք է ուսումնասիրել գործաբանական լեզվաբանության տեսությունների համատեքստում (Leech 1983): Անդրադատնալով իլլոկուտիվ բայերի առանձնահատկություններին՝ Ջ. Լիչը առաջադրում է իլլոկուտիվ բայի սխալականության տեսությունը (illocutionary verb fallacy), որը հետագայում վերա-

ձևակերպվում է որպես պերֆորմատիվների սխալականության տեսություն: Ջ. Լիչը Ջ. Օսթինի պերֆորմատիվների տեսությունը բնութագրում է որպես բացարձակապես լեզվաբանական սխալ դրույթ, քանզի բոլոր ասույթներն էլ կարգային բնույթի են, իսկ պերֆորմատիվությունը, այսինքն՝ գործողություն կատարելու կարողությունները, առկա է զուտ մի քանի մետալեզվական ասույթներում, որոնք իրենց բնույթով ավելի շատ պայմանադրական են (Leech 1983): Պերֆորմատիվների սխալականության տեսության համաձայն՝ ցանկացած ոչ պերֆորմատիվ ասույթ ունի իրեն համապատասխան պերֆորմատիվ տարբերակը: Այսպես, օրինակ՝ “He did not do it” ոչ պերֆորմատիվ ասույթի պերֆորմատիվ տարբերակն է “I state that he did not do it”, որտեղ պերֆորմատիվ իմաստը արտահայտված է բացահայտ կերպով՝ state պերֆորմատիվ բայով (Leech 1983: 175):

Խոսքային ակտերի տեսության կարևորագույն խնդիրներից մեկն էլ, որը շատ տարակարծությունների տեղիք է տվել, խոսքային ակտերի դասակարգումն է: Ջ. Օսթինն առաջինն է անդրադարձել այս խնդրին՝ խոսքային ակտերը դասակարգելով ըստ պերֆորմատիվ բայերի⁵, ինչը, սակայն, բազմիցս քննադատվել է խոսքային ակտերի տեսության մեջ (Austin 1962; Leech 1983):

Խոսքային ակտերի մեկ այլ դասակարգում է կատարել Ջ. Սըրլը⁶, որը փորձում է հեռանալ Ջ. Օսթինի դասակարգումից, քանզի, ըստ նրա, պերֆորմատիվ բայերի և խոսքային ակտերի նույնացումը չի կարելի որպես արդյունավետ տեսական դրույթ դիտել: Այս կապակցությամբ Ջ. Սըրլը նշում է. «Իլլոկուտիվ բայերին բնորոշ առանձնահատկությունները չեն կարող հստակ որոշարկող գործիք լինել իլլոկուտիվ ակտերը դասակարգելիս» (Searle 1979: 5): Սակայն Ջ. Սըրլի առաջադրած խոսքային ակտերի դասակարգման քննությունը ցույց է տալիս, որ խոսքային ակտերը որոշարկելիս դարձյալ կարևորվում է իլլոկուտիվ բայերի

գործոնը: Այլ կերպ ասած՝ Սըրլը նույնպես հարում է «պերֆորմատիվ սխալականության» տեսությանը՝ պնդելով, որ միշտ էլ հնարավոր է լուսաբանել ասույթի իլլոկուտիվ իմաստը՝ դրան համապատասխան պերֆորմատիվ բայ վերագրելով (Searle 1969: 19-21):

Քննադատորեն մոտենալով Ջ. Սըրլի առաջադրած խոսքային ակտերի դասակարգմանը՝ Ջ. Լիչը հատուկ քննության է առնում հայտարարող խոսքային ակտերը, որոնք, ըստ նրա, չպետք է ներառվեն սույն դասակարգման մեջ, քանզի դրանք պայմանադրական խոսքային ակտեր են, որոնց իմաստը պայմանավորված է ծիսական արարողակարգով, և, ի տարբերություն մյուս խոսքային ակտերի, դրանք իլլոկուտիվ իմաստ չեն արտահայտում: Ի դեպ, հայտարարող խոսքային ակտերում ներառված բայերը, որպես կանոն, կիրառվում են հասարակական գործողություններ իրականացնելիս (Leech 1983)⁷:

Ջ. Սըրլի դասակարգման մեջ խոսքային ակտերի մեկ այլ խմբի՝ արտահայտչական ակտերի ընդգրկումը անարդյունավետ է համարվում, քանի որ դրանք համարվում են «երկխոսությունը կառավարող ակտեր»⁸ (dialogue control acts) (Bunt 1996):

Խոսքային ակտերի մեկ այլ դասակարգում է առաջարկում Ա. Շիֆրինը: Հիմք ընդունելով Ջ. Սըրլի առաջադրած դասակարգումը՝ նա ներկայացնում է խոսքային ակտերի դասակարգման իր տարբերակը՝ *նկարագրական և հրահանգչական: Նկարագրականները* աշխարհը նկարագրող խոսքային ակտեր են, որոնք արտահայտում են խոսողի աշխարհընկալումը, խոսակիցների վերաբերմունքը հաղորդվող տեղեկատվության վերաբերյալ: Դրանք, փաստորեն, համապատասխանում են Ջ. Սըրլի կողմից առաջադրվող հաստատական ակտերին (Schiffrin 2005): *Հրահանգչական* խոսքային ակտերն արտահայտում են խոսակիցների վերաբերմունքը կատարվող գործողության վերաբերյալ և նույնական են Ջ. Սըրլի հրահանգչական ու հանձնառական ակտերի

հետ (Schiffrin 2005):

Ինչպես տեսնում ենք, Ա. Շիֆրինը հրահանգչական և հանձնառական ակտերը բնութագրում է որպես նմանատիպ առանձնահատկություններ ունեցող խոսքային ակտեր, այն տարբերությամբ, որ հանձնառականների օգնությամբ նշվում է խոսողի կատարելիք գործողությունը, մինչդեռ հրահանգչականների դեպքում գործողություն կատարողը դիմացինն է (Schiffrin 2005):

Քննելով հարցական ասույթների առանձնահատկությունները՝ Ա. Շիֆրինը, ի տարբերություն Ջ. Սըրլի, դրանք տարանջատում է խոսքային ակտերից և որակում որպես տեղեկատվություն *հայցող* խոսքային ակտեր:

Ջ. Լիչը նույնպես տարանջատում է հարցական և հրահանգչական խոսքային գործողությունները: Այսպես, քննելով դիրեկտիվ խոսքային ակտեր իրագործող բայերը՝ նա նշում է, որ անգլերենում գոյություն ունեն անուղղակի հարցեր արտահայտող բայեր, որոնք նա որակում է որպես *ռոզատիվներ* (Leech 1983):

Խոսքային ակտերի դասակարգման խնդիրը քննելիս հարկ ենք համարում ներկայացնել նաև Ք. Բախի՝ խոսքային ակտերի դասակարգումը՝ *հավաստող, հրահանգչական, հանձնառական և հաստատող* խոսքային ակտեր (Bach 1979):

Մեկնաբանելով Ջ. Օսթինի առաջադրած պայմանադրական իլլոկուտիվ ակտերի խնդիրը՝ Ք. Բախը նշում է, որ դրանց հաջող իրագործումը պայմանավորված է ոչ թե հաղորդակցական նպատակի ճիշտ մեկնաբանությամբ, այլ պայմանադրական օրենքների իրագործմամբ: Այսինքն, ըստ Ք. Բախի, ասույթը կարող է վերածվել խոսքային ակտի միայն այն դեպքում, եթե վերջինս համապատասխանում է հասարակական առկա, ինստիտուցիոնալ պայմաններին: Հիմք ընդունելով սույն գործոնը՝ Ք. Բախը պայմանադրական իլլոկուտիվ ակտերը բաժանում է երկու խմբի՝ *էֆեկտիվների և վերդիկտիվների*: Էֆեկտիվները փոխում են առ-

կա սահմանակարգային գործընթացները, իսկ վերդիկտիվները պաշտոնական դատավճիռ են իրագործում (Bach 1979):

Խոսքային ակտերի տեսության խնդիրները քննելիս հարկ է անդրադառնալ նաև անուղղակի խոսքային ակտերին, որոնց դեռևս Ջ. Օսթինը բնութագրում է որպես ձախողումներ (Austin 1962): Ուղիղ և անուղղակի խոսքային ակտերի տարանջատումը խոսքային ակտերի տեսության կարևորագույն հարցերից է, քանզի դրա շուրջ քննարկվում են խոսքային քաղաքավարության՝ քաղաքավար խոսքին և խոսքային գործունեության հասարակական նորմերին առնչվող բազմաթիվ խնդիրներ:

Ուղիղ են որակվում այն խոսքային ակտերը, որոնց շարահյուսական կառուցվածքը համապատասխանում է նրանց հաղորդակցական գործառույթին, և հակառակը՝ անուղղակի խոսքային ակտերի շարահյուսական կառուցվածքը և հաղորդակցական գործառույթը տարբեր են: Օրինակ՝ “I am going to the cinema” ասույթն իր շարահյուսական կառուցվածքով պատմողական է, և այն դեպքում, երբ սույն խոսքային ակտն արտաբերելով՝ խոսողը հաստատում է որևէ վիաստի իսկությունը, ապա նա ուղիղ խոսքային գործողություն՝ հաստատական ակտ է կատարում: Մակայն եթե նա սույն ասույթով արձագանքում է խոսքնկերոջ՝ իր հետ սուրճ խմելու խնդրանքին, ապա նա մերժում է կատարում, ինչն անուղղակի խոսքային ակտ է: Ինչ խոսք, բազմաթիվ տարակարծությունների տեղիք է տալիս և խնդրահարույց է համարվում նաև անուղղակի խոսքային ակտի իլլոկուտիվ իմաստն ընկալելու և ճիշտ մեկնաբանելու հարցը, որի համար խոսակիցները պետք է տիրապետեն որոշակի ներլեզվական և արտալեզվական գիտելիքների (Schiffirin 2005: 67):

Անուղղակի խոսքային ակտերի իլլոկուտիվ իմաստը վերծանելու հարցում Ջ. Սըրլը և Ա. Շիֆրինը կարևորում են հարատեքստի դերը: Ջ. Սըրլը առաջ է քաշում այն վարկածը, ըստ որի՝

անուղղակի խոսքային ակտն արտաբերելիս խոսողը փորձում է ասել ավելին՝ հիմնվելով ունկնդրի հենքային գիտելիքի վրա, որը ներլեզվական և արտալեզվական գործոններ է ներառում (Searl 1969, 1999; Schiffrin 2005): Քննելով անուղղակի խոսքային ակտերի խնդիրը՝ Ջ. Սըրլը գտնում է, որ անուղղակի կամ ուղղակի խոսքային ակտերի լեզվական մեխանիզմը կարելի է վերլուծել՝ համեմատելով ասույթների իլլոկուտիվ և հաղորդակցական գործառույթները և այն նախադասության տեսակները, որոնցով անմիջականորեն արտահայտված են վերոնշյալ խոսքային ակտերը: Եթե հարցական ասույթն արտահայտում է խնդրանք, ապա այն կարելի է որակել անուղղակի խոսքային ակտ (Searl 1969, 1999): Օրինակ՝ “What are these shoes doing here?” հարցական ասույթը ոչ թե որպես հարց, այլ որպես կշտամբանք մեկնաբանելու համար անհրաժեշտ է հարատեքստի առկայություն: Այս կապակցությամբ Վան Էմերենը և Գրոտենդորստը նշում են, որ իլլոկուտիվ ակտի ընկալումը խոսակցական լեզվում մեծապես կախված է գործաբանական պայմանադրություններից: Ներակա կամ անուղղակի խոսքային ակտերը, որպես կանոն, հեշտությամբ են ընկալվում, և խոսողը կարող է ենթադրել, որ դրանք ճիշտ կվերծանվեն: Այլ կերպ ասած՝ առօրյա հաղորդակցման ժամանակ խոսքային ակտերը հիմնականում անուղղակի կերպով են արտահայտվում, և անհատը պետք է ջանք չինայի հմուտ հաղորդակցվող և լավ ունկնդիր լինելու համար, եթե ուզում է հասարակության մեջ հաջողակ լինել» (Van Eemeren, Grootendorst, 2004):

Անուղղակի խոսքային ակտերի խնդիրը հակասական մեկնաբանությունների տեղիք է տվել: Այսպես, դրանց իլլոկուտիվ իմաստը որոշարկելիս հատկապես կարևորվում է խոսողի հաղորդակցական նպատակի ճիշտ ընկալումը: Ջ. Հոթթգրեյվը այս կապակցությամբ նշում է, որ ասույթի *ծրագրված, նախատեսված իլլոկուտիվ նպատակը* էապես տարբերվում է դրա *բառացի իլլո-*

կուտիվ նպատակից (Holtgraves 2002):

Ջ. Լևինսոնը և Ջ. Գազդարը առաջադրում են բառացի իմաստի վարկածը, ըստ որի՝ նախադասության կառուցվածքի և իմաստի միջև պայմանադրական կապ գոյություն ունի (Gazdar 1981; Levinson 1983): Այս դրույթը հերքում է Ջ. Հերինջերի այն մոտեցումը, ըստ որի՝ մեկ ասույթին վերագրվում է մեկ հաղորդակցական գործառնություն իրականացնելու հնարավորություն (Heringer 1972:6): Ջ. Սըրլը, սակայն, մերժում է Ջ. Հերինջերի սույն տեսությունը և նշում. «Անհրաժեշտ է ընդունել, որ մեկ ասույթը կարող է իրագործել տարբեր իլլոկուտիվ ակտեր: Հետևաբար, անգամ իմաստով տարբեր, ոչ հոմանիշային խմբեր կազմող իլլոկուտիվ բայերը կարող են ճշգրիտ արտահայտել խոսողի հաղորդակցական նպատակը» (Searle 1969):

Անուղղակի խոսքային ակտերի իլլոկուտիվ իմաստի վերծանման խնդրին են անդրադառնում նաև Ք. Բախը և Ռ. Հարնիշը, որոնք նշում են, որ հասկացման պահին ունկնդրի մեջ տեղի է ունենում հետևություն կատարող մեխանիզմների ակտիվացում: Ըստ այդմ՝ համատեղ հենքային գիտելիքի առկայությունը նպաստում է դրանց գործաբանական իմաստի իրացմանը (Bach, Harnish 1979): Այսինքն, եթե նույն լեզվական համայնքին պատկանող խոսակիցները ընդհանուր հենքային գիտելիքի են տիրապետում, ապա նրանք կարողանում են տարբերակել ասույթի փոխաբերական իմաստը ոչ փոխաբերականից: Այս տեսության կողմնակիցները գտնում են, որ անուղղակի խոսքային ակտերը ճիշտ մեկնաբանելու համար խոսակիցները պետք է կիրառեն իրենց հենքային գիտելիքները և Փ. Գրայսի համագործակցության կարգախոսները (Grice 1975, 1979; Bach, Harnish 1979; Leech 1983):

Այսպիսով, խոսքային ակտի անուղղակի կամ, այսպես կոչված, փոխաբերական իմաստը ճիշտ մեկնաբանելու համար խոսակիցները նախ և առաջ պետք է ընկալեն դրա բառացի իմաստը:

Այս դրույթին հակառակ՝ Ռ. Գիբսը նշում է, որ եթե ունկնդիրը փորձի մեկնաբանել «Cigarettes are time bombs» ասույթն ըստ դրա բառացի իմաստի, ապա նա այն ճշմարտացի չի համարի, կամ էլ նրան կթվա, որ արտաբերելով այն՝ խոսողը ստում է կամ էլ փորձում է ունկնդրին այլ տեղեկատվություն հաղորդել (Gibbs 2002): Հիմնվելով իրականացված ուսումնասիրությունների վրա՝ կարելի է ասել, որ ունկնդրին ավելի հեշտ է վերձանել բառացի իմաստ արտահայտող ասույթները, քան անուղղակի, փոխաբերական ասույթները: Անուղղակի ասույթները վերձանելիս խիստ կարևորվում է ունկնդրի ճիշտ մտահանգում կատարելու կարողությունը: Այսպես, ուղիղ ասույթների իմաստն ընկալելու համար ունկնդրից սոսկ պահանջվում է լսել հաղորդվող տեղեկատվությունը, մինչդեռ անուղղակի, փոխաբերական իմաստ պարունակող ասույթների վերձանումը ունկնդրից լեզվագործաբանական գիտելիքի կիրառում է պահանջում (Schiffirin 2005): Այնուամենայնիվ, ինչպես ցույց են տալիս հոգելեզվաբանության ոլորտում կատարվող ուսումնասիրությունները, ունկնդիրներին հաջողվում է արագ վերձանել անուղղակի, փոխաբերական իմաստ պարունակող ասույթները⁹ (Gibbs 1994; Glucksberg 1998):

Փորձելով ամփոփել ուղիղ և անուղղակի խոսքային ակտերին վերաբերող առկա տեսությունները՝ հարկ է նշել, որ անուղղակի խոսքային ակտերի լայն կիրառումը խոսքում պայմանավորված է ներդաշնակ հաղորդակցական մթնոլորտ ստեղծելու գործոնով, քանզի անուղղակի խոսքային ակտերի առկայությունը խոսքում ապահովում է հանրույթային նորմերի ներդաշնակությունը և նպաստում Ջ. Լիչի կողմից առաջադրած «քաղաքավարության սկզբունքի» իրականացմանը: Այս սկզբունքը կոչված է ապահովելու համագործակցող, անկոնֆլիկտ շփում՝ անհրաժեշտ հանրահոգեբանական նախապայման, հաղորդակցվողների միջև հաջող փոխներգործություն իրագործելու համար¹⁰ (Leech

1983):

Պետք է ասել, որ գործաբանական լեզվաբանության մեջ առաջնությունը տրվել է խոսքային ակտի իլլոկուտիվ մակարդակի քննությանը: Մյուս երկու մակարդակներից լոկուտիվ մակարդակի քննությունը սովորաբար կատարվել է ավանդական քերականության շրջանակներում, իսկ պերլոկուտիվ մակարդակի վերաբերյալ դեռևս քիչ ուսումնասիրություններ են կատարվել:

Պերլոկուցիա. լեզվագործաբանական մոտեցումներ

Ձ. Օսթինի խոսքային ակտերի ուսումնասիրության վրա հիմնվելով՝ կարելի է ենթադրել, որ գործաբանական տեսանկյունից իլլոկուցիան և իլլոկուտիվ ակտերը ավելի առաջնային են համարվում, քան պերլոկուցիան և պերլոկուտիվ ակտերը: Ինչպես նշել ենք, լոկուտիվ և իլլոկուտիվ ակտերը, ի տարբերություն պերլոկուցիայի և պերլոկուտիվ ակտի, բազմիցս քննարկվել, վերաձևակերպվել են. վերջիններիս շատ քիչ են անդրադարձել գործաբանական տեսությունների շրջանակներում: Պերլոկուտիվ ակտն ուսումնասիրելիս շատ լեզվաբաններ այն զուգադրել են իլլոկուտիվ ակտի հետ (Cohen 1973; Sadock 1974; Van Dijk 1977, Bach, Harnish 1979; Leech 1983):

Իլլոկուտիվ և պերլոկուտիվ ակտերի տարանջատումը բարդ խնդիր է, և այն պարզաբանելու նպատակով նախ անդրադառնանք Ձ. Օսթինի տեսությանը, քանի որ խոսքային ակտերի տեսության հիմնադիրն առաջինն է «նկատել» այդ երկու ակտերի միջև եղած «հեղիհեղուկ անջրպետի» առկայությունը և փորձել ինչոր կերպ լուծում տալ դրան: Ընդամին, նա պերլոկուտիվ մակարդակը հետևյալ կերպ է սահմանում. «Արտաբերելով որևէ ասույթ՝ մենք որոշակի ազդեցություն ենք թողնում ունկնդրի մտքերի, գզացմունքների կամ գործողությունների վրա» (Austin 1980: 101):

Ջ. Օսթինը նկարագրում է նաև պերլոկուտիվ ակտին բնորոշ չափորոշիչները.

- խոսողը ունկնդրին ինչ-որ բան է ասում՝ կատարելով լոկուտիվ ակտ,
- խոսողի արտաբերած ասույթը ունկնդրի վրա կոնկրետ ազդեցություն է թողնում,
- ունկնդրի վրա արված ազդեցության պատճառը խոսողի արտաբերած ասույթն է (Gu 1993: 2):

Ինչպես տեսնում ենք, Ջ. Օսթինի պատկերացմամբ պերլոկուտիվ ակտի իրագործումը վերագրվում է խոսողին, որովհետև նրա խոսքային գործողությունն է ազդեցություն թողնում լսողի վրա: Լսողի՝ խոսընկերոջ դերն այստեղ երկրորդական է. նրա մասին ակնարկվում է այնքանով, որքանով նա պերլոկուցիայի «թիրախ» է: Ջ. Օսթինը չի անդրադառնում այն հարցին, թե ինչպես է խոսընկերը կրում պերլոկուտիվ ներազդման ազդեցությունը, կամ ինչպես է նրա խոսքում արտահայտվում դա: Ավանդաբար խոսքային ակտերի տեսության համատեքստում խոսողի դերը, վերջինիս ազդեցությունը լսողի վրա, մարտավարական նպատակը ավելի մեծ ուշադրության են արժանացել: Այնպիսի լեզվափիլիսոփաներ, ինչպիսիք են Ջ. Օսթինը, Փ. Գրայսը, Փ. Մթրոուսընը, այն կարծիքն են արտահայտում, որ ասույթ արտաբերելով, որևէ ակտ իրագործելով՝ խոսողը զուտ իր հաղորդակցական նպատակն է իրականացնում: Նրանց տեսություններում լսողը դիտվում է որպես մի սուբյեկտ, որը պետք է արձագանքի խոսողի կողմից արտաբերվող ասույթին: Այսինքն՝ խոսողը արտաբերում է որևէ ասույթ՝ նպատակ ունենալով որևէ կոնկրետ ազդեցություն թողնել ունկնդրի վրա: Վերոնշյալ ազդեցությունն իրագործելու նպատակով խոսողը կիրառում է ասույթի պայմանադրական հատկանիշները, ինչի շնորհիվ ունկնդրին հաջողվում է ընկալել խոսողի արտաբերած ասույթի իրական հաղորդակցական

նպատակը:

Ջ. Օսթինի համոզմամբ կարելի է պերլոկուտիվ ակտ իրագործել առանց որևէ ասույթ արտաբերելու, ոչ լեզվական գործողությունների միջոցով, այսինքն՝ առանց լոկուտիվ ակտ իրագործելու, և որպես օրինակ նա վերցնում է սպառնալիքի գործողությունը. «կարելի է սպառնալ հրացանի միջոցով» առանց որևէ բառասելու: Այս կապակցությամբ Ջ. Մեյդոքը մատնանշում է. «Արտաբերած ասույթին բնորոշ իմաստը որոշիչ դեր չի խաղում որևէ պերլոկուտիվ ազդեցություն իրագործելու գործընթացում: Օրինակ, եթե ինչ-որ մեկը քնած մարդու ականջին գոռում է «մի՛ արթնացիր», նա իրագործում է արթնացնելու պերլոկուտիվ ազդեցություն՝ այսպիսով հակասելով իր իսկ արտաբերած ասույթին» (Saddock 1974):

Գործաբանության մեջ ընդունված է նաև այն կարծիքը, որ պերլոկուտիվ ազդեցությունն իրագործվում է լոկուտիվ ակտի միջոցով: Թ. Քոհենը գտնում է, որ իրագործված մեկ լոկուտիվ ակտը կարող է հանգեցնել բազմաթիվ իլլոկուտիվ ակտերի, իսկ իլլոկուտիվ ակտերն իրենց հերթին շարժառիթ են դառնում տարբեր պերլոկուտիվ ակտերի իրագործման (Cohen 1973): Ըստ այդմ՝ քննարկման խնդիր է դառնում այն հարցը, թե քանի պերլոկուտիվ ազդեցություն կարելի է առաջացնել՝ միևնույն իլլոկուտիվ ակտը կատարելով: Քանի որ գործաբանների պնդմամբ պերլոկուտիվ ակտի կատարումը պայմանադրական բնույթ չունի, այսինքն՝ խոսքային համակարգում չկան ներազդման այս կամ այն ազդեցությունն առաջացնող որոշակի լեզվական կառույցներ, ապա մեկ իլլոկուտիվ ակտին՝ մեկ պերլոկուտիվ ակտ դրույթը տապալվում է: Ջ. Մեյդոքը նշում է. «Արտաբերված ասույթի հետևանքով ի հայտ եկած պերլոկուտիվ ազդեցության քանակը անսահմանափակ կարող է լինել» (Saddock 1974: 9):

Ջ. Օսթինը առաջադրում է պերլոկուտիվ ակտի բազմաքա-

նակության տեսությունը.

- խոսողի արտաբերած մեկ ասույթը կարող է մի քանի տարբեր, սակայն իրար կապակցված ազդեցություններ առաջացնել ունկնդրի վրա,
- խոսողի արտաբերած ասույթը կարող է ազդեցություն գործել մի քանի ունկնդիրների վրա: Մույն ասույթի ազդեցությունը կարող է տարբեր լինել,
- վերոնշյալ երկու դեպքերը կարող են համընկնել (Gu 1993: 3):

Ինչպես տեսնում ենք, պերլոկուտիվ ազդեցությունը սահմաններ չունի, անսահման է: Ջ. Օսթինի պնդմամբ «որոշակի հանգամանքներում հնարավոր է իրագործել գրեթե ցանկացած պերլոկուտիվ ակտ՝ արտաբերելով նպատակադրված ցանկացած ասույթ» (Austin 1980:110):

Անդրադառնալով սույն խնդրին՝ Ք. Բախը և Ռ. Հարնիշը վերաձևակերպում են Ջ. Օսթինի առաջադրած տեսությունը հետևյալ կերպ. «Տեսականորեն խոսքային ակտերի ազդեցությունը չի սահմանափակվում, գրեթե ամեն ինչ հնարավոր է (Bach, Harnish 1979: 17):

Քննարկումներից պարզ է դառնում, որ հնարավոր չէ կանխատեսել արտաբերված ասույթի առաջացրած ազդեցությունը, և որ մեկ արտաբերված ասույթի հետևանքով առաջացած պերլոկուտիվ ազդեցության թիվը անսահմանափակ է: Ջ. Օսթինը խոսքային ակտերը համատեքստից դուրս էր ուսումնասիրում, և այդ պատճառով նա նշում էր լսողի գիտակցության վրա խոսողի որոշակի ներագրման մասին՝ չանդրադառնալով պերլոկուտիվ ակտի հաջող իրագործման կամ մեկնաբանման խնդրին: Այս հարցերի քննարկումը ծավալվեց այն բանից հետո, երբ խոսընկերոջը սկսեցին դիտարկել ոչ թե որպես խոսընթացի պասիվ անդամ՝ լսող, այլ որպես պերլոկուտիվ ներագրմանը արձագանքող խո-

սընկեր: Պարզ է դառնում, որ երբ խոսողի խոսքում իրագործված պերլոկուտիվ ազդեցությունը դառնում է ակնհայտ խոսընկերոջ խոսքում, նա արձագանքում է դրան: Ահա թե ինչու պերլոկուցիայի ըմբռնումը երկաստիվ է, և այն ընկալվում է երկու կողմից՝ ա) խոսողի ենթադրելի ներագրումը և բ) լսողի վրա իրական ազդեցությունը: Քննելով պերլոկուցիայի արտահայտման առանձնահատկությունները՝ Ս. Դեյվիսը գտնում է, որ խոսողի արտաբերած ասույթը «պերլոկուտիվ շարժառիթ» է, իսկ ունկնդրի մեջ տեղի ունեցող փոփոխությունը, ասույթի ներգործությունը լսողի վրա պերլոկուտիվ ազդեցություն է: Այսպիսով՝ խոսողի արտաբերած ասույթը լսողի մեջ կատարվող փոփոխությունների շարժառիթ է¹¹:

Քննարկվում է նաև այն հանգամանքը, որ խոսողի արտաբերած ասույթն ունկնդրի վրա ոչ մի ազդեցություն չի թողնում, և այդ դեպքում դա դիտվում է որպես «պերլոկուտիվ փորձ»: Հետաքրքիրն այն է, որ եթե լսողի զգացմունքները, մտքերը, գործողությունները փոփոխվում են նախքան խոսողի արտաբերած ասույթը, ապա այդ փոփոխությունները չեն վերագրվում վերջինիս, այսինքն՝ խոսողի կողմից որևէ պերլոկուտիվ ակտ չի իրագործվում:

Ինչպես տեսնում ենք, պերլոկուտիվ ակտը կազմված է երկու ենթախմաստներից՝ պերլոկուտիվ շարժառիթ և պերլոկուտիվ ազդեցություն: Այս երկուսի համատեղությունն է հանգեցնում է պերլոկուտիվ ակտի իրագործմանը: Պետք է ասել, որ պերլոկուցիայի իմաստային դաշտի անհամասեռությանն անդրադարձել է նաև Ջ. Օսթինը՝ տարանջատելով «պերլոկուտիվ օբյեկտը» և «պերլոկուտիվ ազդեցությունը»: Որպես օրինակ նա բերում է զգուշացման ակտը, որն «իրագործում է ահազանգելու պերլոկուտիվ խնդիր, օբյեկտ, ինչպես նաև առաջացնում է անհանգստացնելու պերլոկուտիվ ազդեցություն» (Austin 1980: 118):

Արձագանքելով Ջ. Օսթինի սույն նորամուծությանը՝ Թ. Քո-
հենը առաջադրում է մեկ այլ՝ «ուղղակիորեն համակցվող պերլո-
կուցիայի» գաղափարը: Ըստ նրա՝ գոյություն ունեն որոշակի
պերլոկուցիաներ, որոնք անմիջականորեն հարաբերվում են որո-
շակի իլլուկուտիվ ակտերի հետ: Օրինակ՝ վիճաբանության իլլո-
կուտիվ ակտը համակցվում է համոզելու պերլոկուտիվ ակտի
հետ, զգուշացման իլլուկուտիվ ակտը՝ տագնապելու պերլոկուտիվ
ակտի հետ (Cohen 1973):

Այժմ անդրադառնանք պերլոկուտիվ իմաստային դաշտին
առնչվող մեկ այլ վիճահարույց խնդրի, որը սկզբունքային նշանա-
կություն ունի նաև սույն հետազոտության համար: Բանն այն է,
որ սկզբնական գաղափարով, այսինքն՝ Ջ. Օսթինի և Ջ. Սըրլի
ձևակերպմամբ (Austin 1962; Searle 1969) պերլոկուցիան խոսողի
արտահայտած իմաստային երանգ է, որը նախապես կանխա-
մտածված չէ նրա կողմից և, ի տարբերություն իլլոկուցիայի, չունի
լեզվական ձևակերպման որոշակի պայմանադրական ձև: Այ-
սինքն՝ խոսողի գործարանական կարողությունների համակար-
գում բացակայում է լսողին զարմացնելու, վախեցնելու, համոզե-
լու համար կիրառվող կոնկրետ խոսքային միջոցների մասին գի-
տելիք: Այստեղից հետևում է, որ Ջ. Օսթինն իր ուսումնասիրու-
թյուններում հատկապես շեշտում է պերլոկուտիվ ակտերի ոչ
պայմանադրական լինելու փաստը: Ըստ նրա՝ իլլոկուտիվ ակտի
հիմքում ընկած է պայմանադրություն, մինչդեռ պերլոկուտիվ ակ-
տի հիմքում այն բացակայում է (Austin 1962): Իր տեսություննե-
րում Ջ. Օսթինը կիրառում է պայմանադրության գաղափարը՝ որ-
պես իլլոկուտիվ, պերլոկուտիվ ակտերի տարբերակման միջոց՝
պնդելով, որ իլլոկուտիվ ակտերը իրենց բնույթով պայմանադրա-
կան են, իսկ պերլոկուտիվ ակտերը՝ ոչ (Austin 1962):

Հարցն այն է, թե արդյոք պայմանադրությունը պարտադիր
գործոն է՝ որևէ իլլոկուտիվ ակտ իրագործելու համար: Ինչ խոսք,

որոշակի դեպքերում Ջ. Օսթինի առաջարկած տեսությունը կիրառելի է: Օրինակ՝ “I will appoint you Minister” ասույթն արտաբերողին պայմանադրությունը հնարավորություն է ընձեռում արտաբերելու վերոնշյալ ասույթը, հակառակ դեպքում այն կհամարվի կեղծ: Իսկ ի՞նչ է պայմանադրությունը ունկնդրի համար: Այս դեպքում, երբ լսողի՝ որպես հաղորդակցման ակտիվ մասնակցի դերը նույնպես կարևորվում է, պայմանադրության խնդիրը պետք է քննվի նաև լսողի տեսանկյունից: Ջ. Օսթինի կատարած հետազոտությունների վրա հիմնվելով՝ կարելի է ասել, որ իլլուկուցիայի իրագործման և թողած ազդեցության միջև սահման գոյություն ունի: Որևէ ասույթ արտաբերելով՝ խոսողը նպատակ ունի ինչ-որ կերպ ներգործել լսողի վրա, սակայն հնարավոր է, որ վերոնշյալ ազդեցությունը չիրականանա: Մեկ այլ դեպքում, երբ խոսողը նպատակադրված չէ որևէ կերպ ներգործելու ունկնդրի վրա, ունկնդրի մեջ կոնկրետ ներգործություն է նկատվում¹² (Austin 1962: 10): Քննելով Ջ. Օսթինի այն տեսակետը, ըստ որի՝ իլլուկուտիվ ակտերը պայմանադրական են, իսկ պերլուկուտիվ ակտերը՝ ոչ, Ջ. Սըրլը պայմանադրության գաղափարը փոխարինում է օրինակարգության համակարգով: Ըստ Ջ. Սըրլի՝ խոսքային ակտերի տեսության նպատակը օրենքների համակարգ ստեղծելն է, որոնք հնարավորինս շատ իլլուկուտիվ ակտեր իրագործելու գործիք կծառայեն: Այս տեսակետի վրա հիմնվելով՝ կարելի է ասել, որ պայմանադրությունը խոսողի հաղորդակցական նպատակի և արտաբերվող ասույթի միջև կապող օղակ է¹³ (Searle 1979): Ըստ այդմ՝ առաջ է գալիս այն հարցը, թե արդյոք խոսողը դիտավորություն ունի որոշակի ազդեցություն գործելու լսողի վրա, թե դա իրացվում է առանց որևէ դիտավորության¹⁴:

Փ. Գրայսը, Փ. Մթրոուսընը խոսքային ակտի էությունը բնութագրելիս կարևորում են վերջինիս հաղորդակցական նպատակը և ներկայացնում հաղորդակցման հստակ կաղապար, ըստ որի՝

խոսողը հաղորդակցման ակտիվ դերակատար է, իսկ ունկնդիրը՝ պասիվ¹⁵: Այս լեզվագործաբանների առաջադրած տեսությունների ուսումնասիրություններից կարելի է եզրակացնել, որ պերլուկուտիվ ակտ իրագործելիս խոսողի դերն ավելի է կարևորվում¹⁶: Հարկ է նշել, որ խոսողի դերը ավելի կարևորելու ակնհայտ պատճառ չկա, քանզի թե՛ խոսողը և թե՛ ունկնդիրը հաղորդակցման ակտիվ մասնակիցներ են: Ավելի կարևորելով խոսողի արտաբերած ասույթի իմաստը՝ ունկնդրին հատկացվում է պասիվ դեր, որից միայն ակնկալվում է ընկալել խոսողի արտաբերած ասույթի իմաստը: Կարելի է եզրակացնել, որ խոսքային գործունեությունը գուտ մենախոսության մի տեսակ է, մինչդեռ այն իր բնույթով երկխոսություն է ենթադրում, ինչը խոսքային ակտերի տեսության մեջ հաճախ անտեսվում է: Ընդամին, արտաբերվող ասույթի իմաստը որոշարկելու և սահմանափակելու իրավունքը միայն խոսողին չի պատկանում: Ունկնդիրը նույնպես կարող է տարբեր իմաստներ վերագրել խոսողի արտաբերած ասույթին: Այսինքն՝ նույն ասույթը կարող է մի քանի տարբեր մեկնաբանություններ ստանալ, որոնք պայմանավորված են ունկնդրի հենքային գիտելիքով, նախնական տրամադրվածությամբ և այլն:

Պայմանադրության հաղորդակցական նպատակի հակադրությունը չի կարելի դիտել որպես ասույթի իլլոկուտիվ և պերլուկուտիվ իմաստները որոշարկելու արդյունավետ միջոց, սակայն դրա գաղափարը կարելի դիտել որպես իմաստաստեղծման մենաանհիզմները պարզաբանելու միջոց: Երբ խոսողը պարզ գիտակցում է, թե ինչ իլլոկուտիվ ակտ է ուզում իրագործել, նա պայմանադրությունը կիրառում է կոնկրետ իլլոկուտիվ ակտի իրագործման նպատակով: Ունկնդիրը նույնպես հիմնվում է իրեն նախապես հայտնի կոնկրետ համակարգի վրա: Այսպիսով, պայմանադրությունը կարելի է դիտել որպես խոսողի հաղորդակցական նպատակը բացահայտելու միջոց: Անդրադառնալով պերլուկու-

տիվ ակտի ազդեցության տարրորոշման խնդրին՝ Ջ. Լիչը նշում է, որ պերլոկուտիվ ակտն ուղղված է խոսքի միջոցով որոշակի խնդիրներ (խոսքային կամ ոչ խոսքային) լուծելուն: Քննելով պերլոկուտիվ ազդեցության դրսևորման խնդիրը՝ նա կարևորում է պերլոկուտիվ բայերի դերը: Քննության առնելով “inform” բայը՝ Ջ. Լիչը գտնում է, որ սույն բայն իրագործում է ունկնդրին մինչ այդ անհայտ տեղեկատվություն, գիտելիք փոխանցելու խոսքային ակտ, իսկ “convince” բայն իրագործում է ունկնդրի մեջ նոր կարծիք վերաբերմունք ձևավորող խոսքային ակտեր: Սակայն ըստ Ջ. Լիչի՝ գոյություն ունեն այնպիսի պերլոկուտիվ բայեր, որոնք ունկնդրից պահանջում են ավելի ակտիվ արձագանք: Այսպես, օրինակ, “ask” բայն այնպիսի իլլոկուտիվ ակտ է արտահայտում, որի հաջողության նախապայմանը կախված է ունկնդրի մեջ ակնկալվող գործողությունն իրագործելու պատրաստակամությունից: Ի հակադրություն վերոնշյալ բայերի՝ Ջ. Լիչը ներկայացնում է մի շարք այլ պերլոկուտիվ բայեր, որոնք իրենց բովանդակությամբ արդեն իսկ հաջող իրականացված խոսքային ակտ են պարտադրում: Օրինակ՝ “Joe incited Bill to rob the bank.” ասույթից կարելի էզրակացնել, որ Բիլն ընդունել է Ջոյի՝ բանկ կողոպտելու առաջարկը: Մինչդեռ “Joe asked Bill to rob the bank” ասույթից կարելի է ենթադրել, որ Ջոյի խնդրանք արտահայտող խոսքային ակտը կարելի է հաջողված համարել միայն այն դեպքում, եթե Բիլն ի վերջո որոշի բանկը կողոպտել (Leech 1983:202): Այս և նմանատիպ այլ պերլոկուտիվ բայերը հիմնականում բնութագրվում են որպես պատճառական, որոնց իմաստային կադապարը պարտադրում է հաջող իրագործված իլլոկուտիվ նպատակի գործոնը:

Պերլոկուտիվ ազդեցություն իրագործող պատճառական այլ բայերի քննությունը մեզ թույլ է տալիս եզրակացնել, որ պետք է տարբերակում մտցնել *պլանավորված և ոչ պլանավորված պերլոկուտիվ ազդեցության* միջև: Այսպես, օրինակ, երբ խոսողը

ձանձրացնում կամ շփոթեցնում է ունկնդրին, և այդ ազդեցությունը կանխամտածված չէ, հետևաբար այն չի կարելի դիտել որպես միջոց և արդյունք: Մյուս կողմից՝ նախատինք արտահայտող խոսքային ակտի գերնպատակը ունկնդրի վարքագծի բարելավումն է, որի պլանավորված ազդեցությունը նրա մեջ մեղքի զգացում առաջացնելն է:

Պերլոկուտիվ բայերի դասակարգումը բավականին խնդրահարույց է: Այս կապակցությամբ արժի նշել, որ գոյություն ունեն մի շարք բայեր, որոնք, ըստ իրենց հաղորդակցական գործառույթի, կարող են պատկանել և՛ իլլոկուտիվ, և՛ պերլոկուտիվ բայերի թվին: Դրանք տարանջատելու բարդությունը ակնհայտ է դառնում, երբ ուսումնասիրում ենք “inform”, “tell” և “ask”, “report” բայախմբերի միջև առկա հազիվ նշմարելի տարբերությունները: “Inform” և “tell” բայերի հաղորդակցական գործառույթը ունկնդրին իրազեկելու պերլոկուտիվ նպատակի իրագործումն է, իսկ “report” և “ask” բայերը բարդ իլլոկուտիվ գործողության իրագործում են ենթադրում (Leech 1983): Իր ուսումնասիրության առարկան դարձնելով իլլոկուտիվ և պերլոկուտիվ բայերի տարանջատման կարևորությունը՝ Ջ. Լիչը ներկայացնում է “try” բայի վերլուծությունը տարբեր հարատեքստային միջավայրերում: Որպես օրինակ նա առաջարկում է հետևյալ երկու ասույթները.

- (1) She tried to persuade me to accompany her.
- (2) She tried to ask me to accompany her.

“Try” իլլոկուտիվ բայի քննությամբ կարելի է հանգել այն եզրակացության, որ առաջին օրինակում իլլոկուցիան ձախողվել է, և մտադրված պերլոկուտիվ ազդեցությունը չի իրագործվել: Այսինքն՝ խոսողը փորձ է կատարել, որը, սակայն, չի հանգեցրել ցանկալի արդյունքի, մինչդեռ քննելով երկրորդ ասույթի իլլոկուտիվ բայը՝ կարելի է եզրակացնել, որ իլլոկուտիվ ակտը ձախող-

վել է այն պատճառով, որ ունկնդիրը տվյալ պահին չի լսում խոսողին, չի հասկացել նրա լեզուն և այլն (Leech 1983: 204-205):

Ինչպես տեսնում ենք, ավելի բարդ է տարբերել, թե որ դեպքում է իլլոկուցիա իրագործվել, և որ դեպքում չի հաջողվել իրականացնել մտադրված պերլոկուցիա, քան տարանջատել իլլոկուցիան և պերլոկուցիան: Սույն խնդիրը լուսաբանելու համար Ջ. Լիչը ներկայացնում է հետևյալ օրինակները.

(3) Sir Boris tried to report to the king that the battle was lost.

(4) Sir Boris tried to tell the king that the battle was lost (Leech 1983: 205):

Վերլուծելով դրանք՝ Ջ. Լիչը նշում է, որ (3) և (4) օրինակներում առկա է նույն տարբերությունը, ինչ (1) և (2)-ում, սակայն ի տարբերություն (1) և (2)-ի, (3) և (4) օրինակներում առկա իլլոկուտիվ և պերլոկուտիվ բայերի՝ տարբերակումն առաջին հայացքից այնքան էլ ակնհայտ չի թվում: Քննելով (3) օրինակը՝ կարելի եզրակացնել, որ սրբ. Բորիսը չի կարողացել գտնել թագավորին, և այդ պատճառով իլլոկուցիան ձախողվել է¹⁷: Մինչդեռ (4) օրինակից կարելի է ենթադրել, որ թեև սրբ. Բորիսը խոսել է թագավորի հետ, նրան չի հաջողվել ստիպել թագավորին ընդունելու ճշմարտությունը, ինչից էլ հետևում է, որ պերլոկուտիվ ազդեցությունը չի իրագործվել այն ձախողվել է (Leech 1983: 205):

Քննելով պերլոկուտիվ ակտի իրագործման առանձնահատկությունները՝ հարկ է նշել, որ պերլոկուտիվ ազդեցություն իրագործելու գործընթացը տեղի է ունենում լեզվական հաղորդակցման շնորհիվ: Սակայն կան նաև այլ տեսակետներ, համաձայն որոնց՝ գոյություն ունեն այլ միջոցներ, որոնք նույնպես գործածվում են պերլոկուտիվ ազդեցություն իրագործելու նպատակով: Ինչպես նշում են Ջ. Մեյդոքը, Ք. Բախը և Ռ. Հարնիշը, առկա են որոշակի մեխանիկական կամ ֆիզիկական միջոցներ, որոնք նույնպես կարող են պերլոկուտիվ ազդեցություն իրագործել: Որ-

պես այս կարծիքն ապացուցող օրինակ՝ բերվում է “Don’t wake up” ասույթը, որտեղ, արտաբերված ասույթի բովանդակությանը հակառակ, խոսողն արթնացնելու պերկուտիվ ակտ է իրագործում: Ներկայացնելով սույն օրինակը՝ հեղինակները ցանկացել են նշել, որ կարելի է պերկուտիվ ակտ իրագործել՝ ընդամենը ինչ-որ հնչյուններ արտաբերելով: Այսինքն՝ օգտվելով հնչյուն արտաբերելու իր ֆիզիկական կարողությունից՝ խոսողը իրագործում է պերկուտիվ ակտ. լսելով աղմուկը՝ «խոսակիցը» արթնանում է:

Խոսքային միջոցների շնորհիվ իրագործվող պերկուտիվ ազդեցությունը կարող է դիտվել միայն լեզվական հաղորդակցման ժամանակ, իսկ դա իրագործելու համար անհրաժեշտ է, որ խոսողն արտաբերի հնչյուններ, որոնք, ըստ քերականական իմաստային կանոնների, դառնում են ասույթ: Այսպես, օրինակ, “There’s a spider on your lap” ասույթն ունկնդրի մեջ վախ է առաջացնում, և խոսողին է վերագրվում վախեցնելու պերկուտիվ ակտի իրագործումը, քանզի նրա արտաբերած ասույթն է, որ պատճառ է դառնում ունկնդրի մեջ տեղի ունեցող փոփոխությունների (Davis 1980):

Յ. Գուն նշում է, որ ազդեցիկ պերկուտիվ ակտ իրագործելու համար հարկ է կարևորել բոլոր հանգամանքները, քանզի դրանք նույնպես կարող են դիտվել որպես հաղորդակցման դրդապատճառ: Ըստ նրա՝ ազդեցությունը կարելի է դիտել որպես հաղորդակցման հանգամանքներից բխող մի խթան, որն ազդում է ունկնդրի մտքի վրա՝ դրդելով նրան որոշակի պահվածք որդեգրել (Gu 1993): Այստեղ հարկ է նշել, որ կարևորվում է ոչ միայն արտաբերված ասույթի բովանդակությունը՝ իլլուկուտիվ իմաստը, այլև այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ միջանձնյա հարաբերությունները, արտաբերվող ասույթի դրդապատճառը, խոսողը, ունկնդիրը: Ենթադրենք՝ խոսողը և ունկնդիրը միասին ճամփորդում են գնացքով: Խոսողը ուզում է համոզել ունկնդրին, որ շատ

շուտով երկրաշարժ է լինելու: Ունկնդիրը դժվար թե լուրջ ընդունի այս ասույթը: Սակայն եթե այդ միտքն արտահայտողը հայտնի սեյսմոլոգ է, ապա նա ունկնդրի վրա թողնում է համոզելու պերլուկուտիվ ազդեցություն:

Պերլուկուտիվ ազդեցության առանձնահատկությունները որոշարկելիս Ջ. Սըրլը նորովի է մեկնաբանում ասույթի սույն բաղադրիչը: Այսպես, ունկնդրի կողմից խոսողի արտահայտած հաղորդակցական նպատակի ընկալման շնորհիվ իրագործվում է *պերլուկուտիվ* ազդեցությունը, մինչդեռ ունկնդրի ասույթում առկա իլլուկուտիվ ցուցիչների հասկացման շնորհիվ իրականանում է *իլլուկուտիվ* ազդեցությունը:

Եզրափակելով հանգում ենք այն համոզման, որ ասույթի պերլուկուտիվ իմաստը որոշարկելու համար անհրաժեշտ է քննել այնպիսի գործոններ, ինչպիսիք են՝ խոսողի հաղորդակցական նպատակը, խոսող/ունկնդիր միջանձնյա հարաբերությունները, առկա հարատեքստային ցուցիչները: Պերլուկուտիվ ազդեցության հաջող իրականացումը պայմանավորված է ոչ միայն խոսողի կողմից հաղորդակցական նպատակի տեղին իրագործմամբ, այլև ունկնդրի կողմից խոսողի վերոնշյալ նպատակը ճիշտ ընկալելու կարողությամբ: Սույն գործընթացին նպաստող գործոն կարելի է դիտել հարատեքստն ու համատեքստը, որոնց քննությունը դիտվում է էական իլլուկուտիվ և պերլուկուտիվ ակտերի տարբերական տեսանկյունից:

Պերլուկուտիվ ակտի հաղորդակցական գործառույթը դիսկուրսում

Ինչպես նշել ենք, պերլուկուցիայի՝ խոսքային ակտի իմաստային դաշտի բաղադրիչներից մեկի հաղորդակցական նպատակը խոսքի հասցեատիրոջ վրա որոշակի ազդեցություն գործելն է:

Խոսքային ակտերի տեսության դրույթների համաձայն՝ ի տարբերություն մյուս երկու իմաստային բաղադրիչների՝ լոկուտիվ և իլլոկուտիվ ակտերի՝ պերլոկուտիվ ակտի հաղորդակցական գործառույթը պայմանադրական հենքով չի իրագործվում (Austin 1962; Searle 1969): Եթե իլլոկուտիվ ակտի հաղորդակցական գործառույթի՝ դրա իմաստի տարրորջման, մեկնաբանման խնդիրներին առնչվող բազմաթիվ հետազոտություններ են կատարվել (Searle 1969, 1999; Leech 1983; Yule 2002; Cutting 2004 և այլք), ապա պերլոկուտիվ ակտի հաղորդակցական գործառույթը դեռևս չի արժանացել լիարժեք ուշադրության: Դիսկուրսի քննությանն առնչվող լեզվագործաբանական հետազոտություններում խոսվում է այն մասին, որ խոսքային ակտի իլլոկուտիվ և պերլոկուտիվ իմաստները որոշարկվում են հարատեքստի միջոցով: Կարծում ենք՝ խոսողի կատարած ներազդման բնութագիրը ակնհայտ է դառնում խոսքնկերոջ արձագանքում, քանի որ վերջինս իր պատասխան խոսքում անդրադառնում է խոսողի արտահայտած ստորոգման իմաստին, ինչպես նաև իլլոկուտիվ և պերլոկուտիվ իմաստներին, այսինքն՝ խոսողի մտադրությանը և ներազդմանը: Ի դեպ, պերլոկուտիվ իմաստի գործաբանական քննությունը առաջին հերթին ենթադրում է հարատեքստի և դրա տարրերի մեկնաբանություն:

Պերլոկուտիվ ակտի հաղորդակցական գործառույթը բնութագրելու համար նախ և առաջ պետք է նշել, որ պերլոկուցիայի՝ խոսքի հասցեատիրոջ վրա առաջ բերած ազդեցությունը հաճախ կանխատեսելի և կանխամտածված չէ խոսողի կողմից: Այսինքն՝ սովորաբար խոսողը նախապես չի կարող կանխատեսել, որևէ կոնկրետ ազդեցություն գործել խոսքնկերոջ վրա՝ վախեցնել, զարմացնել, շփոթեցնել և այլն: Այսպես, ինչպես նշում է Ա. Շիֆրինը, “Don’t shout” ասույթով խոսողն իրագործում է հրաման արտահայտող իլլոկուտիվ ակտ, որի ցանկալի պերլոկուտիվ ազդե-

ցությունը կլինի խոսքնկերոջն իրեն հնազանդեցնելը (Schiffrin 2005): Այդ դեպքում ակնկալվում է, որ խոսքնկերը կհնազանդվի, այսինքն՝ կդադարի գոռալ: Սակայն վերոնշյալ ասույթը կարող է նաև այլ ազդեցություն թողնել ունկնդրի վրա, քանզի հնարավոր է, որ վերջինս բորբոքվի, սկսի է՛լ ավելի բարձր գոռալ և կամ էլ խեղճանա, ներողություն խնդրի և այլն: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ խոսողը չի կարող հստակ կանխորոշել իր արտաբերած ասույթի առաջացրած պերլոկուտիվ ազդեցության բնույթը:

Այսպես, քննելով ասույթի իլլոկուտիվ և պերլոկուտիվ իմաստների մեկնաբանության խնդիրը՝ Թ. վան Դեյքը հանգում է այն եզրակացության, որ դրա համար խոսակիցները պետք է կիրառեն «գործաբանական ընկալման կարողությունը» (van Dijk 1977): Թ. վան Դեյքը ասույթի իլլոկուտիվ և պերլոկուտիվ իմաստները մեկնաբանելու գործընթացը մի քանի փուլերի է բաժանում՝ ճիշտ ընկալել ասույթի բովանդակությունը, վերծանել դրան բնորոշ լեզվագործաբանական նրբերանգները, այնուհետև ասույթին վերաբերող սույն տեղեկությունը համապատասխանեցնել հաղորդակցման հարատեքստին: Ընդ որում, նրա համոզմամբ, հարատեքստը հասարակական գործոններով պայմանավորված ստորակարգային համակարգ է, որն ընկալվում է հաղորդակցման մասնակիցների կողմից (van Dijk 1977): Այստեղ, իհարկե, կարևորվում է հաղորդակցման մասնակիցներից մեկի՝ ունկնդրի դերը: Ենթադրվում է, որ ասույթի իլլոկուտիվ և պերլոկուտիվ իմաստների ճիշտ ընկալումը պայմանավորված է հարատեքստին բնորոշ այնպիսի գործոններով, ինչպիսիք են՝ հաղորդակցման մասնակիցների շահերը, նրանց հաղորդակցական նպատակները, հաղորդակցման ոճը և այլն (Պարոնյան, 2011):

Պետք է ասել, որ գործաբանության մեջ հարատեքստի ուսումնասիրությունն ընթանում է մի քանի ուղղություններով: Այս-

պէս, մի դեպքում քննության է առնվում խոսքային ակտերի և հարատեքստի փոխհարաբերությունը (Duranti, Goodwin, 1992; Garfinkel 1967), իսկ մեկ այլ դեպքում առաջնային է համարվում համատեքստի և հարատեքստի հարաբերակցությունը, այսինքն՝ անդրադարձ է արվում լեզվական ցուցայնության, զեղչման, փոխարինման, վերաբերության, բառային միջոցների կրկնության և արտալեզվական մի շարք գործոնների (խոսող, խոսընկեր, գիտելիքների պաշար, խոսքային իրադրություն) առանձնահատկությունների քննությանը կապակցված խոսքում (Halliday, Hasan 1976; Levinson 1983; McCarthy 1991; Պարոնյան 2011):

Համատեքստին բնորոշ առանձնահատկությունների քննությունից պարզվում է, որ այն բավականին նեղ հասկացություն է և առնչվում է կոնկրետ տեքստին, դրանում կիրառված կապակցման միջոցներին, իսկ հարատեքստն ընդգրկում է տվյալ հաղորդակցական համատեքստին «հարող հսկայական ներակա իմաստային մի դաշտ, որը կարևոր դեր ունի ասույթների գործաբանական իմաստը ճիշտ մեկնաբանելու գործում (Widdowson 2004, Պարոնյան 2011):

Պետք է ասել, որ վերը բերված համատեքստ/հարատեքստ տարանջատումը միշտ չէ, որ կիրառվում է գործաբանական հետազոտություններում: Գուցե սովորույթի ուժով կամ դրանց տարանջատման անհրաժեշտության բացակայության համոզմամբ գործաբանները հաճախ խոսում են համատեքստի (context) մասին՝ նկատի ունենալով ինչպես բուն համատեքստային, այնպես էլ հարատեքստային տարրերը:

Այսպես, քննության առնելով հարատեքստին բնորոշ գծերը՝ Փ. Աուերը տարբերակում է դրա հետևյալ տարատեսակները՝ 1.լեզվական, 2. հանրային, 3. իրադրության (այսինքն՝ այն ֆիզիկական միջավայրը, որտեղ տեղի է ունենում հաղորդակցումը), 4. մասնակիցների հենքային գիտելիքները (ինչը չի ներառում վե-

րոնշյալ 1-3 գործոնները),

5. հաղորդակցման միջոցը (Auer, Di Luzzio 1992:91):

Ներկայումս գործաբանության մեջ ընդունված է նաև հարատեքստի տարատեսակների հետևյալ ստորաբաժանումը՝ իրադրային, հենքային գիտելիքի և համատեքստային 18(Cutting 2002: 55):

Ուշադրության է արժանի նաև տեքստի (կամ դիսկուրսի) և հարատեքստի փոխհարաբերության խնդիրը, որի վերաբերյալ մատնանշվում են երկու տեսական մոտեցումներ՝ կառուցվածքային և մարդաբանական: Այսպես, կառուցվածքային մեկնաբանության կողմնակիցները տեքստը դիտում են որպես ինքնուրույն, անկախ միավոր, որն ունի իրեն բնորոշ համակարգային տարրեր, օրինակ՝ կապակցման միջոցները, իսկ հարատեքստը համարվում է դրան ածանցյալ (Halliday, Hasan 1976):

Դրան հակառակ՝ մարդաբանական և էթնոլեզվաբանական ուղղությունների կողմնակիցները պնդում են, որ հաղորդակցման գործընթացը հենվում է հարատեքստի վրա, և ըստ այդմ՝ հաղորդակցումը (տեքստն ու համատեքստը) հարաշարժ բնույթ ունի, և մշտապես փոխըացնում են: Այսպիսով, ինչպես տեսնում ենք, սույն տեսության մեջ հաղորդակցման գործընթացը մեկնաբանվում է առկա հարատեքստի միջոցով, իսկ հարատեքստային կադապարները հաղորդակցման գործընթացի փոփոխություններին զուգահեռ անընդհատ վերադասավորվում են: Ջ. Գամփերցը վերոնշյալ գործընթացն անվանում է խոսքային գործունեության հարատեքստայնացում (Gumperz 1982; Auer, Di Luzio 1992):

Պետք է նշել, որ սույն լեզվաբանները չեն տարբերակում համատեքստը և հարատեքստը, հետևաբար բնօրինակում կիրառված է «context» գիտաբառը: Սակայն ելնելով ժամանակակից գործաբանության մեջ ընդունված տերմինաբանական պահանջարկից՝ մենք կիրառում ենք «հարատեքստ» գիտաբառը, քանի որ

խոսքը հաղորդակցման արտալեզվական գործոնների մասին է:

Համատեքստի և հարատեքստի քննությամբ համոզվում ենք, որ դրանք խոսքային գործունեության կարևոր հենք են: Ըստ որում, համատեքստի և հարատեքստի լեզվական և արտալեզվական տարրերը ոչ միայն հիմք են դառնում դիսկուրսի կառուցվածքային և իմաստային դաշտերի համապատասխան մեկնաբանության համար (Widowson 2004; Պարոնյան 2011), այլև նպաստում են խոսքնթացում ներգրավված իմաստային ենթադաշտերի, տվյալ դեպքում՝ պերլոկուտիվ իմաստի, ապակոդավորմանը խոսքի հասցեատիրոջ կողմից: Մեր համոզմամբ պերլոկուտիվ ազդեցության դերակատարությունը չի սահմանափակվում մեկ խոսքային ակտով և տարածվում է համատեքստի՝ տվյալ խոսքային ակտի անմիջական խոսքային գուգորդման, այսինքն՝ պատասխան ասույթի վրա: Ըստ այդմ՝ ներագրման գործառույթի տարատեսակը որոշարկվում է խոսողի և խոսընկերոջ խոսքային ակտերի հարաբերակցությունը քննարկելու միջոցով: Քանի որ մենք նպատակ ենք հետապնդում քննելու քննադատման պերլոկուտիվ ներագրեցության դրսևորումը, մենք մեր օրինակներում կլուսաբանենք սույն պերլոկուտիվ իմաստային դաշտի համատեքստային և հաղորդակցական գործառույթը դիսկուրսում՝ հաշվի առնելով հարատեքստային գործոնները:

Հետևյալ օրինակում քննադատման պերլոկուտիվ ներագրեցությունը դրսևորվում է մի քանի խոսքային ակտերով, իսկ խոսընթացի հակընդդեմ բնույթը պարզ է դառնում պատասխան ասույթի քննությունից:

SARAH: *Think of it as a rest for me. I mean, what rest do I get at home? Not only you to look after but the children as well.*

RUTH: *If you didn't want children, you shouldn't have had them.*

SARAH: I never said I didn't want them, Ruth.

RUTH: *You're always making out as if they're some dreadful burden. Like a penance. You never seem to enjoy them.* A. N. C., 73

Իրականացնելով դժգոհություն արտահայտող խոսքային ակտ՝ Սառան քննադատում է ամուսնուն՝ իրեն չօգնելու համար: Քննադատական ներազդմանը արձագանքում է ոչ թե Սառայի ամուսինը, այլ նրա քույրը: Ռուբը բացասական վերաբերմունք ունի Սառայի նկատմամբ և փորձում է հակազդել նրան. “*If you didn't want children, you shouldn't have had them.*”: Սույն խոսքային ակտը ուղղակի հանդիմանության նմուշ է, որով Ռուբը քննադատում է Սառային նրա համար, որ նա անընդհատ բողոքում է ամուսնուց և երեխաներից: Ըստ այդմ ձևավորվում է հակընդդեմ երկխոսական միավոր, որտեղ իրագործվում է քննադատման պերլոկուտիվ ազդեցություն:

Հետևյալ երկխոսական միավորում խոսքնկերները ազգակիցներ են, որոնք ունեն համատեղ կենսավորձ, ուստի՝ համատեղ հենքային գիտելիքների մեծ պաշար: Հետևաբար զրույցի ժամանակ նրանք տեղեկության մի մեծ հատված միտումնավոր բաց են թողնում՝ ենթադրելով, որ խոսքնկերը ի վիճակի է լրացնելու տեղեկատվական այդ բացը:

REG: *Ah-ha, the great caterpillar hunt is on.*

ANNIE: No it isn't, I washed the lettuce this time.

REG: Oh yes.

ANNIE: Well, I rinsed it under the tap. Twice.

REG: *What I always say about salads, Annie, is that I may not enjoy eating them but I learn an awful lot about insect biology. My appreciation of the anatomy of an earwig has increased enormously ...*

A. N. C., 39

Սույն երկխոսությունը տեղի ունենում սեղանի շուրջ ուտելիս: Առաջին հայացքից կարող է թվալ, որ “Ah-ha, the great caterpillar hunt is on” ասույթը հաստատական խոսքային ակտի գործառույթ է կատարում, որի նպատակն է հաստատել որևէ փաստի իսկությունը: Սակայն խոսքնկերոջ պատասխանը մեզ կասկածի տեղիք է տալիս: Վերջինս նախ ժխտում է տվյալ փաստի իսկությունը՝ “No it isn’t,” ապա կազմում մի հաստատական ասույթ, որն իր իմաստով չի կապվում նախորդի հետ՝ “I washed the lettuce this time”: Եթե չհենվենք հարատեքստի վրա և չկիրառենք գործաբանական կանխենթադրույթին առնչվող մեր հենքային գիտելիքը, ապա դժվար կլինի սույն երկխոսության իմաստը հասկանալ: Նախ ասենք, որ խոսքնկերները Էնիի՝ հազարով պատրաստած աղցանն են ուտում, և թվում է, թե տվյալ դեպքում թրթուրի որսի հիշատակությունն անիմաստ է: Այսինքն՝ աղցան ուտելիս արտաբերված սույն ասույթի իլլոկուտիվ և պերլոկուտիվ նպատակները անհասկանալի են մնում, քանի դեռ չենք անդրադառնում պատասխան խոսքին, որտեղ Էնին պնդում է, որ հազարը լվացել է: Պարզ է դառնում, որ այստեղ խոսքը աղցան պատրաստելու համար օգտագործված կանաչիի մաքրության և ըստ այդմ՝ Էնիի մաքրասիրության մասին է: Ըստ որում, “this time” ժամանակի պարագայի միջոցով այն գոյաբանական կանխենթադրույթն է ներակայվում, որ Էնին նախորդ անգամ չէր լվացել կանաչին: Այստեղից տրամաբանորեն եզրակացնում ենք, որ նախորդ անգամ աղցան պատրաստելիս հազարը լվացած չի եղել, և աղցանում թրթուրներ են նկատվել: Ռեզը ենթադրում է, որ այս անգամ նույնպես թրթուրներ կհայտնվեն, քանի որ Էնին փնթի է: Ինչպես պարզվում է, իրականում սույն երկխոսական միավորը սկսող ասույթը ոչ թե հաստատական խոսքային ակտ է, այլ անուղղակի հանդիմանություն. Էնին կանաչին չի լվանում, և աղցանում թրթուրներ են հայտնաբերվում: Համատեքստի այս մեկ-

նաբանությունից պարզ է դառնում նաև սույն ասույթի պերլոկուտիվ իմաստը, այն է՝ քննադատություն. Ռեգը պարսավում է Էնիին նրա փնթիության համար: Արտաբերելով *“Ah-ha, the great caterpillar hunt is on”* ասույթը՝ նա նպատակ ունի քննադատելու Էնիին՝ ոչ մաքրասեր լինելու համար: Էնին, սակայն, կտրականապես հերքում է Ռեգի հանդիմանությունը՝ պնդելով, որ ինքն այս անգամ լվացել է հազարը: Նա միևնույն ժամանակ արձագանքում է իրեն ուղղված քննադատությանը՝ ժխտելով իրեն ուղղված թերության՝ փնթիության իսկությունը: Քննելով վերոնշյալ երկխոսական նմուշը՝ հարկ է նշել, որ ընթերցողին հաջողվում է ընկալել տվյալ երկխոսական միավորում առկա քննադատական ներազդումը սուկ իրադրային հարատեքստին ծանոթ լինելու շնորհիվ:

Հետևյալ նմուշում քննադատման պերլոկուտիվ ազդեցության հաղորդակցական գործառույթը որոշարկվում է գոյաբանական կանխենթադրույթի ընկալման շնորհիվ.

[SARAH enters with her blue bed jacket now in two halves]

SARAH: Look what you've done. Look what you've done to my bed jacket.

A. N. C., 128

Հեղինակի՝ հաղորդակցման իրադրային հարատեքստի նկարագրությունից, այն է՝ Սառայի գիշերազգեստի պատռված լինելու փաստից ընթերցողը հասկանում է Սառայի բացասական հույզերի դրդապատճառը, որով նա մեղադրում է խոսընկերոջը՝ իր գիշերազգեստը պատռելու համար, և քննադատում է նրան: Այսպիսով, սույն երկխոսական միավորի քննադատական ներազդեցության ընակալումը պայմանավորված է ոչ միայն լեզվական միավորների հասկացմամբ, այլև իրադրային հարատեքստային ցուցիչների ակտիվացմամբ:

Հաջորդ երկխոսական նմուշը նույնպես ընթերցողից պահանջում է մշակութային հարատեքստային ցուցիչների կիրառում, որովհետև միայն այդ դեպքում նա կկարողանա մեկնաբանել գրուցակիցների՝ միմյանց նկատմամբ բացասական դիրքորոշում ցուցաբերելու դրդապատճառները:

*JUMBO[shaking ROCHE roughly by the shoulder]:
Plenty of Brummies out of jobs. Without looking
for no Irish bastards to cater for. Shoved yourselves
off, didn't you? Out to bloody sea? Got your new
Jerusalem? Crawl bloody home, then, to your own
little emerald bog, and work there. Coming over
here, with your bloody tuberculosis and venereal
disease. TAFFY: Yeah. You know something,
Paddy? One prostitute in ten on the streets comes
from Southern Ireland. One in ten.*

N.E. D. 7, 126-127

Այսպես, արտաբերելով հետևյալ հաստատական ասույթների շարքը՝ *“Plenty of Brummies out of jobs. Without looking for no Irish bastards to cater for.”*Չամբոն անուղղակի բողոքի խոսքային ակտ է կատարում, իսկ պերլոկուտիվ մակարդակում նա քննադատում է այն իրողությունը, որ իռլանդացի ներգաղթյալներն անգլիացիներից աշխատատեղ են խլում: Նրա խոսքում առկա հարցական և հրամայական ասույթները՝ *“Shoved yourselves off, didn't you? Out to bloody sea? Coming over here, with your bloody tuberculosis and venereal disease Got your new Jerusalem? Crawl bloody home, then, to your own little emerald bog, and work there.”*, անուղղակի մեղադրանք են արտահայտում և բացասական վերաբերմունքի դրսևորում են իռլանդացիների նկատմամբ, քանի որ, ըստ նրա, ձեռք բերելով անկախություն՝ իռլանդացիներն այլևս իրավունք չունեն Անգլիա գալու և իրենց աշխատատեղերը

զբաղեցնելու: Հաղորդակցման մասնակիցներից Թաֆին պատկանում է նույն համայնքին և նույնպես բացասաբար է տրամադրված իռլանդացիների նկատմամբ: Այսպես, արտաբերելով անուղղակի մեղադրանք արտահայտող հետևյալ ասույթների շարք՝ *“Yeah. You know something, Paddy? One prostitute in ten on the streets comes from Southern Ireland. One in ten.”*, Թաֆին հաստատում է, որ խոսողի ասույթի պերլոկուցիան ինքը մեկնաբանել է որպես իռլանդացիների բարոյական նկարագրի քննադատություն և համակարծիք է դրան:

Ստորև ներկայացված երկխոսական միավորի քննությունը մեզ թույլ կտա ավելի խորը բացահայտել հենքային գիտելիքի կարևորության աստիճանը քննադատման պերլոկուտիվ ազդեցությունը ճիշտ մեկնաբանելու գործում:

George: {Takes her drink} I always put ice in your drink. You eat it, that's all. It's that habit you have ... chewing your ice cubes ... like a cocker spaniel. You'll crack your big teeth.

Martha: THEY'RE MY BIG TEETH!

George: Some of them ... some of them. Martha: I've got more teeth than you've got. George: Two more.

Martha: Well, two more's a lot more

*George: I suppose it is. I suppose it's pretty remarkable ... **considering how old you are.***

*Martha: **YOU CUT THAT OUT!** {Pause} You're not so young yourself.*

George: {With boyish pleasure a chant} I'm six years younger than you are... I always have been and I always will be.

E. A. W. I. A. O. V. W., 14-15

Սույն երկխոսական միավորում Ջորջի քննադատումը վերաբերում է իր կնոջ՝ Մարթայի վարքին: Ջորջը նյարդայնանում է, որ ամեն անգամ, երբ ինքը Մարթայի խմիչքի մեջ սառույց է գցում, նա ծամում-ուտում է սառույցը և նորն է պահանջում: Ցանկանալով փոխել Մարթայի վարքագիծը՝ Ջորջը իլլոկուտիվ մակարդակում անուղղակի բողոք է արտահայտում Մարթայի վատ սովորույթի դեմ. *“I always put ice in your drink. You eat it, that's all.”*: Պերլոկուտիվ մակարդակի հայեցակերպով դիտելիս սույն խոսքային գործողության ներազդման իմաստը քննադատություն է: Այստեղ բացահայտ է խոսողի բացասական դիրքորոշումը՝ շան պես ատամներով սառույց ծամելը լավ սովորություն չէ՝ *“It's that habit you have ... chewing your ice cubes ... like a cocker spaniel”*, բացի դրանից՝ սառույց ծամելու հետևանքով նրա ատամները կարող են կոտրվել: Հնարավոր բացասական հետևանքները մատնանշող նախազգուշացման անուղղակի խոսքային ակտում՝ *“You'll crack your big teeth”*, Մարթային քննադատելուց բացի, խոսողը նաև ծաղրում է նրան մեծ ատամներ ունենալու համար: Ինչ խոսք, Մարթան հասկանում է ամուսնու քննադատությունն ու ծաղրը և հակադարձում է նրան *“THEY'RE MY BIG TEETH!”* հուզաարտահայտչական խոսքային ակտով՝ բողոքելով ամուսնու քննադատության դեմ: Ինչպես տեսնում ենք, խոսընկերոջ արձագանքը վերաբերում է նախորդ ասույթի պերլոկուտիվ, այլ ոչ թե իլլոկուտիվ ակտին: Հասկանալով իրեն ուղղված քննադատությունը՝ նա բղավում է՝ ի ցույց դնելով իր բացասական հույզերը: Պետք է ասել, որ Մարթայի ձայնի բարձրության և ասույթի հուզական հնչերանգի մասին վկայում է նաև հեղինակի նշագրությունը. մեծատառերը և բացականչական նշանը ցույց են տալիս, որ խոսողը գոռում է:

Շարունակելով մեր քննությունը՝ նշենք, որ պակաս հետաքրքիր չէ Ջորջի արձագանքը Մարթայի հակադարձմանը՝

“Some of them ... some of them.”: Ակնհայտ է, որ Ջորջն իրեն հանգիստ է պահում և չի «վարակվում» Մարթայի կրքոտ հակամարտ կեցվածքից: Նա հանդարտ, դադար տալով՝ “Some of them ... some of them.” զեղչված ասույթ է կազմում, որի իլլոկուտիվ նպատակը անհամաձայնությունն է: Համատեքստից պարզ է, որ որպես պերլոկուտիվ գործողություն սույն խոսքային ակտը արտահայտված է քննադատության ավելի քողարկված ձևով. համեմված է ծաղրանքով: Ծաղրանքի պատճառն այն է, որ Ջորջը գիտի Մարթայի արհեստական ատամների մասին և ծաղրում է նրան:

Հետևյալ օրինակում հաղորդակցման մասնակիցները հակամարտում են մի հարցի շուրջ, որը նրանց համատեղ հենքային գիտելիքի պաշարի մաս է կազմում և խոսքում չի բացահայտվում, սակայն դառնում է հակամարտության պատճառ:

George: {Stops} Just don't start on the bit, that's all.

Martha: The bit? The bit? What kind of language is that? What are you talking about?

George: The bit. Just don't start in on the bit.

Martha: You imitating one of your students, for God's sake? What are you trying to do? **WHAT**

BIT?

E. A. W. I. A. O. V. W., 18

Սույն օրինակում քննադատման պերլոկուտիվ ազդեցությունն իրականացնելու համար խոսակիցները կիրառում են շարահյուսական կրկնության, տվյալ դեպքում՝ զեղչված ասույթի կրկնության հնարը: Արտաբերելով “*Just don't start on the bit, that's all.*” հրամայական խոսքային ակտը՝ Ջորջը փորձում է Մարթային ետ պահել անցանկալի թեմայի մասին խոսելուց: Սակայն, ի պատասխան դրան, Մարթան հակադարձում է նրան՝ կրկնելով “*The bit? The bit?*” զեղչված հարցական ասույթը, և իր բացասական վերաբերմունքն է արտահայտում Ջորջի խոսելաճճի վերաբերյալ.

“*What kind of language is that? What are you talking about?*”: Սույն հարցական խոսքային ակտերը անուղղակի մեղադրանքի գործառույթ են կատարում, իսկ պերլոկուտիվ մակարդակում քննադատական ներագրում են իրագործում՝ բացասական գնահատական տալով խոսքնկերոջը: Ջորջն իր պատասխան խոսքում արձագանքում է քննադատման հակադարձմանը, ինչն ակնհայտորեն դուր չի եկել իրեն: Կրկնելով հրամանը՝ Ջորջը շարունակում է քննադատական ներագրումը. “*The bit. Just don't start in on the bit.*”: Մարթան լավ է գիտակցում, թե կոնկրետ ինչ նկատի ունի Ջորջը, և շարունակում է հանդիմանություն արտահայտող անուղղակի խոսքային ակտերով քննադատել նրան իր տարիքին ոչ պատշաճ խոսելաոճի համար. “*You imitating one of your students, for God's sake? What are you trying to do? WHAT BIT?*”

Հակընդդեմ երկխոսական միավորների քննությունը ցույց է տալիս, որ համատեքստային և հարատեքստային ոլորտներին առնչվող լեզվական և արտալեզվական ցուցիչները որոշիչ դեր ունեն խոսքային ակտի պերլոկուտիվ իմաստն ընկալելու գործում: Այսինքն՝ խոսակիցների արտալեզվական և ներլեզվական համատեղ գիտելիքը կիրառվում է քննադատման պերլոկուտիվ ազդեցություն իրագործելիս և այն մեկնաբանելիս:

Ամփոփելով կարելի է նշել, որ իլլոկուտիվ և պերլոկուտիվ ակտերի տարանջատման հարցը, լինելով գործաբանական լեզվաբանության և դիսկուրսի տեսության արդիական խնդիրներից՝ բավարար կերպով չի քննվել խոսքի ներագրեցության քննությամբ վերաբերող տեսություններում: Խոսքային ակտի պերլոկուտիվ իմաստային բաղադրիչի քննությունը ցույց է տալիս, որ պերլոկուտիվ ազդեցություն իրագործող լեզվական միջոցների բացակայության պատճառով սույն ազդեցության իրացումը խոսողի կողմից և մեկնաբանումը ունկնդրի կողմից դառնում են խնդրահարույց: Պերլոկուտիվ ակտի առանձնահատկությունների

քննարկման արդյունքում պարզ է դառնում, որ այն իր բնույթով անկանխատեսելի է, այսինքն՝ խոսողի արտաբերած ասույթը միշտ չէ, որ հանգեցնում է ցանկալի արդյունքի: Սույն դրույթից ելնելով՝ տարանջատում ենք պլանավորված և չպլանավորված պերլոկուտիվ ազդեցությունները: Պլանավորված պերլոկուտիվ ազդեցության իրագործման շնորհիվ ունկնդիրը ընկալում է խոսողի իրական հաղորդակցական նպատակը, ինչն էլ նպաստում է խոսքային ակտի հաջող իրացմանը, քանի որ խոսքային ակտի սույն բաղադրիչը խոսողի հաղորդակցական նպատակի մաս է կազմում: Խոսողի հաղորդակցական նպատակի՝ խոսքային ակտի հաջող իրագործումը պայմանավորված է ունկնդրի իլլուկուտիվ և պերլոկուտիվ իմաստները ճիշտ վերծանելու կարողությամբ: Մեր ուսումնասիրության արդյունքների հիման վրա կարելի է եզրակացնել, որ պերլոկուցիան և պերլոկուտիվ ակտի ճիշտ մեկնաբանությունը կախված է մի շարք ներլեզվական և արտալեզվական գործոններից, ինչպիսիք են՝ ունկնդրի կողմից ասույթի ստորոգման իմաստի ճիշտ ընկալումը, ասույթի իլլուկուտիվ իմաստ արտահայտող ցուցիչների որոշարկումը, նրա հոգեբանական պատրաստակամությունը՝ ընկալելու խոսողի իրական հաղորդակցական նպատակը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ըստ Գրայսի՝ խոսքը ոչ թե անջատ դատողությունների շարք է, այլ հաղորդակցվող կողմերի համատեղ ջանքերի արդյունք: Հաղորդակցման գործընթացն ունի մեկ ընդհանուր նպատակ, որի իրականացմանն էլ խոսողը ձգտում է խոսելու ընթացքում: Եվ քանի որ յուրաքանչյուր խոսող ինքն է ընտրում իր հաջորդ հաղորդակցական քայլը, ապա խոսքի ծավալման որոշակի փուլում որոշ հնարավոր հաղորդակցական քայլեր կարող են անտեղի համարվել. «Եթե ես համագործակցում եմ զրուցակցիս հետ և գործում եմ ընդհանուր հաղորդակցական նպատակի իրագործմանը համահունչ, ես ամեն պահի չեմ կարող խոսել, ինչ ուզեմ, ես պիտի խոսեմ տվյալ հաղորդակցական իրադարձությանը համապատասխան» (Grice 1975):

2. Օսթինի մշակած պերֆորմատիվների հաջողության նախադրյալները հետևյալն են.

Ա. (1) Անհրաժեշտ է պայմանական ընթացակարգ, որն ունի պայմանական ազդեցություն:

(2) Հանգամանքները և մարդիկ պետք է համապատասխանեն ընթացակարգին:

Բ. Արարողությունը պետք է կատարել ճիշտ և ամբողջությամբ:

Գ. (1) Հաճախ անհրաժեշտ է, որ անձն ունենա այն մտքերը, զգացմունքները, մտադրությունները, որոնք պահանջվում են արարողակարգով:

(2) Եթե անհրաժեշտ է, որ տվյալ խոսքից հետո մյուս մասնակիցներն էլ որոշակի գործողություն կատարեն, ապա նրանք պետք է անեն դա (Austin 1962):

Օրինակ, երբ զայրացած ամուսինն ասում է կնոջը՝ «Ես բաժանվում եմ քեզանից», սրանով նա ամուսնալուծության գործո-

դություն չի կատարում, քանի որ դա չի կատարվում հայտարարելով և որոշակի ընթացակարգ է պահանջում: Եթե դասախոսն ուսանողին ասում է՝ «ես քեզ ավագ եմ նշանակում» այն դեպքում, երբ արդեն ուրիշ մեկն է նշանակվել, կամ էլ ինքն իրավասու չէ անելու դա, մենք գործ ունենք անհամապատասխան անձի, անհամապատասխան հանգամանքների հետ»:

Ստորոգման բովանդակության նախապայմանը, որը ներառում է ներլեզվական գործոններ:

- Նախապատրաստական նախապայմանը, որը ներառում է խոսքային ակտի հոգեբանական դրդապատճառը:
- Էական նախապայմանը, որը պարտադրում է խոսողի պատրաստակամությունը որոշակի իլլոկուտիվ ակտ իրագործելու գործընթացում:
- Անկեղծության նախապայմանը, որը խոսողին պարտադրում է անկեղծորեն իրագործել որևէ կոնկրետ խոսքային ակտ: Օրինակ, եթե խոսողը արտաբերում է խոստում արտահայտող ասույթ, ապա նա պետք է իրագործի իր կողմից արտաբերված խոսքային ակտը՝ խոստումը:

3. Այսպես, ըստ նրանց, "myself" անդրադարձ դերանունը հետևյալ օրինակում՝ "The kitchen was cleaned by Bob and myself", իրականում պարունակում է հետևյալ խոսքային կառույցը՝ "I tell you that the kitchen was cleaned by Bob and myself." (Schiffrin 2005: 53):

5. Իր "How to Do Things with Words" աշխատության մեջ Ջ. Օսթինը ներկայացնում է խոսքային ակտերի դասակարգման հետևյալ տարբերակը՝ *վերդիկտիվներ, էքսպոզիտիվներ, էքզեր-ցիտիվներ, բիհեբիթիվներ և քոմիսիվներ*:

Վերդիկտիվները արտահայտում են դատավճիռ կայացնելու իլլոկուտիվ նպատակ: Օսթինը վերդիկտիվների մեջ ընդգրկում է հետևյալ խոսքային ակտերը՝ արդարացնել, գնահատել, վերլուծել

և այլն:

Էքսպոզիտիվները արտահայտում են ասույթի դիրքը բանավոր խոսքում, այսինքն, թե ինչպես է խոսողը կիրառում բառերը, կամ ինչ կերպ է ասույթը ներկայացվում: Էքսպոզիտիվները ներառում են հետևյալ խոսքային ակտերը՝ պնդել, հաստատել, հերքել, տեղեկացնել, հարցնել և այլն:

Էքզերգիտիվները պարունակում են անհատի իշխանությունն արտահայտող ասույթներ: Էքզերգիտիվների դասին են պատկանում հետևյալ խոսքային ակտերը՝ զգուշացնել, խորհուրդ տալ, սպառնալ, ուղղորդել և այլն:

Քոմիսիվները ներառում են խոստում, հասարակական պատասխանատվություն արտահայտող այլ ասույթներ և հայտարարություններ:

Բիհեբիթիվները սերտորեն կապված են հասարակական հարաբերություններն արտացոլող խոսքային ակտերի հետ, որոնց թվին կարելի է դասել ներողություն խնդրելը, շնորհակալություն հայտնելը, գովաբանելը, շնորհավորելը և այլն:

6. Սըրլի ներկայացրած դասակարգումը ներառում է հետևյալ խոսքային ակտերը՝ ռեպրեզենտատիվներ, դիրեկտիվներ, դեկլարատիվներ և էքսպրեսիվներ:

7. Անդրադառնալով Սըրլի կողմից առաջադրված դեկլարատիվների խնդրին՝ Մմիթը առաջարկում է վերջիններս վերանվանել «պաշտոնական խոսքային ակտեր» (Formal Speech Acts): (Smith 1991: 16):

8. Արտահայտչական ակտերին բնորոշ նրբերանգներ ունեցող հետևյալ ասույթը՝ “I’m sorry for causing you any inconvenience”, հաճախ կարելի է որակել որպես հանրային քաղաքավարության նորմերին համահունչ խոսքային ակտ: Այսինքն՝ այս դեպքում խոսողը փորձում է ունկնդրից ներողություն խնդրել իր արարքի համար, քանի որ վերջինս հավատում է, որ

ինքը դիմացինին ինչ-որ կերպ անհանգստություն է պատճառել (Schiffrin 2005: 214): Գոֆմանը նույնպես անդրադառնում է էքսպրեսիվներին և գտնում, որ այս խոսքային ակտերը իրենց բնույթով ծիսական են և իրագործվում են ըստ քաղաքավարական պայմանադրության (Goffman 1976):

Վերլուծելով “I’m happy to see you again” էքսպրեսիվ նրբերանգներ արտահայտող ասույթը՝ Ա. Շիֆրինը գտնում է, որ այն կարելի է որակել որպես բարի գալուստ մաղթող խոսքային ակտ, որի իրագործումը պայմանավորված է պայմանադրական քաղաքավարությամբ (Schiffrin 2005: 214):

9. Հիմնվելով անուղղակի խոսքային ակտի վերծանման անընդմեջ գիտափորձերի վրա՝ կարելի է խիստ անհավանական համարել այն դրույթը, ըստ որի՝ գիտափորձի մասնակիցները սկզբում ընկալում են անուղղակի ասույթի բառացի իմաստը, այնուհետև փորձում վերծանել վերջինիս իմաստային անուղղակի տարրերը: Սրանից էլ կարելի է ենթադրել, որ ունկնդիրները կարող են անուղղակի ասույթը ուղղակիորեն ընկալել: Վերոնշյալ դրույթը լեզվաբանության մեջ հայտնի է որպես *ուղիղ ընկալում* (*direct access*) (Gibbs 2002): Հիմք ընդունելով վերոնշյալ մոտեցումը՝ կարելի է ասել, որ ունկնդիրը կարող է ուղակիորեն մեկնաբանել փոխաբերական ասույթները միայն այն դեպքում, եթե դրանք արտաբերվում են իրական, հանրային համատեքստում: Այստեղ հատկապես արժի կարևորել ունկնդրի ճիշտ եզրահանգման գալու կարողությունը: Այսինքն՝ ունկնդիրները սկզբում ընկալում են ասույթում առկա բառացի իմաստը, այնուհետև կիրառելով իրենց լեզվագործաբանական գիտելիքն ու կարողությունը՝ վերծանում են ասույթի անուղղակի իմաստը: Սույն մոտեցման հակառակորդները գտնում են, որ փորձի մասնակիցների կողմից անուղղակի ասույթների արագ ընկալումը պայմանավորված է այն բանով, որ գիտափորձում կիրառվել են ձեռնարկ, պայմանադր-

րական արտահայտություններ, անուղղակի խոսքային ակտեր (Temple, Honeck 1999): Որպես քննության առարկա վերցնելով նոր փոխաբերությունները՝ նրանց հաջողվել է ապացուցել, որ գիտափորձի մասնակիցները ավելի արագ ընկալել են արտահայտությունների ոչ փոխաբերական իմաստը:

Ռ. Ջիորան և Օ. Ֆեյնը նման գիտափորձ են իրականացրել՝ հակադրելով ակնհայտ հեզնական, փոխաբերական իմաստ պարունակող արտահայտությունները ոչ փոխաբերականների հետ, և հանգել են այն համոզման, որ գիտափորձի մասնակիցներին հաջողվում է ավելի արագ վերծանել բառացի իմաստ պարունակող արտահայտությունները և ուղիղ խոսքային ակտերը, մինչդեռ վերջիններս անձանոթ փոխաբերական իմաստ պարունակող արտահայտությունները և անուղղակի խոսքային ակտերը դժվարանում են ընկալել (Giora, Fein 1999):

Ռ. Գիբսը, սակայն, քննադատում է վերոնշյալ գիտափորձի մեթոդականությունը՝ նշելով, որ Ջ. Թեմփելը և Ռ. Հոնեքը խոսքային իրադրությանը համապատասխան համատեքստում իրենց նոր փոխաբերական արտահայտությունները չեն ներկայացրել, հետևաբար սույն գիտափորձի արդյունքները չի կարելի գիտական համարել (Gibbs 2002):

10. Լեզվական քաղաքավարությունը, ինչպես նաև Ջ. Լիչի կողմից ներկայացված քաղաքավարության կարգախոսներն ավելի մանրամասն կքննվեն ուսումնասիրության հաջորդ՝ երկրորդ գլխում:

11. Այս տեսությունը գործաբանական լեզվաբանության մեջ «շարժառիթային տեսություն» (Causation Thesis) (Davis 1980):

Ջ. Մեյդոքը նշում է, որ շատ դեպքերում ասույթի ներքին կադապարում առկա պայմանադրության շնորհիվ հնարավոր է պերլոկուտիվ ազդեցություն իրագործել: Հիմնավորելով իր այս դրույթը՝ նա որպես դրա վառ օրինակ է դիտում սեղանի շուրջ

տեղի ունեցող հաղորդակցական իրավիճակը, երբ խոսողը արտաբերում է “Could you pass the salt?” ասույթը: Առաջին հայացքից սույն ասույթն իր բնույթով հարց է հիշեցնում, սակայն արտաբերվելով սեղանի շուրջ՝ այն ունկնդրի մեջ առաջացնում է աղը փոխանցելու պարտավորություն: Ջ. Մեյդոքը նշում է, որ այսպիսի հարցերը որպես կանոն ներառում են “please” բառը, ինչն էլ թույլ է տալիս ենթադրել, որ խոսողը նպատակ ունի ունկնդրի վրա խնդրանքի ազդեցություն իրագործելու: Հիմնվելով վերը ներկայացված օրինակի վրա՝ Մեյդոքը պնդում է, որ սույն ասույթները բավականին պայմանադրականացված են, ուստի իրագործված ազդեցությունը ավելի ճիշտ է որակել որպես *ուղիղ իլլոկուտիվ*, քան *անուղղակի պերլոկուտիվ* (Sadock, 1974):

12. Տարանջատելով իլլոկուտիվ և պերլոկուտիվ ակտերը՝ խոսողին վերագրվում են իր արտաբերած ասույթի իմաստը որոշարկելու անսահմանափակ իրավունքներ: Այստեղից կարելի է եզրակացնել, որ լսողի մեջ առաջացած ազդեցությունը կարող է չառնչվել խոսողի արտաբերած ասույթին բնորոշ հաղորդակցական իմաստին: Այսինքն՝ խոսողը չի կարող կանխատեսել և որոշարկել իրագործվող պերլոկուտիվ ակտը: Այս պարագայում պայմանադրության գաղափարը ենթադրում է, որ խոսողը միշտ չէ, որ կարող է սահմանափակել իր կողմից արտաբերած ասույթին բնորոշ իմաստները: Օրինակ՝ Ջոնը Մերիի հետ գնում է երեկույթի: Նրանց հարաբերությունները զուտ ընկերական են: Սակայն Մերին սիրում է նրան, իսկ Ջոնը չգիտի այդ մասին: Հանկարծ Ջոնը նկատում է մի աղջկա, որին նա կարծես թե ճանաչում է: Փորձելով պարզել աղջկա ինքնությունը՝ նա հարցնում է Մերիին “I wonder who she is.” կարծելով, թե Ջոնը հավանում է աղջկան՝ Մերին տխրում է: Չգանկանալով, որ Ջոնը իմանա իր զգացմունքների մասին՝ Մերին պարզապես պատասխանում է. “Well, I don't know.” (Gu 1993): Ջոնի “I wonder who she is.” ասույթն ար-

տաբերելը լոկուցիա է, Մերիին աղջկա ով լինելը հարցնելը՝ իլլուկուցիա, իսկ Մերիին տխրեցնելը կամ անհանգստացնելը՝ պերլուկուցիա: Կասկածից վեր է, որ Ջոնը ոչ մի նպատակ չուներ Մերիի տրամադրությունը փչացնելու կամ տխրեցնելու, և տվյալ պերլուկուտիվ ակտը ուղղակիորեն չի բխում իլլուկուտիվ ակտից: Պայմանադրության բարդ կիրառումը ակնհայտ է ներկայացված սույն օրինակում: Ջոնը Մերիից ընդամենը հարցնում է մի կնոջ ով լինելու մասին և իրենից անկախ՝ անհանգստացնում Մերիին:

13. Այս կապակցությամբ Ջ. Սըրըրը նշում է. «Պայմանադրությունների առկայությունը որևէ լեզվում որևէ խոսքային ակտ իրագործելու նախապայման չէ» (Searle 2002: 152): Այնուամենայնիվ, հնարավոր է տարանջատել իլլուկուտիվ ակտը պերլուկուտիվից՝ հիմք ընդունելով խոսողի դիրքորոշումը: Սակայն պայմանադրության գաղափարի կիրառումը չի կարելի դիտել որպես արդյունավետ միջոց երկխոսության համատեքստում: Ինչպես տեսանք, վերոնշյալ օրինակում ունկնդիրը սխալ իմաստ կամ մտադրայնություն է վերագրում խոսողի արտաբերած ասույթին:

Այսպիսի անսպասելի ազդեցությունը սովորական է դիտվում հաղորդակցման գործընթացում: Սակայն խոսքընկերների միջև հաղորդակցական իրավիճակները բարդ են և չեն կարող մեկնաբանվել զուտ խոսողի արտաբերած ասույթի տեսանկյունից: Ինչպես արդեն նշել ենք, Ջ. Օսթինը պարզ գիտակցում է, որ հնարավոր է իլլուկուտիվ ակտը սխալ կիրառել կամ ոչ մտադրված ազդեցություն գործել (Austin 1962): Որևէ ասույթ արտաբերելով՝ խոսողը իրագործում է կոնկրետ ակտ: Մույն ակտն ընկալելու և դրան պատասխանելու համար անհրաժեշտ է մեկը, որը նույնպես կներգրավվի հաղորդակցման գործընթացում: Մարդկային միտքն անդադար աշխատող օրգանիզմ է, և այն միշտ կձգտի նոր իմաստներ վերագրել խոսողի արտաբերած ասույթին: Անգամ մինևույն ասույթը կարող է տարբեր կերպ ընկալվել

ունկնդրի կողմից: Այսինքն՝ խոսողի հաղորդակցական նպատակը և դրա ընկալումը ունկնդրի կողմից միշտ չէ, որ համապատասխանում են միմյանց: Սույն երևույթը խոսողի և ունկնդրի միջև հակասությունների առիթ է դառնում:

Այս կապակցությամբ Ք. Բախը և Ռ. Հարնիշը, ինչպես և Ռ. Գեյնսը, նշում են, որ պետք է դասակարգել և սահմանազատել դիտավորությամբ կատարած պերլոկուտիվ ակտերը: Տարանջատելով նպատակադրված պերլոկուտիվ ակտերը ոչ մտադրված պերլոկուտիվից՝ նրանք մտադրայնությունը որակում են որպես կարևորագույն գործոն, իսկ սույն լեզվաբանական տեսությունը որակվում է որպես «մտադրայնության անպատեհության տեսություն» (Bach, Harnish 1979, Gaines 1979):

15. Փ. Գրայսը և Փ. Սթրոուսընը քննադատում են պայմանադրություն և ոչ պայմանադրություն տարբերակումը: Գրայսը առաջարկում է «բնական իմաստ» և «ոչ բնական իմաստ» ձևակերպումը: Պաշտպանելով իր առաջադրած տեսությունը՝ Փ. Գրայսը նշում է. «Արտաբերելով ոչ բնական իմաստով ասույթ՝ խոսողն ուզում է խոսընկերոջը փոխանցել իր խոսքային նպատակը» (Grice 1978): Փ. Սթրոուսընը գրում է. «Արտաբերելով որևէ ասույթ՝ խոսողը փորձում է որևէ կոնկրետ կարծիք ստեղծել ունկնդրի մոտ: Նա իր արտաբերած ասույթի միջոցով ցանկանում է, որ ունկնդիրը հասկանա իր խոսքային նպատակը» (Starwson 1964: 446-451):

16. Մանրագնին ուսումնասիրելով Ջ. Օսթինի պերլոկուցիայի սահմանումը՝ վստահորեն կարելի է ասել, որ նա չի կարևորում ունկնդրի դերը հաջող պերլոկուտիվ ակտ իրագործելու գործընթացում (Austin 1962, 1980): Մակայն Յ. Գուն իր անսահմանության և շարժառիթային տեսություններում նշում է, որ որակելով ունկնդրի պատասխան ակտը գուտ որպես խոսողի իրագործած խոսքային ակտի հետևանք՝ Ջ. Օսթինը ունկնդրին զրկում է

գործող անձ հանդես գալու իրավունքից: Ուսումնասիրելով համոզելու խոսքային ակտը՝ նա նշում է, որ ունկնդրի ներգրավվածության աստիճանից է կախված սույն խոսքային ակտի հաջող իրագործումը (Gu 1993):

17. Ըստ Սըրլի՝ հաղորդակցման ժամանակ ազդակ-արձագանք (input-output) գործընթացի խաթարում է տեղի ունեցել (Searle 1969):

18. Իրադրային հարատեքստը, ըստ Քաթինգի, խոսակիցներին շրջապատող ֆիզիկական աշխարհն է, որտեղ տեղի է ունենում հաղորդակցումը, իսկ հենքային գիտելիքի հարատեքստը ներառում է մշակութային և միջանձնյա հարաբերությունների տարրեր (Cutting 2002): Ընդ որում, մշակութային հարատեքստը ենթադրում է նույն լեզվական համայնքին վերաբերող հենքային գիտելիքի առկայություն (Wilson, Sperber 1995), իսկ միջանձնյա հարատեքստը ներառում է խոսակիցների միջանձնյա հարաբերություններին, նրանց անձին բնորոշ անհատական հատկանիշներին վերաբերող հենքային գիտելիք (Cutting 2002):

ԳԼՈՒԽ 2
ՔՆՆԱԴԱՏՄԱՆ ՆԵՐԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ԼԵԶՎԱԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՑՉԱՍԻՋՈՑՆԵՐԸ
ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

**Քննադատական խոսքի սոցիալ-հոգեբանական
նախադրյալները**

Պետք է ասել, որ քննադատումը հասարակական կյանքի տարբեր ոլորտներում փոխներգործող անձանց միմյանց նկատմամբ դրսևորվող գնահատողական վերաբերմունքի տեսակ¹ է: Որպես այդպիսին՝ քննադատման, այսինքն՝ նախատական վերաբերմունքի, կոնֆլիկտային վարքի դրսևորման քննությունն իրականացվել է հիմնականում սոցիալական, ճանաչողական հոգեբանությունների և կոնֆլիկտաբանության շրջանակներում, որտեղ քննադատումը դիտվում է որպես միջանձնյա փոխհարաբերությունների բացասական դրսևորման տեսակ: Հոգեբանները և կոնֆլիկտաբանները փորձում են լուսաբանել անհատների, մարդկանց խմբերի, ազգերի կոնֆլիկտածին, այսինքն՝ բացասական դիրքորոշմամբ բնութագրվող վարքագծի սոցիալ-հոգեբանական առանձնահատկությունները, պարզաբանել դրանց առաջացման շարժառիթները և հստակեցնել արտահայտման ձևերը. ո՞ր դեպքերում է անհատը դրսևորում քննադատական վարքագիծ, հասարակական ո՞ր նորմի խախտումը կարող է բացասական վերաբերմունք առաջացնել և հանգեցնել սուր քննադատական վարքագծի դրսևորման:

Վերջին շրջանում գործաբանական հետազոտությունները լեզվաբանության դիտանկյունից ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում է հայտնվել խոսող անհատը՝ իր սոցիալ-հոգեբանական դրսևորումներով հանդերձ: Այսինքն՝ խոսքային գոր-

ծունեությունը չի անջատվում անհատի հասարակական այլ գործունեություններից և դիտվում է դրա մաս: Ըստ այդմ՝ կապակցված խոսքի՝ դիսկուրսի վերլուծությունը անհրաժեշտաբար ենթադրում է խոսքային իրադրության լայն ընդգրկում, այսինքն՝ հարատեքստի առկայություն, որտեղ կարևոր դեր են խաղում նաև խոսքը կրողների նախորդ հաղորդակցական կենսավորված, խոսքը ստացիալ-հոգեբանական նախադրյալները: Այսպես, քննադատման երևույթը հայտնվեց նաև լեզվաբանական հետազոտությունների կիզակետում, իսկ ներկայումս դրա խոսքային դրսևորման քննությունը դարձել է գործաբանության արդիական խնդիրներից մեկը (Պարոնյան, Բեքարյան 2007, Ռոստոմյան 2013): Սրանից հետևում է, որ դիսկուրսի տեսության մեջ լեզուն դիտվում է որպես խոսող անհատի հասարակական «ես»-ի անբաժանելի մասը, որի օգնությամբ կարգավորվում են նրա ունեցած դերը և վարքագիծը հասարակության մեջ:

Եթե նախկինում հոգելեզվաբանական ուսումնասիրություններում լեզուն բնութագրվում էր որպես անհատի ճանաչողական գործունեությունն արտահայտող չեզոք միջոց, ապա ճանաչողաբանության, մասնավորապես ճանաչողական հոգեբանության վերջին հետազոտությունների շնորհիվ վերջինս դիտարկվում է որպես անհատի հասարակական գործունեության դրսևորում: Սկզբնական շրջանում ճանաչողական հոգեբանության մեջ առավելապես կարևորվում էին անհատի ներաշխարհում տեղի ունեցող հոգեկան գործընթացները, սակայն դիսկուրսի հոգեբանության զարգացմամբ պարզ դարձավ, որ անհատի զգացմունքները, վերաբերմունքը, հիշողությունները քննելիս պետք է հենվել նաև դրանց լեզվական դրսևորումների վրա:

Դիսկուրսի հոգեբանությունը հոգեբանական նոր ուղղություն է, որտեղ ուսումնասիրվում է անհատի կողմից կիրառված լեզվական միջոցների ազդեցությունը հասարակական կարծիքի

ձևավորման վրա (Tuffin 2005): Հատկապես կարևորվում է այն լեզվական միջոցների ուսումնասիրությունը, որոնք կիրառում է անհատը կոնկրետ վերաբերմունք արտահայտելիս: Այլ կերպ ասած՝ դիսկուրսի հոգեբանները ոչ թե սուկ ուսումնասիրում են խոսողների ներաշխարհին բնորոշ երևույթները, նրանց կիրառած խոսքային միավորները, այլ նրանց խոսքային գործունեությանը բնորոշ հոգեբանական երևույթները: Այսինքն՝ շեշտը դրվում է արտաքին երևույթների՝ խոսքի դրա դրսևորման և ոչ թե ներքին հոգեբանական գործընթացների քննության անհրաժեշտության վրա: Այսպիսով, մարդու վարքագիծը բնութագրվում է դիսկուրսիվ նյութի ուսումնասիրությամբ: Լեզուն և խոսքը՝ որպես դրա կիրառման ձև, ակտիվ դինամիկ գործընթաց են, որտեղ խոսողներն ունեն կոնկրետ նպատակներ, որոնց իրագործման համար էլ նրանք տարբեր լեզվական միջոցներ են կիրառում: Լեզվական միջոցների գործաբանական առանձնահատկություններն ուսումնասիրելիս վեր են հանվում լեզվական այնպիսի դրսևորումներ, որոնք պայմանավորված են խոսողի՝ արտաքին աշխարհի երևույթների մեկնաբանությամբ և գնահատողական վերաբերմունքով, օրինակ՝ արդարացում, հերքում, մեղադրանք, բացատրություն, և այլն: Անցյալում սոցիալական հոգեբանության մեջ լեզվի դերը թերագնահատվել է: Դիսկուրսի հոգեբանները ուսումնասիրում են հաղորդակցման ժամանակ կիրառված լեզվական միջոցների գործառական առանձնահատկությունները: Ընդամին, անհատի վերաբերմունքը, նրա դիրքորոշումները, այսպես ասած, «նյութականանում» են կոնկրետ լեզվական միջոցների կիրառմամբ: Անդրադառնալով խոսողի հուզական համակարգին՝ այնպիսի հույզերին, ինչպիսիք են խանդը և բարկությունը², դիսկուրսի հոգեբանները նշում են, որ դրանց առանձնահատկությունների բացահայտումը պայմանավորված է սույն զգացմունքները բնութագրող լեզվական միջոցների ուսումնասիրությամբ: Այսինքն՝

կարևորվում է այն հարցը, թե անհատն ինչ խոսքային միջոցներ է ընտրում վերոնշյալ հույզերն արտահայտելու համար, ինչից հետևում է, որ խոսքը չի կիրառվում զուտ հույզը նկարագրելու նպատակով, այլ գործիք է դառնում մեր կողմից բարկության կամ որևէ այլ (տվյալ դեպքում՝ բացասական) հույզի ընկալումը բացահայտելու համար (Tuffin 2005): Ինչ խոսք, ճանաչողական հոգեբանության ուղղվածությունն այլ է, և խոսող անհատի ներքին խոսքը (self-discourse) վերլուծելու միջոցով հոգեբանները նախ և առաջ փորձում են ստեղծել նրա հոգեբանական նկարագիրը (Harré 1983, Shotter 1984): Լեզվաբանական հետազոտություններում առաջնայինը խոսքն է, որը դիտվում է որպես խոսող անհատի սոցիալ-հոգեբանական վարքագծի դրսևորում (Պարոնյան, Բեքարյան 2007, Պարոնյան 2011, Ռոստոմյան 2013):

Խնդիր ունենալով բնութագրել քննադատական վարքագծի առանձնահատկությունները միջանձնյա փոխհարաբերություններում՝ սույն մենագրության շրջանակում հարկ ենք համարում անդրադառնալ այս վարքագծի լեզվական տարբեր դրսևորումներին անգլերեն խոսքում: Անդրադառնալով քննադատական խոսքի դրսևորման առանձնահատկություններին անգլերենում՝ գալիս ենք այն եզրահանգման, որ վերջինս կարող է արտահայտվել այնպիսի խոսքային գործունեության տեսակների միջոցով, ինչպիսիք են՝ տարաձայնությունը, վիճաբանությունը, վիրավորանքները, դժգոհությունը և այլն (McKinaly, McVittie 2008): Այնուամենայնիվ կարծում ենք, որ խոսքի քննադատական ներազդման պերլոկուտիվ իմաստի քննությունը կարելի է կատարել ճանաչողական հոգեբանության մեջ կատարված դիսկուրսի վերլուծության հենքով՝ անդրադառնալով միջանձնյա հարաբերություններում անհատի քննադատական վարքագծի դրսևորումներին: Ուսումնասիրելով տարաձայնությունը որպես քննադատական տարբեր պարունակող հաղորդակցման տարատեսակ՝ դիսկուր-

սի հոգեբանները ուսումնասիրում են անհամաձայնության երևույթը՝ նշելով, սակայն, որ վերջինս միայն բացասական նրբերանգներ չի պարունակում: Բանն այն է, որ կոնկրետ թեմա քննարկելիս խոսքերներն իրենց անհամաձայնությունն են արտահայտում, բայց միևնույն ժամանակ համաձայնության են գալիս քննարկելու մեկ ընդհանուր թեմա (Antaki 1994):

Անդրադառնալով անհամաձայնությանը՝ որպես բացասական խոսքային գործունեության տեսակի՝ Ա. Փոմերանցը նշում է, որ խոսքերները հաճախ տարբեր խոսքային մարտավարություններ են կիրառում, ինչպես, օրինակ, դադար, խոսքի վերաձևակերպում և այլն, ինչը պայմանավորված է նրանց՝ հնարավոր բացասական հետևանքները մեղմացնելու ցանկությամբ (Pomerantz 1984): Ուսումնասիրելով անհամաձայնության տարրեր պարունակող հաղորդակցական իրադրությունների կառուցվածքային առանձնահատկությունները՝ դիսկուրսի հոգեբանները կարևորում են այն խոսքային միջոցների քննությունը, որով արտահայտվում է խոսողների անհամաձայնությունը (Bonito, Sanders 2002, Clayman 2002): Քննությունը ցույց է տալիս, որ հաճախ խոսքերներից մեկը փորձում է դոմինանտ դեր գրավել, և ուսումնասիրելով խոսողի՝ խոսքնաջրը միակողմ կառավարելու ձգտումը՝ դիսկուրսի հոգեբանները նշում են, որ սույն խոսքային մարտավարության կիրառումը կարող է դիմացինի քննադատական վերաբերմունքին արժանանալ, որի հետևանքով հաղորդակցումը շատ հաճախ վերածվում է հակամարտության (Itakura 2001, Morales-Lopez, Prego-Vazquez, Domingo-Seco 2005): Անհամաձայնության՝ որպես քննադատական տարրեր պարունակող խոսքային գործունեության հոգեբանական մեխանիզմների քննության համատեքստում հարկ է կարևորել այն փաստը, որ հաղորդակցվողների մեջ առկա է որոշակի նախատրամադրվածություն, բացասական դիրքորոշում, որոնք էլ կարող են հանգեցնել հա-

դորդակցական բախման³:

Այսպես, քննելով մեղադրանք պարունակող հաղորդակցական իրադրություններ՝ Յ. Դերսլին և Ա. Ուոթթոնը նշում են, որ հաղորդակցման մասնակիցները հաճախ գնում են առճակատման այն դեպքում, երբ նրանցից մեկը մյուսի ասածները ընկալում է որպես փաստերի դիտավորյալ խեղաթյուրում (Dersley, Wootton 2001): Որպես կանոն, խոսքերներն իրենց հասցեին ուղղված դժգոհությանը պատասխանում են ինքնապաշտպանական մարտավարություն իրականացնող խոսքային միջոցներով կամ էլ հակադարձում են հնչած դժգոհությանը: Դժգոհող-քննադատողը սովորաբար մեղադրում է խոսքերոջը քննադատության արժանի վարքագիծ դրսևորելու համար, ինչը ենթադրաբար նշանակում է, որ նման վարքագիծը խախտում է հասարակական ընդունված նորմը: Խնդրահարույց վարքագծի այսպիսի մեկնաբանման դեպքում քննադատվողը դժվարանում է ինքն իրեն պաշտպանել: Ինչպես նշում են Ա. Ուոթթոն և Յ. Դերսլին, նման քննադատական նրբերանգներ ունեցող հաղորդակցման ընթացքում խոսքերներից մեկը, ավելի հաճախ՝ դժգոհողը, դադարում է հաղորդակցվել, քանզի խոսքերը չի ցանկանում հրաժարվել ընդունված հասարակական նորմը խախտող իր վարքագծից, ինչը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ դիմացինը չի ուզում վերափոխվել՝ անտեսելով իր սխալն ուղղելու հնարավորությունը (Dersley, Wootton 2001):

Այժմ գեղարվեստական դիսկուրսից վերցված նմուշի վերլուծությամբ փորձենք պարզել, թե որ հաղորդակցական իրադրություններում և որ հասարակական նորմի խախտման դեպքում խոսքերացը կարող է դադարեցվել:

"Go anywhere they don't have this blahblahblah," Ned was shouting, seesawing from one foot to the other.

"Say, Ned, you're drunk, come along back to

Cambridge," Dick whined desperately in his ear and tugged at his arm, *"They want to get you drunk and take your money."*

"Can't get me drunk, I am drunk ... blahblahblahblah," whinnied Ned, and took the sailor's white cap and put it on his head instead of his own hat.

"Well, do what you damn please, I'm going." Dick let go Ned's arm suddenly and walked away as fast as he could.

J. D. P., 1919 110

Սույն հակընդդեմ երկխոսական միավորում զրուցակիցները ընկերներ են, որոնցից մեկը գերիշխող դեր է ստանձնում և փորձում կառավարել մյուսի վարքը, և անհաջողության հանդիպելով՝ նախընտրում է դադարեցնել խոսընթացը և հեռանալ: Նեդի «հակահասարակական» վարքը, որը քննադատության է արժանանում նրա խոսընկերոջ կողմից, պայմանավորված է հարբած լինելու և հասարակական կարգը բղավելով խախտելու հանգամանքով. *"Go anywhere they don't have this blahblahblah," Ned was shouting, seesawing from one foot to the other.":*

Դիքը, ինչպես հեղինակն է նշում, հուսահատորեն փորձում է կառավարել նրա վարքը և տվյալ գործողությունը կատարելու անհրաժեշտությունը հավաստող հրամայական, հաստատական խոսքային ակտերով պախարակում է Նեդի պահվածքը՝ հորդորելով հետ կանգնել հակահասարակական արարքից. *"Say, Ned, you're drunk, come along back to Cambridge, They want to get you drunk and take your money.":* Նեդի պատասխանը մեկնաբանվում է որպես հրամանի մերժում: *"Can't get me drunk, I am drunk*

... blahblahblahblah" խոսքային ակտն իլլոկուտիվ իմաստով անուղղակի մերժում է, իսկ պերլոկուտիվ իմաստով այն քա-

մահրանք է արտահայտում իր հասցեին արված քննադատական ներազդման նկատմամբ: Սույն վերաբերմունքն է, որ ստիպում է Դիքին տեղի տալ՝ գիտակցելով խոսքնկերոջ վրա ներազդելու իր անկարողությունը՝ *“Well, do what you damn please, I’m going.”*: Նրա արտաբերած «հրամայական» ասույթն իրականում ոչ թե ուղիղ հրաման է, այլ անուղղակի մեղադրանք՝ ուղղված Նեդին, որ նա չի ցանկանում փոխել իր վարքագիծը:

Ուսումնասիրենք հակընդդեմ երկխոսական միավորի մեկ այլ նմուշ:

Honey: *You’re always at me when I’m having a good time.*

Nick: {Trying to remain civil} I’m sorry, Honey.

Honey: *Just ... leave me alone!*

E. A. W.A.O. V. W. 128-29

Հանիի բացասական գնահատականի և քննադատական ներազդման դրդապատճառը ամուսնու, իր իսկ սուբյեկտիվ գնահատմամբ, ոչ պատշաճ վերաբերմունքն է իր նկատմամբ, նրա անտեղի ծաղրը. *“You’re always at me when I’m having a good time.”*: Նրա խոսքային ակտը անուղղակի մեղադրանք է, որին ի պատասխան՝ Նիքը ներողություն է խնդրում. *“I’m sorry, Honey.”*: Քննադատման գործընթացի նման խաղաղ ելք չակնկալելով՝ Հանին նախընտրում է ընդհատել զրույցը հրամայական խոսքային ակտով. *“Just ... leave me alone!”*:

Հատկանշական է, որ խոսքընթացի ընդհատման ելք ունեցող հաղորդակցական իրադրությունները քննադատական ներազդում պարունակող միակ տեսակը չեն:

Այսպես, Հ. Գրուբերը նշում է, որ հաղորդակցումը կարող է վերածվել հակամարտության, եթե խոսքնկերներից մեկը մյուսի խոսքային գործունեությունը որպես միտումնավոր բացասական խոսքային մարտավարության դրսևորում է որակում (Gruber

2001):

Քննելով քննադատական խոսքի սոցիալ-հոգեբանական նախադրյալները՝ հարկ է նշել նաև մեկ այլ կարևոր գործոն՝ լեզվական քաղաքավարության նորմերի պահպանումը: Քաղաքավար խոսքը բնութագրելիս անհրաժեշտ է նախ հաշվի առնել դրա՝ խոսքի ստեղծման կառավարելու գործառնությունը: Այս առումով մենք հատկապես կարևորում ենք էթնոլեզվաբանության մեջ Է. Գոֆմանի առաջարկած քաղաքավարության մեկնաբանումը, որով նա ներմուծում է անձի դրական կամ բացասական հասարակական վարկանիշի ընկալումը: Է. Գոֆմանը, համեմատելով հաղորդակցման գործընթացը և թատերական բեմադրությունը, փորձում է միասնաբար մեկնաբանել անձի հասարակական վարքը և խոսքային գործունեությունը, որտեղ մասնակիցների սխալները կարող են զգալիորեն սպառնալ ընդհանուր գործի հաջողությանը: Նրա համոզմամբ հաղորդակցման ողջ գործընթացն ուղղորդվում է որոշ սահմանափակումներով, որոնք համընդհանուր են բոլոր լեզուների և մշակույթների համար: Ըստ այդմ էլ տարբերակվում են հաղորդակցման գործընթացը *կարգավորող* և *ծիսական* կամ հասարակական սահմանափակումներ: Կարգավորող սահմանափակումները վերաբերում են հաղորդակցման անխափան գործընթացն ապահովող տարրերին, ինչպիսիք են, օրինակ, խոսքի ստեղծման սկզբնական ավարտելու ազդանշանները, խոսքահերթը կանոնավոր հերթականությամբ վարելու ազդանշանները և այլն (Goffman 1967, 1981):

Եթե կարգավորող սահմանափակումները բնորոշ են հաղորդակցման գործընթացին ընդհանրապես, ապա ծիսականները դրսևորվում են հասարակության որոշակի խավի հաղորդակցման ժամանակ: Է. Գոֆմանի առաջադրած սահմանափակումներն առանձնանում են նրան, որ դրանց օգնությամբ մենք կարող ենք մեզ դրսևորել որպես իրազեկ և արժանի գրուցակիցներ, հաղ-

թահարել առօրյա հաղորդակցման ընթացքում տեղ գտած արգելքները, կարողանալ ճիշտ, հստակ և քաղաքավարի կազմակերպել մեր խոսքը:

Բնութագրելով անձի հասարակական վարկանիշը որպես սոցիալական փոխազդեցության անբաժանելի բաղադրիչ՝ Է. Գոֆմանը այն սահմանում է որպես անհատի կողմից ստեղծված դրական կամ բացասական հեղինակություն: Ըստ Է. Գոֆմանի՝ անհատի դրական հեղինակության առկայությունը պայմանավորված է նրա՝ սոցիալական նորմերին հետևելու պատրաստակամությամբ: Մինչդեռ բացասական հեղինակություն ունեցող խոսակիցը խախտում է հաստատված հասարակական վարքագիծը (Goffman 1967): Թե որքանով անհատը պետք է կարևորի դրական հեղինակություն ստեղծելու և պահպանելու կարգը, կախված է հասարակական ընդունված նորմերից, այսինքն՝ այն հասարակական հարատեքստից, որտեղ տեղի է ունենում հաղորդակցման գործընթացը:

Դատելով հեղինակության, վարկանիշի կարևորությունից՝ կարելի է եզրակացնել, որ դրա առկայությամբ է պայմանավորված խոսակիցների միջև ակտիվ, առանց որևէ հակամարտահարույց իրավիճակների ընթացող հաղորդակցումը: Ընդամին, կոնֆլիկտային, հակամարտահարույց հաղորդակցումը ծավալվում է անձի հեղինակության ոտնահարմամբ:

Ինչպես տեսնում ենք, քննադատական վերաբերմունքի սոցիալ-հոգեբանական նախադրյալներն անմիջապես առնչվում են հասարակական նորմի և միջանձնյա հարաբերությունների՝ քաղաքավարության համընդհանուր սկզբունքների պահպանմանը: Դրանք ոտնահարելու դեպքում անհատի մեջ ձևավորվում է բացասական, տվյալ դեպքում՝ քննադատական վերաբերմունք, որն էլ խոսքում արտահայտվում է քննադատման պերլոկուտիվ ներազդեցությամբ:

Այսպիսով, անհատների կամ, ինչպես գործաբանության մեջ ընդունված է ասել, խոսող անհատների սոցիալ-հոգեբանական վարքագծի քննությունը տեղափոխվում է մեկ այլ՝ լեզվաբանական, մասնավորապես՝ գործաբանական հարթակ, որտեղ խոսքային գործունեությունը դիտվում է որպես անձի հասարակական գործունեության դրսևորումներից մեկը և անմիջականորեն պայմանավորված է նրա հոգեբանական բնութագրով: Գործաբանական ուղղվածություն ունեցող լեզվաբանական հետազոտություններում խոսող անհատի դերն այնքան կարևորվեց, որ Է. Գոֆմանի՝ էթնոլեզվաբանության մեջ առաջադրված խոսողների սոցիալ-հոգեբանական վարքագծի ուսումնասիրությունը հետազոտության մի առանձին ուղղություն է դարձել՝ ստանալով «քաղաքավարության սկզբունքների տեսություն» անվանումը⁴: Մույն տեսության ակունքներում կանգնած Պ. Բրաունը, Ս. Լևինսոնը առաջադրում են քաղաքավարության որոշակի սկզբունքներ՝ *դրական* և *բացասական* քաղաքավարություն, որոնք արտահայտվում են խոսքի միջոցով (բառային միջոցներ, խոսքային ակտեր, առոգանություն, և այլն)՝ կարգավորելով խոսող անհատների հասարակական հարաբերությունները (Brown, Levinson 1987, Lakoff 1973, Leech 1983, Brasdefer 2008): Պ. Բրաունի և Ս. Լևինսոնի քաղաքավարության տեսության համաձայն՝ անձի դրական հասարակական վարկանիշը նրա՝ խոսակցի կամ հասարակության մյուս անդամների կողմից ընդունված և նույնիսկ սիրված լինելու ցանկությունն է, իսկ բացասական վարկանիշը պայմանավորված է անձի անկախ լինելու, գործողությունների ազատությամբ օժտված լինելու ցանկությամբ: Ըստ այդմ՝ բացասական քաղաքավարության մարտավարությամբ ուղղորդվող խոսողը հակված է ավելի հարգալից վերաբերմունք ցուցաբերել զրուցակցի նկատմամբ՝ ընդգծելով, որ նրա նպատակներն ավելի կարևոր են, քան իրենը, և նույնիսկ պատրաստ է ներողություն խնդրել զրուցակ-

ցից ավելորդ ժամանակ խլելու կամ նրան անտեղի ընդհատելու համար: Այս մարտավարական սկզբունքով կառուցված խոսքային ակտերը հիմնականում պարունակում են եղանակավորող բայեր, հարցական նախադասությունների կաղապար ունեցող անուղղակի խնդրանքներ, առաջարկներ, հրահանգներ և այլն:

Կիրառելով Պ. Բրաունի և Ս. Լևինսոնի քաղաքավարության տեսությունը քննադատության պերլոկուտիվ դաշտի մեր ուսումնասիրության մեջ՝ կարող ենք նշել, որ ներազդման սույն տեսակը, անշուշտ, անձի հասարակական վարկանիշին սպառնացող խոսքային մարտավարության դրսևորում է, որովհետև այն սահմանափակում է անձի ազատ, անկախ լինելու ձգտումը՝ ստիպելով նրան ենթարկվել որոշակի հասարակական կանոնների և ոտնահարել իր սեփական ցանկություններն ու նպատակները: Այսպիսի դեպքերում մենք գործ ունենք զրուցակցի կողմից դրսևորվող բացասական քաղաքավարության հետ (Brown, Levinson 1987):

Չեսկյալ օրինակում Ջեքը ուզում է, որ իրեն վիսկի հյուրասիրեն:

JACK: Do you think old Bernard's got a drop of Scotch hidden away? LAURA: *Really Jack, you can't drink Bernard's private supply.*

JACK: Can't I just? *I didn't know this party was on. Why not? Because I wasn't invited. N. E. D., 209*

Լավ գիտակցելով, որ իրեն մերժելու են՝ Ջեքը հարցական ասույթի միջոցով անուղղակի խնդրանք է արտահայտում՝ փորձելով խուսափել մերժվելուց. “*Do you think old Bernard's got a drop of Scotch hidden away?*”: Ի պատասխան Ջեքի խնդրանքի՝ Լաուրան մերժում արտահայտող անուղղակի խոսքային ակտ է իրագործում՝ հասկացնելով նրան, որ նա չպետք է առանց տանտիրոջ թույլտվության նրա վիսկին խմի: Փորձելով իրեն արդարացնել՝

Ջեքն անուղղակի հանդիմանություն արտահայտող խոսքային ակտ է իրագործում՝ քննադատելով ընկերներին, որ իրեն չեն հրավիրել երեկույթին. *“I didn't know this party was on. Why not? Because I wasn't invited.”*: Այս օրինակում, Ջեքին այնքան էլ չի անհանգստացնում իր անձի վարկանիշը, քանի որ նրա համար իր ցանկություններն ավելի կարևոր են, քան մերժում ստանալը:

Եթե զրուցակիցներից մեկի խոսքային ակտն ինչ-որ չափով սպառնալիք է ներկայացնում խոսակցի անձի հասարակական վարկանիշին, ապա սույն ակտը բնորոշվում է որպես այդ վարկանիշը ոտնահարող կամ դրան սպառնացող խոսքային ակտ: Մարտավարական այս սկզբունքը կիրառվում է այն հաղորդակցական իրադրություններում, որտեղ խոսակիցներից մեկը փորձում է սահմանափակել մյուսի ազատությունը կամ նրան հարկադրում է իր համար անցանկալի գործողությունների դիմել: Այսպես, որպես ազատության սահմանափակման օրինակ կարող է լինել խոսողի անհարկի խնդրանքը կամ հրահանգը, երբ խոսակիցը հակված չէ այն ի կատար ածելու:

Խոսքի սոցիալ-հոգեբանական ոլորտի կարգավորմանն ուղղված գործաբանական հետազոտություններից կարելի է առանձնացնել նաև Փ. Գրայսի համագործակցության սկզբունքը⁵: Մեծ նշանակություն տալով այն փաստին, թե մարդիկ ինչպես են օգտագործում լեզուն՝ Փ. Գրայսը ներկայացնում է այն կարգախոսները, որոնք, իր իսկ պնդմամբ, կարգավորում են խոսընթացը և հարթում խոսակիցների միջև առաջացած տարաձայնությունները (Grice 1975):

Հիմք ընդունելով Փ. Գրայսի կարգախոսները՝ Ա. Քալիան ներկայացնում է քաղաքավարության կարգախոսը, որը ներառում է հետևյալ դրույթները. «Մի՛ եղեք ընդունված նորմից ավելի քաղաքավարի, մի՛ եղեք անքաղաքավարի՝ անտեսելով ընդունված նորմը» (Kallia 2004):

Ինչպես Փ. Գրայսի կարգախոսների դեպքում է, Ա. Քալիայի կողմից ներկայացված կարգախոսների կիրառմամբ նունպես ի հայտ են գալիս ներակայման դեպքեր:

Սույն դրույթների ճիշտ կիրառմամբ ստանդարտ ներակայում է առաջանում, այսինքն՝ ոչ ակնհայտ արտահայտված տեղեկություն է տրվում այն բանի մասին, որ խոսողը գործում է որոշակի նորմով հաստատված կանոնների համաձայն: Դրույթներից որևէ մեկի խախտման դեպքում առաջանում են խոսքային ներակայումներ, որոնց միջոցով դրական (քաղաքավարի) և բացասական (կոպիտ) վերաբերմունք է արտահայտվում լսողի նկատմամբ:

Կարևորելով Փ. Գրայսի համագործակցության սկզբունքը և կարգախոսները՝ Ռ. Լակոֆը նշում է, որ դրանք իրենց բնույթով շատ ընդհանրացված են, և առաջարկում է խոսքի արդյունավետ կիրառմանը նպաստող հետևյալ դրույթները՝ «Պա՛րզ արտահայտվիր, քաղաքավարի՛ եղիր»:

Ի լրումն երկրորդ կարգախոսի՝ նա ներկայացնում է հետևյալ հաղորդակցական մարտավարությունները. «Մի՛ հակադրվիր, այլ ընտրանքի հնարավորություն տուր, բարեհամբո՛ւյր եղիր»⁶ (Lakoff 1973: 296):

Այսպիսով, քաղաքավարությունը բնութագրվում է որպես միջանձնյա հարաբերությունները կարգավորող համակարգ, որը նախատեսված է հաղորդակցման գործընթացը հեշտացնելու և հակամարտահարույց իրավիճակները կանխելու համար (Lakoff 1990: 34): Այլ կերպ ասած՝ ըստ Ռ. Լակոֆի՝ քաղաքավարությունը կարելի է դիտել որպես հաղորդակցական իրադրության տեսակ, որը զերծ է ցանկացած հակամարտահարույց տարրերից, որտեղ իրենց հաղորդակցական նպատակին հասնելու համար խոսակիցներն ունակ են ներդաշնակություն պահպանելու՝ կիրառելով քաղաքավար խոսքի մարտավարություն: Վերջինս դիտվում է որ-

պէս առանց հակամարտության, ներդաշնակ հաղորդակցական իրադրությանը նպաստող գործոն, և առաջադրվում են մարտավարական մի շարք հնարներ՝ հեռավորություն, հարգանք, բարյացակամություն, որոնք կիրառելի են միջանձնյա փոխհարաբերություններում (Lakoff 1990:35):

Ինչպէս տեսնում ենք, քաղաքավարությունը նաև լեզվական քաղաքականություն է, որի նպատակն է խոսքն իրարմ գերծ պահել մարդու սոցիալ-հոգեբանական էությանը բնորոշ բացասական վարքագծի դրսևորումներից: Այս դեպքում ևս կարող ենք եզրակացնել, որ քննադատման պերլոկուտիվ ակտը քաղաքավարի խոսքի սկզբունքները խախտող խոսքային դրսևորում է և նպաստում է կոնֆլիկտային հաղորդակցական իրադրության ձևավորմանը:

Անդրադառնանք քաղաքավարության մի այլ՝ Ջ. Լիչի սկզբունքին: Ջ. Լիչը նույնպէս լեզվական քաղաքավարությունը դիտում է որպէս հակամարտահարույց իրավիճակներից խուսափելու միջոց: Ինչպէս և Ռ. Լակոֆը, նա, հիմք ընդունելով Փ. Գրայսի համագործակցության սկզբունքը, առաջադրում է **քաղաքավարության իր սկզբունքը**, որը ներառում է նրբագացության, համեստության համաձայնության, համակրանքի, վեհանձնության կարգախոսները (Leech 1983): Ըստ որում, հետաքրքիրն այն է, որ սույն տեսության համաձայն՝ քաղաքավարության սկզբունքի գործառույթը հասարակական հավասարակշռությունը պահպանելն է: Դրան հակառակ՝ առաջադրվում է **հեզմանքի սկզբունքը**, որը խոսողին թույլ է տալիս, քաղաքավարի ձևանալով, անքաղաքավարի լինել: Այսինքն՝ ներակայման շնորհիվ լսողն ընկալում է իրեն անուղակիորեն հասցեագրված վիրավորական արտահայտությունը: Հետևյալ օրինակով լուսաբանենք **հեզմանքի սկզբունքի** կիրառումը քննադատման պերլոկուտիվ ակտ կատարելու համար: Արտաբերելով հարցական ասույթ՝ Նոր-

մանն իրագործում է անուղղակի հանդիմանության խոսքային ակտ և քննադատում Թոմին՝ հումորի զգացում չունենալու համար “*Did you get that, Tom?*”:

NORMAN: I liked that. Subtle foreign joke. Did you get that, Tom?

TOM: Yes, I think so.

NORMAN: *Thought it might have been above your head.*

A. N. C., 69

Նորմանի բացասական վերաբերմունքը Թոմի նկատմամբ ավելի ակնհայտ է դառնում երկխոսությունը եզրափակող ուղիղ հանդիմանություն արտահայտող խոսքային ակտում՝ “*Thought it might have been above your head.*”: Նորմանն այս անգամ բացահայտորեն կերպով է նշում Թոմի՝ հումորի զգացումից զուրկ լինելը, ինչն էլ նրան քննադատելու առիթ է:

Միջանձնյա փոխհարաբերություններում դրսևորվող քննադատական վերաբերմունքի սոցիալ-հոգեբանական նախադրյալներից եզրակացնում ենք, որ բացասական նրբերանգներ պարունակող պերլոկուտիվ իմաստային դաշտի տարատեսակներից մեկը՝ քննադատումը, պետք է ուսումնասիրվի նաև սոցիալ-հոգեբանական տեսանկյունից: Փաստական նյութի քննությունը մեզ թույլ է տալիս եզրակացնել, որ քննադատումը կարող է արտահայտվել այնպիսի խոսքային միավորների միջոցով, ինչպիսիք են՝ անհամաձայնությունը, դժգոհությունը, մեղադրանքը, կշտամբանքը և այլն: Ինչպես տեսանք, լայն է այն գործոնների շրջանակը, որոնք դրդում են խոսակիցներին քննադատական վարքագիծ դրսևորել, հետևաբար քննադատական նրբերանգներ պարունակող հաղորդակցական իրադրությունները պետք է դիտարկել նաև սոցիալական հոգեբանության, կոնֆլիկտաբանության, դիսկուրսի հոգեբանության տեսանկյունից:

Ընդամին, կարելի է եզրակացնել, որ քննադատական վերաբերմունք արտահայտելիս հակամարտահարույց իրավիճակներից խուսափելու համար խոսակիցները պետք է հաշվի առնեն լեզվական քաղաքավարության կարգախոսները, քանի որ սույն կարգախոսների անտեսումը կարող է հանգեցնել հաղորդակցական բախման:

Քննադատական վերաբերմունքի արտահայտումն ասույթի իլլոկուտիվ մակարդակում

Ինչպես արդեն նշել ենք, մենք քննադատումը դիտում ենք որպես խոսքային ակտի իմաստային դաշտի պերլոկուտիվ ոլորտի, այսինքն՝ խոսընկերոջ վրա ներգործելու տարատեսակ, որին բնորոշ են բացասական իմաստային նրբերանգներ՝ քննադատական ներազդում: Հաղորդակցման ժամանակ մասնակիցներից մեկը քննադատում է դիմացինին, քանզի վերջինս դրսևորել է տվյալ հասարակության մեջ ընդունված նորմին չհամապատասխանող վարքագիծ: Խոսքում բացասական վերաբերմունքը կարող է արտահայտվել տարբեր կերպ՝ խոսքային ակտի լոկուտիվ, իլլոկուտիվ և պերլոկուտիվ մակարդակներում: Մեր ուսումնասիրությունների արդյունքում կարելի է ասել, որ խոսողը քննադատություն է իրականացնում՝ կիրառելով այնպիսի խոսքային ակտեր, որոնց իլլոկուտիվ իմաստն արդեն ինքնին բացասական է: Քննելով բացասական իմաստային նրբերանգներ պարունակող խոսքային ակտերը՝ հարկ է նշել, որ արտահայտչական խոսքային ակտերի դասին պատկանող հանդիմանությունը առավել հաճախ է խոսողի կողմից կիրառվում քննադատում իրականացնելու նպատակով: Այսինքն՝ իրագործելով հանդիմանություն արտահայտող խոսքային ակտ՝ խոսողը քննադատում է դիմացինին հասարակական նորմի տեսանկյունից անընդունելի վարքագիծ

դրսևորելու համար:

Փորձելով նկարագրել հանդիմանությունն արտահայտող լեզվական միջոցներն անգլերեն խոսքում՝ հարկ է նշել, որ գոյություն ունեն կոնկրետ շարահյուսական կառույցներ, որոնք կիրառվում են հանդիմանության խոսքային ակտ իրագործելու նպատակով: Այսպես, եղանակավորող բայի պերֆեկտային ձև (*should, might, ought+perfect infinitive*) պարունակող ասույթով ուղիղ հանդիմանություն արտահայտող խոսքային ակտ է կազմվում: Ուղիղ հանդիմանությունն արտահայտվում է նաև ըղձական եղանակով դրված բայով: Հետևյալ երկխոսական միավորում հանդիմանության անուղղակի և ուղիղ խոսքային ակտեր կիրառելով՝ խոսընկերներն իրենց բացասական վերաբերմունքն են արտահայտում երրորդ անձի նկատմամբ, որը ներկա չէ տվյալ հաղորդակցմանը:

NORMAN: It's like an old clothes shop upstairs.

SARAH: *Annie should have cleared it out. There's her father's clothes still in the wardrobe. There'll be moths.*

A. N. C., 59

Այսպես, քննելով Նորմանի ասույթի իլլոկուտիվ իմաստը՝ տեսնում ենք, որ սույն հաստատական ասույթով նա ոչ թե հաստատում է դրա ստորոգման իմաստի իսկությունը, այլ անուղղակի կերպով հանդիմանում է տանտիրոջը՝ Էնիին՝ սենյակում հին և անպետք իրեր պահելու համար. “*It's like an old clothes shop upstairs*”: Համաձայնելով Նորմանի հետ՝ Սառան նույնպես քննադատում է Էնիին, որովհետև եթե նա սենյակը հին իրերից մաքրած լիներ, ապա այնտեղ ցեց չէր հայտնվի: Նրա կատարած քննադատական ներազդումն իրագործվում է ուղիղ հանդիմանություն արտահայտող խոսքային ակտով. “*Annie should have cleared it out. There's her father's clothes still in the wardrobe. There'll be moths.*”:

Հետևյալ օրինակը նույնպես պարունակում է ուղիղ հանդիմանության նմուշ:

"He took me-well, so he took me. But he shouldn't have let you down. Especially since I gave it to him over and above what I lent him personally. Even if he was in bad shape that's too much."

S. B. A. M., 211-12

Հանդիմանությունն արտահայտվում է *should+perfect infinitive* քերականական կաղապարով, որով քննադատական վերաբերմունքի է արժանանում անցյալում կատարված արարք՝ *"But he shouldn't have let you down."*: Սրան հետևում են մեղադրանք արտահայտող անուղղակի խոսքային ակտեր, որոնց միջոցով խոսողն իր խիստ բացասական վերաբերմունքն է արտահայտում հաղորդակցմանը չմասնակցող անհատի նկատմամբ, որը խաբել է խոսողին և իր եղբորը. *"Especially since I gave it to him over and above what I lent him personally. Even if he was in bad shape that's too much."*:

Հետևյալ երկխոսական միավորում խոսրնկերները տարբեր հասարակական դիրք են գրավում, ինչը չի խանգարում քննադատական ներագրում իրագործելու:

GINGER: I knowed it. *Should have got rid on him for sure, Spens.*

SPENS: We have got rid on him, haven't we?

GINGER: You got it against me, Spens, you done it.

To hinder all on us; and to hinder me.

N.E. D. 7., 112

Չնայած այն փաստին, որ Սփենսն իր վերադասն է, Ջինջըրն ուղիղ հանդիմանության խոսքային ակտով է արտահայտում իր բացասական վերաբերմունքը նրա նկատմամբ. *"Should have got rid on him for sure, Spens."* Ջինջըրը քննադատում է Սփենսին այն

բանի համար, որ նա ժամանակին չի հրաժարվել անարժան աշխատողից: Ի պատասխան իրեն ուղղված հանդիմանության՝ Սփենսը նշում է, որ ինքն արդեն աշխատանքից ազատելու որոշում կայացրել է, ինչը սակայն չի գոհացնում Ջինջըրին. նա շարունակում է քննադատական ներազդումը և մեղադրանքի անուղղակի խոսքային ակտեր է կազմում: Ջինջըրի համոզմամբ Սփենսը դիտմամբ է աշխատանքի ընդունել նման մարդու, որպեսզի խաթարի իր և իր գործընկերների աշխատանքը. “*You got it against me, Spens, you done it. To hinder all on us; and to hinder me.*”:

Հետևյալ երկխոսական միավորի մասնակիցները եղբայրներ են, որոնք տարբեր հայացքներ ունեն կյանքի նկատմամբ և միմյանց թշնամաբար են վերաբերվում:

VICTOR (with incredulous laugh): *Who the hell was supposed to keep him alive, Walter?*

WALTER (with a strange fear, more than anger):

Why did anybody have to. He wasn't sick. He was perfectly fit to go to work.

VICTOR: *Work? In 1936? With no skill, no money?*

WALTER (outburst): Then he *could have gone* on welfare! *Who was he, some exiled royalty? What did a hundred and fifty million other people do in 1936?*

B. A. P., 7

Հաղորդակցման սկզբում Վիկտորը հարձակվողական դիրք է գրավում եղբոր նկատմամբ, քանզի վերջինս լքել է իրենց հորը, և ինքը ստիպված էր միայնակ հոգ տանել նրա մասին: Դիսկուրսի վերոնշյալ հատվածում Վիկտորը ծիծաղում է, որպեսզի առավել վառ արտահայտի իրեն համակած բացասական զգացմունքները եղբոր նկատմամբ, ինչին հետևում է անուղղակի մեղադրանք ար-

տահայտող հետևյալ հարցական ասույթը՝ “*Who the hell was supposed to keep him alive, Walter?*”: Վիկտորի բացասական վերաբերմունքը եղբոր նկատմամբ ներասույթային մակարդակում արտահայտված է *the hell* սաստկական բառի⁷ միջոցով: Ուոլթերը, սակայն, չի ընդունում իրեն ուղղված մեղադրանքը և իր հերթին քննադատում է հորը, քանի որ վերջինս չի փորձել աշխատանք գտնել: Վիկտորը չի համաձայնում եղբոր հետ՝ նշելով, որ այդ տնտեսական պայմաններում անգամ կոնկրետ մասնագիտություն ունեցող մարդիկ էին գործազուրկ, և իրենց սնանկացած հոր համար անհնար էր աշխատանք գտնել այդ ժամանակ. “*Work? In 1936? With no skill, no money?*”: Ուոլթերն այստեղ իր անհամաձայնությունն արտահայտում է ուղիղ հանդիմանություն արտահայտող հետևյալ ասույթով՝ “*Then he could have gone on welfare!*”՝ քննադատելով հորն այն բանի համար, որ նա չի բավարարվել գործազուրկներին տրվող սոցիալական նպաստով: Հատկանշական է, որ Ուոլթերին համակած խիստ բացասական զգացմունքների մասին վկայում են հեղինակի նշագրումը՝ պոռթկում (*outburst*), ինչպես նաև բացականչական նշանի կիրառումը: Հանդիմանությանը հետևում է անուղղակի մեղադրանք արտահայտող հարցական ասույթների շարք. “*Who was he, some exiled royalty? What did a hundred and fifty million other people do in 1936?*”, որոնց միջոցով Ուոլթերը կրկին քննադատում է հորը իրավիճակին չհարմարվելու համար:

Հետևյալ երկխոսական միավորում տեղի է ունենում վիճաբանություն մոր և որդիների միջև:

LINDA: You're a pair of animals! Not one, not another living soul *would have had the cruelty to walk out on the man in a restaurant!*

BIFF (*not looking at her*): Is that what he said?

LINDA: He didn't have to say anything. *He was so*

humiliated he nearly limped when he came in.

M. D. O. A. S., 93

Մայրը թշնամաբար է տրամադրված որդիների նկատմամբ, որովհետև նրանք միայնակ են թողել իրենց հորը ռեստորանում և ցավ պատճառել նրան: Արտաբերելով դատապարտում և ուղիղ հանդիմանություն պարունակող հետևյալ ասույթների շարքը՝ Լինդան իր բացասական վերաբերմունքն է արտահայտում որդիների նկատմամբ. *“You’re a pair of animals! Not one, not another living soul would have had the cruelty to walk out on the man in a restaurant!”*: Դիսկուրսի սույն հատվածում ուղիղ հանդիմանությունն արտահայտված է *“would have had the cruelty”* ըղձական եղանակով կազմված բայ հանգույց ունեցող բաղադրյալ ստորոցայի միջոցով: Բիֆը կարծես թե ընդունում է իրեն ուղղված հանդիմանությունը, ինչի մասին վկայում է հեղինակի կողմից փակագծերում տրված (*not looking at her*) նշագրումը: Պարզ է, որ նա խուսափում է նայել մոր աչքերին, որովհետև իրեն ինչ-որ չափով մեղավոր է զգում: Լինդան շարունակում է հանդիմանել որդիներին և արտաբերելով հաստատական ասույթը՝ *“He was so humiliated he nearly limped when he came in”* նա անուղղակի մեղադրանք է արտահայտում՝ քննադատելով որդիներին՝ իրենց հորը ստորացնելու և ծանր հոգեկան հարված հասցնելու համար:

Հետևյալ հակընդդեմ երկխոսական միավորում Ջորջը հանդիմանում է իր կնոջը՝ Մարթային, որը, ըստ Ջորջի, միշտ տհաճ անակնկալներ է իրեն մատուցում:

*George: I wish you'd tell me about something
sometime. ... I wish you'd stop springing things on
me all the time.*

Martha: I don't spring things on you all the time.

E. A. W. I. A. O. V. W. 11

Ջորջի ուղիղ հանդիմանությունն արտահայտված է ըղձա-

կան եղանակով դրված “*wish you'd tell*” բայական կառույցի միջոցով: Մարթան չի ընդունում իր հասցեին ուղղված քննադատությունը, ինչի մասին վկայում է ի պատասխան հնչող ուղիղ անհամաձայնությունն արտահայտող խոսքային ակտը. “*I don't spring things on you all the time.*”:

Հետևյալ օրինակում Ուիլլին պախարակում է որդուն, քանի որ ձախողելով մաթեմատիկայի քննությունը՝ նա զրկվել է կրթաթոշակ ստանալու հնարավորությունից: WILLY (*furiously*):

If you hadn't flunked you'd've been set by now!

M. D. O. A. S., 80

Սույն խոսքային ակտն ուղիղ հանդիմանություն է, որն արտահայտված է անցյալ ժամանակին վերագրվող անիրական պայման պարունակող բայական կադապարի միջոցով. “*if one hadn't done he would have been*”: Հեղինակի նշագրումը (*furiously*) ցույց է տալիս, որ Ուիլլին խիստ զայրացած է որդու անհաջողության պատճառով:

Հետևյալ երկխոսական միավորում Սոլոմոնը, որը զբաղվում է հնաճ հազվագյուտ իրերի առք ու վաճառքով, փորձում է համաձայնության գալ Էսթերի ամուսնու հետ գնի հարցում:

SOLOMON: Darling, why don't you leave it to the boys?

ESTHER (suppressing an outburst): *I wish you wouldn't order me around, Mr. Solomon! p.*

B. A. P. 7, 124

Արտաբերելով “*Darling, why don't you leave it to the boys?*” հարցական ասույթը՝ Սոլոմոնը անուղղակի հանդիմանում է Էսթերին, քանի որ վերջինս անընդհատ միջամտում է, որի պատճառով հաղորդակցական իրադրության մյուս մասնակիցներին այդպես էլ չի հաջողվում համաձայնության գալ: Էսթերն ըմբռնում է իրեն ուղղված քննադատումը և զսպելով իրեն, որ

չպտռթկա, ինչի մասին վկայում է հեղինակի նշագրումը (suppressing an outburst), հանդիմանում է Սոլոմոնին: Ուղիղ հանդիմանություն արտահայտող խոսքային ակտով՝ “*I wish you wouldn't order me around Mr. Solomon!*”, Էսթերն ինքն է քննադատում Սոլոմոնին, քանի որ նա խախտել է հասարակական նորմը՝ արգելելով Էսթերին իր կարծիքն արտահայտել: Ինչպես տեսանք, ուղիղ հանդիմանությունն արտահայտված է ըղձական եղանակի միջոցով, իսկ խոսողի խիստ հուզված հոգեվիճակի մասին վկայում է նաև բացականչական նշանով տրված առոգանությունը, որով հատկապես արտաբերվում է “*Mr. Solomon!*” կոչականը:

Այժմ դիտարկենք քննադատական վերաբերմունքի դրսևորման նմուշներ անուղղակի հանդիմանություն արտահայտող խոսքային ակտերի միջոցով: Մեր ուսումնասիրությունների վրա հիմնվելով՝ եզրահանգում ենք, որ անուղղակի հանդիմանությունն անգլերեն խոսքում արտահայտվում է հարցական և հաստատական ասույթներով: Ըստ որում, հատկանշական է, որ անուղղակի հանդիմանություն արտահայտող հարցական ասույթներում, ինչպես ուղիղ հանդիմանություն արտահայտող ակտերում, առկա են եղանակավորող բայեր: Դիտարկենք մի քանի օրինակներ, որտեղ քննադատումն իրականացվում է անուղղակի հանդիմանություն արտահայտող խոսքային ակտերով.

RUTH: *How could you, Norman, how could you do it? Don't you think it was bad enough for me at Christmas to lie there ill in bed? Knowing you were down here playing around with one woman. But two.*

NORMAN: [muttering] I wasn't playing with two.

RUTH: *Why do you do it? Don't you have any feeling for me?*

NORMAN: I don't know, I'm just _ RUTH: Just

what?

NORMAN: I'm just magnetic or something.

RUTH: *You are not magnetic, Norman. Not at all. You are odious. You are deceitful, odious, conceited, self-centered, selfish, inconsiderate and shallow.*

A. N. C., 142

Սույն երկխոսական միավորում Ռութը քննադատում է ամուսնուն նրա անպարկեշտ վարքի համար: Խոսողի բացասական դիրքորոշումն արտահայտվում է անուղղակի հանդիմանությամբ՝ հարցական ասույթների միջոցով. *“How could you, Norman, how could you do it? Don't you think it was bad enough for me at Christmas to lie there ill in bed?”*: Հանդիմանությանը հետևում է մեղադրանք, որով Ռութը պախարակում է ամուսնուն՝ երկու տարբեր կանանց հետ իրեն դավաճանելու համար. *“Knowing you were down here playing around with one woman. But two.”*: Նորմանը հասկանում է իրեն ուղղված քննադատության դրդապատճառը և փորձում է մեղմել լարվածությունը, խուսանավել, ինչի մասին վկայում է հեղինակի նշագրումը (muttering): Իսկ Ռութը շարունակում է քննադատական ներագրումը ամուսնու վրա՝ նրան մեղադրելով սխալ պահվածքի, անտարբերության համար: *“Why do you do it? Don't you have any feeling for me?”* հարցական ասույթներն անուղղակի հանդիմանություն են արտահայտում: Նորմանը դարձյալ չի հակադարձում Ռութի քննադատման պերլոկուտիվ ազդեցությանը, քանզի նա իրեն մեղավոր է զգում և չի ուզում սրել իրենց փոխհարաբերությունները: Մի պահ նա փորձում է կասկածի տակ դնել իրեն ուղղված քննադատման արդարացիությունը, սակայն խոսքն ընդհատվում է. *“I don't know, I'm just.”*: Ռութը զարգացնում է իր բացասական դիրքորոշումը՝ այս անգամ հուզարտահայտչական խոսքային ակտերի օգնությամբ. *“You are*

odious. You are deceitful, odious, conceited, self-centered, selfish, inconsiderate and shallow.”։ Ինչպէս տեսնում ենք, խոսքաշարի այս մասում խոսողի քննադատական ներագրումը պայմանավորված է խոսընկերոջ անձի նկատմամբ իր բացասական վերաբերմունքով, նրա մարդկային, բարոյական կերպարի մերժողական մեկնաբանությամբ։

EDNA: I left the door open.

MEL: *You-left-the-door-open?*

EDNA: I didn't have a key, how was I going to get back in the house?

MEL: *So you left the door open? In a city with the highest crime rate in the history of the world, you left the door open?*

B. A. P. 7., 83

Կոնֆլիկտային իրադրության ձևավորման դրդապատճառ է դառնում խոսողի հաստատական խոսքային ակտը, որով նա հավաստում է փաստի իսկությունը. “I left the door open.”։ Էդնան, տան դուռը բաց թողնելով, գնացել է գնումների, ինչի արդյունքում տունը գողեր են մտել։ Մելի արտաբերած “*You-left-the-door-open???*” ասույթն անուղղակի հարց է, որի նպատակն է ճշտել նախորդ հատվածում խոսքային ակտի ստորոգման բովանդակության իսկությունը։ Հատկանշական է, որ իր քերականական կադապարով սույն ասույթը հաստատական է, սակայն հարցական նշանի բազմակի կիրառմամբ հեղինակը ակնարկում է, որ դա ունի հարցական ասույթի առոգանություն՝ վեր բարձրացող հնչերանգ։ Անուղղակի հարցը քննադատական ներագրում է իրագործում խոսընկերոջ վրա անթույլատրելի վարքագիծ դրսևորելու պատճառով։ Խոսընկերը հասկանում է իրեն ուղղված քննադատական վերաբերմունքը և փորձում է արդարանալ. “*I didn't have a key, how was I going to get back in the house?*”։ Սույն անուղղակի

խոստովանություն արտահայտող խոսքային ակտում Էդնան, փաստորեն, դրական պատասխան է տալիս իրեն ուղղված հարցադրմանը. նա ընդունում է, որ տնից դուրս գալիս դուռը չի կողպել: Ինչ խոսք, Էդնան բացատրում է իր արարքը, սակայն քանի որ դա անցանկալի հետևանքներ է ունեցել (նրանց տուն գողեր են մտել), Մելը չի ընդունում նրա արդարացումը և շարունակում է քննադատական ներագրումը: Հետաքրքիրն այն է, որ երկխոսության այս մասում Մելի՝ հարցական հնչերանգով արտահայտված ասույթները ոչ թե հարց են, այլ կշտամբանք. նրա հաղորդակցական նպատակը ոչ թե ասույթի ստորոգման իմաստի իսկությունը հաստատելն է, այլ խոսքնկերոջը կատարած արարքի համար նախատելը. *“So you left the door open? In a city with the highest crime rate in the history of the world, you left the door open?”*:

Այժմ անդրադառնանք բողոքի խոսքային ակտի միջոցով կատարվող քննադատական ներագրմանը: Մույն մենագրության երկրորդ գլխի առաջին ենթագլխում մենք արդեն անդրադարձել ենք բողոք արտահայտող խոսքային ակտին՝ վերջինս որակելով խոսողի քննադատական վերաբերմունքի խոսքային դրսևորում: Ինչպես գիտենք, բողոք արտահայտող խոսքային ակտերը նույնպես պատկանում են արտահայտչականների դասին: Ուսումնասիրելով սույն ակտի լեզվական կաղապարը՝ պետք է ասել, որ ուղիղ և անուղղակի դժգոհություն արտահայտող ակտերի տարանջատումը խնդրահարույց է: Փաստ է, որ խոսողի կողմից պերֆորմատիվ բայի կիրառումը հստակորեն պարտադրում է ուղիղ խոսքային ակտի իրագործում: Սակայն խնդիրն այն է, որ որոշ բացասական ներիմաստ ունեցող խոսքային ակտերի դեպքում, ինչպիսին են, օրինակ, հանդիմանությունը, սպառնալիքը, բողոքը, խոսողները շատ հազվադեպ են կիրառում պերֆորմատիվ բայ: Այսպես, խոսքում սովորաբար չեն կիրառվում *“I complain...”*, *“I threaten you...”* կամ *“I reproach you...”* արտակա պերֆորմատիվ-

ները: Եթե հանդիմանության խոսքային ակտը քննարկելիս նշեցինք, որ անզլերենում գոյություն ունեն սույն իլլոկուտիվ իմաստն արտահայտող որոշակի լեզվական կադապարներ, ինչը հեշտացնում է ուղիղ /անուղղակի խոսքային ակտերի տարանջատման խնդիրը, ապա բողոքի դեպքում դժվարությունների ենք հանդիպում: Բողոքելով մարդը դժգոհություն, տրտունջ է արտահայտում իր և իր շրջապատի մարդկանց կացության, վիճակի մասին: Հետևաբար կարծում ենք, որ սույն իլլոկուտիվ ակտում մեծ դեր է խաղում խոսքի *ցուցային* կենտրոնը՝ անձի վերաբերությունը: Հետևաբար խոսքնկերոջն անմիջականորեն ուղղված “you” կամ խոսողի անձը մատնանշող “I” հաստատական ասույթները, որոնք արտահայտում են խոսողի դժգոհությունը, գանգատը, կարելի է որակել որպես ուղիղ բողոք: Դիտենք ուղիղ բողոք պարունակող երկխոսական միավորի նմուշ:

NORMAN: Cheer up, Sarah.

SARAH: And what is there to cheer me up? *I have never been through such a shattering weekend in my life.*

NORMAN: I'm sorry.

A. N. C. 79

Մտան, նշելով, որ ինքը երբեք այդպիսի վատ հանգստյան օրեր չի ունեցել՝ իր բողոքն է արտահայտում ստեղծված իրավիճակի կապակցությամբ. *“I have never been through such a shattering weekend in my life.”*:

Հետևյալ օրինակում Մարթան քննադատական վերաբերմունք է արտահայտում նրա համար, որ խոսքնկերներն իրեն պարտադրում են հիշել մի շարք մարդկանց անուններ, որոնց ընդամենը մեկ անգամ է հանդիպել:

Martha: {By way of irritable explanation} *Well, I can't be expected to remember everything. I meet*

fifteen new teachers and their goddamn wives ...
present company outlawed, of course ... {Honey
nods, smiles sillily} *and I'm supposed to remember*
everything. E.A. W. E. A. W. I. A. O. V.. 63

Մարթայի բացասական զգացմունքներն արտահայտված են “*their goddamn wives*” սաստկական շարույթի միջոցով: Ուղիղ բողոք արտահայտող խոսքային ակտում խոսողի դժգոհությունը ծնվում է իր և շրջապատի ակնկալիքների բախումից. իրենից ակնկալում են մի բան, որ նա ի վիճակի չէ իրականացնելու: Անուղղակի բողոք արտահայտող ասույթներում խոսողի դժգոհությունը, գանգատն ուղղված չեն որևէ կոնկրետ անձի: Խոսողը տրտնջում է իր համար աննպաստ իրավիճակից, և նրա քննադատությունն էլ անորոշ է և ուղղված է մարդկության ընդհանրապես: Դիտարկենք նման օրինակներ.

“People don't understand me Eveline some of the newspaper boys particularly have written some very hard things about me ... why I'm an old newspaperman myself.”

J. D. P. 1919., 314

Խոսողն իր գանգատն արտահայտում է անուղղակի բողոք արտահայտող խոսքային ակտով. “*People don't understand me Eveline some of the newspaper boys particularly have written some very hard things about me.*”, որով նա իր քննադատական վերաբերմունքն է արտահայտում նրա համար, որ որոշ լրագրողներ կանխակալ հողվածներ են գրել իր մասին:

Հետևյալ օրինակում “you” դերանունը ընդհանրական իմաստով է կիրառված ուստի, գանգատն անմիջականորեն ուղղված չէ խոսքակերպի:

JENNY [She hangs up.]: *Once you get her on the phone, you can never get her off. She talks so*

much.

BERNARD: Makes the party go. N. E. D. 7., 172

Ջենին գանգատվում է մի երրորդ անձից նրա շատախոսության պատճառով: “*Once you get her on the phone, you can never get her off. She talks so much.*” ասույթը բողոք արտահայտող անուղղակի խոսքային ակտ է, որտեղ խոսողը քննադատական վերաբերմունք է արտահայտում իր կողմից բացասական գնահատվող վարքագծի հանդեպ: Խոսքնկերոջ արձագանքից պարզվում է, որ նա ընկալել է խոսողի ներազդումը, սակայն համաձայն չէ նրա քննադատական վերաբերմունքին, քանզի ինքը դրանում դրական բան է տեսնում: “*Makes the party go*” հաստատական ասույթում անուղղակիորեն մերժվում է բողոքի, ուստի քննադատման անհրաժեշտությունը:

Հետևյալ օրինակում անուղղակի բողոքն արտահայտված է հարցական ասույթով.

The agent said he was sure they'd be paid all right, because Rosenberg had posted bond, but it would be some time. “*And what the hell do they expect us to do all that time, eat grass?*” J. D. P. 1919., 168

Ջոնի՝ բողոք արտահայտող խոսքային ակտում քննադատվում է աշխատավարձի ուշացման փաստը: “*What the hell*” սաստկական կառույցի կիրառմամբ ուժեղացվում է բողոքի և հետևաբար քննադատման բացասական հուզականությունը:

Հետևյալ օրինակում խոսողի քննադատական վերաբերմունքի շարժառիթը սենյակում տիրող անկարգությունն է:

“Here, fix this stud for me in the back. My mother-in law got this set for me. *Christ! How'm I going to find my dress shoes. All this tissue paper. You can't find anything.*” He said.

S. B. A. O. A. M., 280

Խոսողի անուղղակի բողոքն արտահայտվում է նախ հարցական՝ *“How’m I going to find my dress shoes.”*, այնուհետև՝ հաստատական ասույթներով, որտեղ բացահայտվում է քննադատական ներազդման շարժառիթը. *“All this tissue paper. You can’t find anything.”*:

Հետևյալ օրինակում ուղիղ և անուղղակի բողոք արտահայտող խոսքային ակտերը զուգակցվում են:

“I can’t get a darn thing out of these Sorbonne lectures ... everybody’s too darn restless, I guess ... and I’m sick of hearing what bums Boches are, that’s all the frog profs seem to be able to talk about.” J. D. P. 1919., 324

“I can’t get a darn thing out of these Sorbonne lectures,” “I’m sick of hearing what bums Boches are.” հաստատական ասույթները ուղիղ բողոք են, քանզի խոսողը իր անձի կացության վերաբերյալ է գանգատվում: Խոսողի քննադատական ներազդման շարժառիթը լուսաբանվում է անուղղակի բողոք արտահայտող խոսքային ակտերում՝ *“everybody’s too darn restless, I guess, that’s all the frog profs seem to be able to talk about.”*: Խոսողի բացասական վերաբերմունքը ներասույթային մակարդակում արտահատված է նաև *“too darn, restless, sick, frog profs”* բացասական ներիմաստ պարունակող սաստկական շարույթների միջոցով:

Մեր ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ խոսակցի վրա սուր քննադատությամբ ներազդելու նպատակով խոսքում կիրառվում է նաև արտահայտչական խոսքային ակտերի դասին պատկանող մեկ ուրիշ խոսքային ակտ՝ պախարակումը կամ լուտանքը:

Նշենք, որ սույն խոսքային ակտի իրագործումն ինքնին հասարակական նորմը խախտելու արդյունք է: Սակայն քննելով պախարակում արտահայտող ուղիղ խոսքային ակտերի կիրառ-

ման առանձնահատկությունը ընտանեկան հաղորդակցական իրադրություններում՝ Մ. Լաֆորեստը նշում է, որ նույն ընտանիքի անդամների՝ միմյանց հասցեին պախարակող խոսքային ակտի կիրառումը չի հանգեցնում միջանձնյա փոխհարաբերությունների վերջնական վատթարացման: Ընտանեկան հաղորդակցական իրադրություններում խոսքնկերները խոսքի նման դրսևորումները չեն համարում լեզվական քաղաքավարության նորմերի լուրջ խախտում, և դա բացասաբար չի ազդում նրանց հետագա միջանձնյա հարաբերությունների վրա (Laforest 2002): Դիտարկենք ուղիղ պախարակում արտահայտող խոսքային ակտերի նմուշներ, որոնք դրսևորվում են ընտանեկան հաղորդակցական իրադրություններում: Հետևյալ օրինակում հակամարտողները հարս ու տալ են:

SARAH: *You're a tart and slut.*

ANNIE: *Don't you call me that, you frustrated bitch.*

N. E. D. 7., 141

Մառայի բացասական գնահատականը նրա ամուսնու քրոջ՝ Էնիի անպարկեշտ վարքագծին է վերաբերում: Նա Էնիին թեթևաբարո կին է համարում և պախարակում նրան՝ կիրառելով “*tart*,” “*slut*” վիրավորական բառերը: Պախարակման ուղիղ խոսքային ակտը երկրորդ դեմքին ուղղված հաստատական ասույթ է, որն առանձնանում է առողջաբանությամբ և շեշտով: Դրանով Մառան խիստ քննադատական ներազդեցություն է գործում Էնիի վրա: Ընկալելով իրեն ուղղված քննադատումը՝ Էնին հակադարձում է նախ բացասական հուզական լիցք ունեցող, արգելք արտահայտող խոսքային ակտով. “*Don't you call me that.*”, ապա ուղիղ պախարակում արտահայտող ակտով, որով բացասական գնահատական է տրվում խոսքնկերոջ անձին. “*You frustrated bitch.*”:

Հետևյալ օրինակում հեռախոսագրույցի ժամանակ Միմին խիստ քննադատական ներազդեցություն է գործում իր փեսացուի

վրա նրա սխալ վարքագծի պատճառով:

And to him on the phone she'd say, 'You yellow bastard, can't you call me and tell me why you won't come? Don't give me any of that old crap about working on your thesis! What were you doing on Fifty-seventh Street the other night with those fat goofs when you were supposed to be working on your thesis! Who are they? One of them was an English fairy, I could spot him a mile away. Don't tell me I don't understand. I'm tired of your bullshit, you preacher!'

S. B. A. O. A. M., 242

Միմիի խոսքը լի է բացասական հուզական գնահատական արտահայտող գոեհկարբանություններով՝ *“yellow bastard”, “old crap”, “goofs”, “fairy”, “bullshit”*, որոնց միջոցով նա իր խիստ բացասական վերաբերմունքն է արտահայտում փեսացուի նկատմամբ, քանի որ իրեն այցելելու փոխարեն նա հանդիպել է ընկերներին:

Վերը բերված երկու երկխոսական միավորները ընդհանրական են մեկ առանձնահատկությամբ. հաղորդակցման մասնակիցները միջանձնյա սերտ հարաբերություններ ունեն և օգտագործելով գոեհկարբանություններ պարունակող ասույթներ՝ չեն անհանգստանում անձի հասարակական վարկանիշի մասին:

Փաստական նյութի քննությունը թույլ է տալիս առանձնացնել նաև այնպիսի հաղորդակցական իրադրություններ, որտեղ խոսակիցներից մեկը, որն ավելի բարձր հասարակական դիրք է գրավում, շահարկում է այդ գործոնը և քննադատական ներազդեցություն է գործում խոսընկերոջ վրա պախարակում արտահայտող խոսքային ակտերի միջոցով:

Հետևյալ օրինակում խոսընկերներից երկուսը զինվորականներ են, որոնք, ունենալով կապրալի աստիճան, չարաշահում են

իրենց զինվորական դիրքը և քննադատում մի շարքային զինվորի:

FIRST CORPORAL: *You're a slob, Smiler.*

SECOND CORPORAL: *A nasty piece of work.*

FIRST CORPORAL: *You're no good, lad.*

SECOND CORPORAL: *No good at all. You're an insult.*

FIRST CORPORAL: *Your mother wasted her labor.*

SECOND CORPORAL: *Your father made a mistake, Smiler.* FIRST CORPORAL: *You're a mistake.*

SECOND CORPORAL: *A stupid mistake.*

N.E.D. 7., 56

Սույն երկխոսական միավորում առկա է պախարակում արտահայտող ուղիղ խոսքային ակտերի շարք՝ առանց հակադարձման. *“You're a slob, Smiler. A nasty piece of work. You're no good, lad.”*: Երկու խոսքակերպերի ներազդումն ուղղված է զինվորին, որը, զինվորական կարգապահական նորմերի համաձայն, վերադասին առարկելու իրավունք չունի: Այսինքն՝ նման իրադրության մեջ հայտնված շարքային զինվորը զրկված է ինքն իրեն պաշտպանելու հնարավորությունից: Դիտարկենք ևս մեկ նման օրինակ.

We've never been in Detroit before," I said. "We just arrived in town." "Yeah, where from?"

"Cleveland. We're hitch-hiking."

"You're a sonofabitch liar. You belong to the Foley gang and you been stealing car parts. But we caught up with you. We'll get all you guys."

I said, "But we're not even from Detroit. I'm from Chicago."

Սույն երկխոսությունը տեղի է ունենում ոստիկանատանը, որտեղ ոստիկանը հարցաքննում է բերման ենթարկված անձանց, որոնց կասկածում են տեղի ավագակախմբերի հետ կապ ունենալու մեջ: Ոստիկանը չի հավատում իր հարցին տրված պատասխանի իսկությանը, և քանի որ պաշտոնական դիրքը նրան թույլ է տալիս ուժ գործադրել, նա պախարակում է խոսողին՝ նրան ստախոս անվանելով, այնուհետև կասկած է հայտնում խոսողի անձի իսկության վերաբերյալ և սպառնում հաշվեհարդար տեսնել նրանց հետ. “*We’ll get all you guys.*”: Ինչպես տեսնում ենք, ոստիկանի խոսքահերթը կազմված է երեք խոսքային ակտերից՝ պախարակում, կասկած, սպառնալիք, որոնց պերլոկուտիվ ներազդման իմաստը քննադատումն է: Դա բխում է նրա գործի բնույթից՝ գտնել և պատժել հասարակական կարգը խախտողներին: Խոսքերը հասկանում է իրեն ուղղված քննադատական ներազդումը, ինչի վկայությունը հակադարձող իմաստ արտահայտող “*but*” կապակցող բառն է. “*But we’re not even from Detroit. I’m from Chicago.*”: Տվյալ հաղորդակցական իրադրության մեջ նա ակնհայտորեն անհավասար հասարակական դիրք է գրավում և չի համարձակվում բացահայտ հակադարձել քննադատական ներազդմանն ու ժխտել իր հասցեին արված կասկածի իսկությունը:

Արտահայտչական խոսքային ակտերի դասին պատկանող խոսքային գործողության ևս մի տարատեսակ՝ մեղադրանքը, կիրառվում է քննադատման պերլոկուտիվ ներիմաստի իմաստային տարրեր արտահայտելիս:

Հետևյալ երկխոսական միավորում առկա է սուր քննադատություն, որն իրագործվում է ուղիղ պախարակում և մեղադրանք արտահայտող խոսքային ակտի միջոցով:

He came up to accuse me, and big Moonya
Staplanski, just out of the St Charles Reformatory

and headed for the one at Pontiac, backed him up.

“You little Jew bastard, you hit my brother,” Moonya said. “I never did. I never even saw him before.”

“You took away a nickel from him. How did you buy them biscuits else, you?”

“I got them at home.” S. B. A. O. A. M., 18

Սույն երկխոսական միավորում մեղադրանք արտահայտող ուղիղ խոսքային ակտի միջոցով խոսողը քննադատական ներազդում է գործում մյուսի վրա. *“You took away a nickel from him.”*: Մունյայի խիստ բացասական դիրքորոշման մասին է վկայում նաև *“You little Jew bastard, you hit my brother”* ուղիղ պախարակում արտահայտող խոսքային ակտը, որը հայիոյական արտահայտություն է պարունակում այն անձի հասցեին, որը հարվածել իր եղբորը: Օգին, սակայն, հերքում է իրեն ուղղված մեղադրանքը և դիմակայում իր հասցեին արված քննադատական ներազդմանը. *“I never did. I never even saw him before. I got them at home.”*:

Մեղադրանք արտահայտող անուղղակի խոսքային ակտերը կարող են հաստատական ասույթներ լինել, և այդ դեպքում քննադատական ներազդումը ավելի թույլ է և քողարկված:

Because you know it's not the city salary the cops live on now, not with all the syndicate money there is to pick up. There isn't a single bootleg alky truck that goes a mile without being convoyed by a squad car. So they don't care what they do. I've heard of them almost killing guys who didn't know enough English to answer their questions.

S. B. A. O. A. M., 97

Դիսկուրսի այս հատվածում խոսողի քննադատական վերաբերմունքն իլլոկուտիվ մակարդակում արտահայտված է անուղ-

դակի մեղադրանք արտահայտող խոսքային ակտերով: Արտաբերելով հետևյալ հաստատական ասույթը՝ *“Because you know it's not the city salary the cops live on now, not with all the syndicate money there is to pick up.”*՝ խոսողը անուղղակիորեն մեղադրում է ոստիկաններին արհմիության գումարները գրպանելու համար: Ոստիկանների նկատմամբ խոսողի բացասական դիրքորոշումը կրկին արտահայտված է անուղղակի մեղադրանք պարունակող հետևյալ հաստատական ասույթների միջոցով. *“There isn't a single bootleg alky truck that goes a mile without being convoyed by a squad car. So they don't care what they do.”*: Արտաբերելով վերոնշյալ ասույթները՝ խոսողը մեղադրում է ոստիկաններին մաքսանենգների հետ համագործակցելու մեջ:

Փաստական նյութի քննությունը մեզ թույլ է տալիս եզրահանգել, որ քննադատումը կարող է արտահայտվել նաև այնպիսի խոսքային գործողությունների միջոցով, որոնք ի սկզբանե բացասական իլլոկուտիվ ներիմաստ չեն պարունակում, այլ այդպիսին են դառնում կոնկրետ հաղորդակցական իրադրությունում: Այսպես, քննադատման պերլոկուտիվ ազդեցություն կարելի է կատարել նաև հրաման, խնդրանք, զգուշացում արտահայտող դիրեկտիվ խոսքային ակտերի միջոցով: Օրինակ՝ հրաման արտահայտող խոսքային ակտով խոսողը կարող է դիմացինին հրահանգել դադարեցնել որևէ հասարակական նորմ խախտող գործողություն կամ պահպանել ընդունված հասարակական նորմը: Հետաքրքիրն այն է, որ հրամայական հաղորդակցական գործողություն արտահայտող լեզվական միջոցների քննությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հաղորդակցական նպատակն իրագործելիս խոսողները սովորաբար չեն արտաբերում “order” պերֆորմատիվ բայ պարունակող ասույթներ, ինչ, օրինակ, “I order you to leave the room”: Սակայն հրաման արտահայտող խոսքային ակտերի քերականական կադապարը համապատասխանում է հրա-

մայական նախադասություններին: Հետևյալ երկխոսական միավորներում խոսողի քննադատական ներազդումն արտահայտված է հրաման արտահայտող ուղիղ խոսքային ակտերի միջոցով.

PIP: You called me to see you, sir.

WING COMMANDER: *Take your hat off*, blast you, Thompson, *take it off* lad, in front of an officer.

N.E.D. 7, 57

Ուղիղ հրաման արտահայտող ասույթով “*Take your hat off.*” խոսողն իր քննադատական վերաբերմունքն է արտահայտում Փիփի վարքագծի վերաբերյալ, որը բանակում է ծառայում, սակայն արհամարհում է այնտեղ հաստատված կանոնակարգը և բարձրաստիճան զինվորականի ներկայությամբ գլխարկը չի հանում: Փիփը, այսպիսով, խախտում է տվյալ իրադրային, հարատեքստի ծիսական արարողակարգը:

Հատկանշական է, որ բարձրաստիճան զինվորականը մեկ խոսքահերթի շրջանակներում կրկնում է հրաման արտահայտող ասույթը, ինչը պայմանավորված է նրա հոգեվիճակի բարձր հուզականությամբ:

Հետևյալ օրինակում խոսքը ներկայացնում է մեկը խախտում է հասարակական նորմը՝ անպարկեշտ բառեր կիրառելով երեխայի ներկայությամբ, և նրանց միջև կոնֆլիկտ է առաջանում:

“Oh, f – Oliver”

“*Please, Bolingbroke, don't talk that way in front of the kid.*” “*Don't call me Bolingbroke any more.*”

S. B. A. O. A. M., 461

Իրականում “*Please, Bolingbroke, don't talk that way in front of the kid*” հրամայական ասույթի իլլոկուտիվ գործառույթը խնդրանք է, սակայն այն պարունակում է խոսքը ներքո վարքը բացասական գնահատող ներիմաստ՝ քննադատական ներազդում:

Խոսողը փորձում է փոխել խոսընկերոջ վարքագիծը՝ այն համարելով անթույլատրելի տվյալ հաղորդակցական իրադրության մեջ: *“Please բառի կիրառմամբ խոսողը անկասկած փորձում է մեղմացնել քննադատական ներագրման բացասական նրբերանգները: Սակայն խոսընկերը բորբոքվում է, և ինքն էլ է արձագանքում հրամայական ասույթով՝ քննադատելով զրուցակցին իրեն մականունով դիմելու համար. “Don’t call me Bolingbroke any more”:*

Հետևյալ օրինակում դարձյալ առկա է հասարակական խախտված նորմը կարգավորելու միտում:

“Henry don’t strike the child,” and they stood hissing at one another in low voices behind the portieres.

J.D. P. 1919., 93

Ամուսնուն դիմելով հրաման արտահայտող իլլոկուտիվ ակտով՝ կինը քննադատում է նրան՝ երեխային հարվածելու համար: Տեքստում առկա հարալեզվական միջոցների նկարագրությունը (*hissing at one another*) թույլ է տալիս եզրակացնել, որ խոսակիցները միմյանց նկատմամբ խիստ բացասաբար են տրամադրված: Նույնը կարելի է ասել նաև հետևյալ երկխոսության մասին.

MRS. KIMBALL: I’ll tell them what you did do,
you great flash nig-nog! GOLDIE: *Don’t you talk like that, lady_*

B. A. P. 7., 35

Երկխոսական միավորը սկսվում է նախագրուշացում արտահայտող խոսքային ակտով, որին հետևում է պախարակում: Պախարակող խոսքային ակտում տիկին Քիմբրլի խոսընկերոջ ռասայական պատկանելիությունը բացասական երանգավորմամբ շեշտող արտահայտությունը (*you great flash nig-nog*) դրդում է խոսակցին դիմակայելու նման վարքագծի դրսևորմանը: Գուդիի

ուղիղ հրամանում “*Don't you talk like that, lady* _” ռասիստական վարքագիծն արգելող քննադատական ներազդում է արտահայտվում: Հրամայական ասույթում կիրառված *you* անձնական դերանունը, ինչպես նաև գծիկի օգնությամբ նշագրված անավարտ խոսքի առկայությունը վկայում են խոսողին համակած խիստ բացասական զգացմունքների մասին:

Հետևյալ օրինակում դարձյալ քննադատական ներազդում է իրագործվում ուղիղ հրամանի օգնությամբ:

MEL (gnashing his teeth): *Sons of bitches.*

EDNA: *Stop swearing, the police will be here any minute.*

T. A. P. 7., 82

Իմանալով, որ իր տունը կողոպտել են՝ Մելն իրեն համակած բացասական հույզերն է արտահայտում՝ հայիոյելով գողերին. “*Sons of bitches.*”: Հրաման արտահայտող “*Stop swearing.*” խոսքային ակտով Էդնան քննադատական ներազդեցություն է գործում, քանզի հայիոյելով՝ նա խախտում է հասարակական նորմը:

Դիրեկտիվ խոսքային ակտերի դասին պատկանող նախազգուշացումների իլլոկուտիվ իմաստը նույնպես ակնհայտ բացասական նրբերանգ չի պարունակում: Ինքնըստիներքյան սույն խոսքային ակտն ի սկզբանե պերլոկուտիվ քննադատման ներազդեցություն կատարելու գործառույթ չի կատարում: Ինչևէ, փաստական նյութի քննությունը թույլ է տալիս եզրակացնել, որ որոշակի խոսքային իրադրություններում վերոնշյալ խոսքային ակտերը նույնպես կարող են քննադատական ներազդում կատարել: Այսպես, իրագործելով նախազգուշացման խոսքային ակտ՝ խոսողն իր բացասական դիրքորոշումն է արտահայտում խոսակցի նկատմամբ, որովհետև, ըստ խոսողի, նա քննադատման արժանի վարքագիծ է դրսևորում: Նախազգուշացման ակտ իրագործելով՝ խոսողը փորձում է խոսընկերոջը ետ պահել նման վարքագծից:

Նախագգուշացում արտահայտող ուղիղ խոսքային ակտը ձևակերպվում է “I warn you” պերֆորմատիվ ասույթով կամ հրամայական նախադասությամբ: Սույն խոսքային ակտը հրամանից տարբերվում է հաղորդակցման հաջողության, մասնավորապես ստորոգման իմաստի և հիմնական նախապայմաններով: Հրամանի դեպքում խոսողը դրդում է խոսընկերոջը կատարել կամ չկատարել իր մտադրությունը, որը առաջին հերթին բխում է խոսողի շահերից: Նախագգուշացման խոսքային ակտի իլլուկուտիվ իմաստային դաշտի նրբություններից մեկն այն է, որ խոսընկերոջ կողմից որևէ գործողություն կատարելու վրա արգելք է դրվում՝ հանուն նրա շահերի: Ըստ որում, խոսընկերոջ շահերի պաշտպանի դերում հանդես է գալիս խոսողը, որի հեղինակությունը խոսընկերը կարող է կասկածի տակ դնել, ինչպես հետևյալ օրինակում.

George: *I warn you ... don't encourage her.*

Martha: He warns you ... don't encourage me.

Nick: I heard him ... tell me more.

E. A. W. I. A. O. V. W., 133

Նախագգուշացում արտահայտող ուղիղ խոսքային ակտերով Ջորջը նպատակ ունի հետ պահելու Նիքին մի գործողությունից, որն առաջին հերթին իրեն է անցանկալի. “*I warn you ... don't encourage her.*”: Դրանով Ջորջը քննադատում է Նիքին, որ նա խրախուսում է իր կնոջը՝ Մարթային: Ջորջի գգուշացումը անմիջական արձագանք չի ստանում, քանի որ հաղորդակցման մյուս երկու մասնակիցները իրար հետ են շփվում, սակայն Նիքի խոսքից պարզ է դառնում, որ նա հասկացել է իրեն ուղղված քննադատական ներագրումը և չի ընդունում այն՝ “*I heard him ... tell me more.*”:

Հետևյալ օրինակում սերժանտ Հիլը քննադատական ներագրություն է գործում շարքային զինվորների վրա:

HILL: I shan't say anything now because you're home in two days – but when you come back it's rifle drill and bayonet practice – and that's tough, *and if you slack – I'm warning you-no more easy life*, it'll be back to normal for you all.

N. E. D. 7., 47

Հիլը զգուշացնում է զինվորներին, որ եթե շարունակեն գլուխ պահել, ապա նրանց դժվար կյանք է սպասվում՝ *“and if you slack – I'm warning you-no more easy life.”* Պետք է ասել, որ թեև սույն խոսքային ակտը գործողություն կատարել/չկատարելու նախապայման է արտահայտում, սակայն խոսողի հաղորդակցական նպատակը ոչ թե սպառնալիքն է, այլ նախազգուշացումը, քանի որ գործողություն կատարողը ոչ թե խոսողն է (որի դեպքում սպառնալիք է իրագործվում), այլ խոսընկերները, տվյալ դեպքում՝ զինվորները: Դիտարկենք նաև օրինակներ, որտեղ խոսողի քննադատական ներազդումը խոսընկերոջ նկատմամբ իրագործվում է նախազգուշացման անուղղակի իլլոկուտիվ ակտերի միջոցով:

“Remember,” he warned me again as he got to the ground, “you're foolish to go. You're just asking for it.”

S. B. A. O. A. M. 471

Սույն երկխոսությունը սկսվում է նախազգուշացմամբ՝ *“You're foolish to go. You're just asking for it,”* որի խոսքային ակտերի իլլոկուտիվ իմաստը ոչ թե հաստատական ասույթի ստորոգման իմաստի իսկության հաստատումն է, այլ նախազգուշացումը: Խոսողը դրդում է խոսընկերոջը հետ կանգնել որոշակի գործողություն կատարելու մտքից, քանի որ, իր կարծիքով, այդ արարքը նրան կարող է անախորժություններ պատճառել: Խոսողի քննադատական ներազդումը խոսակցի նկատմամբ արտահայտված է նաև նրա անձի բացասական գնահատականով՝ *“foolish”*

սաստկական բառի միջոցով. “*You're foolish to go.*”:

Խոսողի քննադատական վերաբերմունքը կարող է արտահայտվել նաև հանձնառական խոսքային ակտերի դասին պատկանող սպառնալիքների միջոցով: Սպառնալիք արտահայտող խոսքային ակտերը պարունակում են բացասական նրբերանգներ, քանի որ իրագործելով սպառնալիքի խոսքային ակտ՝ խոսողը դիմացինին որևէ կերպ վնասելու պարտավորվածություն է վերցնում իր վրա: Այսինքն՝ իրագործելով սպառնալիք արտահայտող իլլուկուտիվ ակտ՝ խոսողը դիմացինի դրսևորած վարքագիծը որակում է անթույլատրելի և փորձում է դրա առաջն առնել՝ ահաբեկելով նրան:

Սպառնալիքը բացասական ներիմաստ պարունակող այն խոսքային ակտերից է, որը պերֆորմատիվ ձևով չի դրսևորվում խոսքում: Ըստ այդմ՝ ուղիղ սպառնալիք արտահայտող խոսքային ակտերը կազմվում են պայմանական նախադասությունների միջոցով, ինչպես, օրինակ, հետևյալ երկխոսական միավորում.

SMILER: Go up to him and say "with the compliments of our hut, sir". WILFE: *I'll pour a bottle on you if you don't leave off.*

N. E. D. 7., 36

Ուիլֆին հոգնեցնում է Սմայլերի ծաղրանքը, և նա փորձում է դիմակայել դրան սպառնալու միջոցով. “*I'll pour a bottle on you if you don't leave off*”:

Հետևյալ օրինակում խոսողի քննադատական ներազդումն ուղղված է դստեր փեսացուին: Հայրը սպառնում է զրկել աղջկան ժառանգությունից, եթե նա ամուսնանա իր համար անընդունելի մարդու հետ:

*"No dough if she marries you!" he said. S. B. A. O.
A. M. 328*

Հետևյալ օրինակում առկա է կոնֆլիկտային իրավիճակ, ինչի

պատճառով խոսքերնեղբից մեկը, որն ավելի բարձր հասարակական դիրք է զբավում, քննադատական ներազդում է գործում մյուսի վրա:

FLIGHT SERGEANT: *When is this place going to be straight ?*

ANDREW: Pardon, Sergeant? FLIGHT SERGEANT: Flight Sergeant. ANDREW: Sorry, Flight Sergeant.

FLIGHT SERGEANT: When is this place going to be straight, I asked? ANDREW: I just straightened it, Serg – or Flight – or Flight Sergeant.

FLIGHT SERGEANT: You what? *If I come in here tomorrow and I can't eat my dinner off that floor I'll have you all outside on fatigues till midnight. Have you got that?*

N.E.D. 7., 30

Արտաբերելով անուղղակի հանդիմանություն արտահայտող խոսքային ակտ՝ սերժանտը քննադատում է գորամասի զինվորներին, քանի որ նրանք չեն հետևում մաքրությանը. “*When is this place going to be straight?*”: Էնդրյուն հասկանում է իրեն ուղղված քննադատական ներազդումը, սակայն չի ուզում ընդունել այն՝ պատճառաբանելով, որ հենց նոր է մաքրել գորանոցը: Շարքայինի վարքագիծը խիստ զայրացնում է սերժանտին, և վերջինս իր ընդգծված քննադատական դիրքորոշումն արտահայտում է ուղիղ սպառնալիք արտահայտող խոսքային ակտով. “*If I come in here tomorrow and I can't eat my dinner off that floor I'll have you all outside on fatigues till midnight.*”:

Անփոփելով կարող ենք նշել, որ պերլոկուտիվ ակտ, տվյալ դեպքում՝ քննադատման պերլոկուտիվ ազդեցություն իրագործելու համար որոշակի խոսքային պայմանադրություններ կան: Քա-

նի որ քննադատումը ներառված է խոսողի հաղորդակցական նպատակի մեջ, ապա սույն պերլոկուտիվ ակտը նա իրացնում է խոսքային ակտերի որոշակի իմաստային տարատեսակների օգնությամբ՝ հանդիմանություն, բողոք, սպառնալիք, հրաման, պախարակում, մեղադրանք և այլն:

Մա նշանակում է, որ պերլոկուտիվ ակտի իրացումը անկանխատեսելի չէ. այն կարող է ենթարկվել որոշակի օրինաչափությունների:

Քննադատական խոսքի տարատեսակները անզլերենում

Դիսկուրսի համատեքստային վերլուծությունը ցույց է տալիս, որ խոսողի վերաբերմունքը, տվյալ դեպքում՝ բացասական դիրքորոշումը, արտահայտվում է իլլոկուտիվ մակարդակում որոշակի խոսքային ակտերի ուղիղ և անուղղակի ձևերի կիրառմամբ: Ըստ որում, նշված խոսքային իրադրություններում խոսողի գնահատականը պայմանավորված է խոսքնկերոջ կողմից որևէ հասարակական նորմի խախտումով, ինչը խոսողին դրդում է քննադատական ներազդեցություն գործելու նրա վրա՝ փորձելով շտկել կատարված խախտումը, կանխել վերահաս բացասական հետևանքները:

Ինչպես գիտենք, իլլոկուտիվ իմաստը պայմանադրական բնույթ ունի, և խոսքային ակտերի տեսության մեջ բազմիցս մշակվել են դրանց հաջող իրացման նախապայմանները, քննարկվել իլլոկուտիվ իմաստի ուղիղ/անուղղակի ձևակերպման լեզվական միջոցներին վերաբերող խնդիրներ (Austin 1962, Searle 1969, 1998): Խոսքային ակտերի իմաստային կառուցվածքը քննարկելիս մենք նշեցինք, որ խոսքային ակտերի տեսության համաձայն՝ պերլոկուտիվ ակտը, ի տարբերություն իլլոկուտիվի, պայմանադրական բնույթ չունի, և չկան այս կամ այն պերլոկուտիվ իմաստ

արտահայտելու որոշակի հաղորդակցական կանոններ: Քննադատական վերաբերմունք արտահայտելու նպատակով կիրառվող իլլոկուտիվ ակտերի մեր քննությունը այլ բան ցույց տվեց. քննադատման պերլոկուտիվ ազդեցությունը ինչ-որ կերպ կանոնակարգվում է՝ իրականացվելով որոշակի իլլոկուտիվ ակտերի միջոցով: Քանի որ սույն հետազոտության նպատակը քննադատման պերլոկուտիվ ակտի քննությունն է, ապա սույն ենթագլխում կփորձենք լուսաբանել, թե պերլոկուտիվ ներազդեցության սույն իմաստային դաշտը ինչպես է դրսևորվում խոսքում, այսինքն՝ ինչպես է իրագործվում խոսողի և մեկնաբանվում խոսընկերոջ կողմից:

Ինչպես արդեն նշել ենք, քննադատումը բացասական գնահատման տարրեր պարունակող խոսքային գործունեության տեսակ է: Ընդամին, սույն իմաստային դաշտի քննությունը ցույց է տալիս, որ պերլոկուտիվ ազդեցությունն իրագործելու և ընկալելու գործընթացներին նպաստում են հարատեքստը, հաղորդակցվողների համատեղ հենքային գիտելիքները, նրանց հաղորդակցական նպատակները: Սույն գործոններով է պայմանավորված մասնավորապես խոսողի կողմից ուղիղ կամ անուղղակի խոսքային ակտերի կիրառությունը՝ քննադատման ներազդեցությունն ուժեղացնելու կամ թուլացնելու նպատակով: Ընդամին, ուղիղ խոսքային ակտերի միջոցով, հատկապես ուղիղ հանդիմանության, սպառնալիքի, հրամանի կիրառմամբ խոսողն ուժեղացնում է քննադատական ներազդումը և մեծ ճնշում է գործում խոսընկերոջ վրա, իսկ անուղղակի խոսքային ակտերի կիրառմամբ խոսընկերոջ վրա գործադրված ճնշումը թուլանում է, և նրան ինքնուրույն մտահանգում կատարելու հնարավորություն է տրվում:

Քննադատման պերլոկուտիվ ներազդեցության դրսևորումը խոսքում պայմանավորված է նաև խոսընկերների համատեղ հեն-

քային գիտելիքներից բխող սոցիալ-հոգեբանական դիրքորոշմամբ: Այսպես, խոսքերներից մեկի քննադատական ներազդման դրդապատճառը հաճախ ոչ թե խոսքերն են, տվյալ հաղորդակցական իրադրության ընթացքում դրսևորած վարքագիծն է, այլ նրա նկատմամբ եղած կանխակալ բացասական վերաբերմունքը: Այս դեպքում, անկախ նրանից, թե խոսքերն ինչպես է արձագանքում իրեն արված քննադատական ներազդմանը, խոսողը շարունակում է իր հաղորդակցական ճնշումը:

Քննադատման պերլոկուտիվ ներազդման քննությունը ցույց է տալիս, որ դրա դրսևորման ընթացքը մեծապես կախված է խոսքերն արձագանքից: Այն դեպքում, երբ խոսքերը մեկնաբանում է իր վրա գործադրվող քննադատման ներազդումը, բայց չի ցանկանում հակամարտել, նա որևէ կերպ չի արձագանքում իր հասցեին արված բացասական գնահատմանը և փորձում է հաշտեցման եզրեր գտնել խոսողի հետ: Իսկ այն դեպքում, երբ խոսքերը նախընտրում է հակադրվել խոսողին, նա հակառակվում է վերջինիս, փորձում ինքն իրեն արդարացնել կամ հակադարձ քննադատական ներազդում է իրագործում:

Ըստ այդմ՝ մենք տարանջատում ենք քննադատման պերլոկուտիվ ներազդման *միակողմ* կամ *երկկողմանի* բնույթ ունեցող երկխոսական միավորներ: Նախ քննարկենք *երկկողմանի* քննադատական ներգործություն պարունակող երկխոսական միավորները: Հաղորդակցական միավորների այս տարատեսակի առանձնահատկությունն այն է, որ, ի պատասխան խոսողի պարսավախոսական դիրքորոշման, խոսակիցն իր հերթին փորձում է քննադատել նրան կամ էլ իրագործում է ինքնապաշտպանական խոսքային ռազմավարություն՝ մասամբ ընդունելով իրեն ուղղված քննադատական ներազդումը:

Հետևյալ երկխոսական միավորում խոսքերները անհաշտ ամուսիններ են, իսկ տվյալ հաղորդակցական իրադրության մեջ

հակամարտելու նախաձեռնությունը ամուսնու՝ Բերնարդինն է, քանի որ նա այդ օրը՝ կեսօրին, պատահաբար հայտնաբերել է, որ իր կինը մարմնավաճառությամբ է զբաղվում:

BERNARD [bitterly]: *He wanted me to play golf this afternoon.*

JENNY: You should. BERNARD: *This afternoon?*

JENNY: You need the exercise.

BERNARD: *Are you trying to tell me what I need? You! You!*

JENNY: But you do. You're putting on weight.

BERNARD [stamping round the room]: *That is it! That is the end! You stand there criticizing me.*

JENNY: Not criticizing, I was saying. You told me yourself your blue suit was tight.

N. E. D. 181

Բերնարդը հետևյալ հաստատական ասույթով ոչ թե հաստատում է ստորոգման իմաստի իսկությունը, այլ անուղղակի բողոք է արտահայտում, որի պերլոկուտիվ ներագդեցությունը իր կնոջը՝ Ջենիին, քննադատելն էր. “*He wanted me to play golf this afternoon.*”: Պերլոկուտիվ ակտի այս իմաստը մեկնաբանվում է հարատեքստի ընդգրկմամբ: Ամուսնու նպատակն է ցույց տալ, որ կինը անբարո արարքներ է գործում: Կնոջ պատասխանից պարզ է, որ նա չի ընկալում իրեն ուղղված քննադատական ներագդումը, քանի որ տեղյակ չէ ամուսնու բացահայտման մասին կամ չի ցանկանում արձագանքել դրան: Նա պարզապես հանդիմանում է ամուսնուն, որ չի կատարել ընկերոջ խնդրանքը և դրանով իրենից հեռացնում է հաղորդակցման կիզակետը. “*You should.*”: Սրան հետևում է “*This afternoon?*” հարցական ասույթը, որի հաղորդակցական նպատակը տեղեկատվություն ստանալը չէ: Բերնարդը կեսօրին է հայտնաբերել կնոջ՝ մարմնավաճառությամբ

զբաղվելու փաստը, ուստի նրա հարցի պերլոկուտիվ իմաստը քննադատական ներագրումն է. նա ինչպես կարող էր այդքան բանից հետո գովֆ խաղալ: Ջենին դարձյալ չի արձագանքում իրեն ուղղված քննադատությանը և դրա փոխարեն հակառակ ուղղությամբ է արտահայտում իր քննադատական վերաբերմունքը. “*You need the exercise.*”: Խորհուրդ արտահայտող սույն խոսքային ակտում խոսողը քննադատում է խոսընկերոջը, որ նա հրաժարվում է անել այն, ինչ օգուտ է իրեն: Ինչպես տեսնում ենք, քննադատման թիրախ է դառնում ոչ թե Ջենիի անբարո վարքը, այլ Բերնարդը, որն իբր չի հասկանում իր լավն ու վատը: Դրանից Բերնարդն էլ ավելի է բորբոքվում, և նրա հաջորդ խոսքային գործողության մեջ ավելի բացահայտ բացասական գնահատական է արտահայտվում. “*Are you trying to tell me what I need? You! You!*”: Իրականում սույն հարցական ասույթը անուղղակի բողոք է, որին հետևում է լուտանքը: Բերնարդին զայրացնում է այն փաստը, որ կինը համարձակվում է իրեն խորհուրդ տալ. ըստ նրա՝ մարմնավաճառությամբ զբաղվող կինն իրավունք չունի որևէ մեկին խորհուրդ տալու: Բացականչական ասույթի առկայությունը պայմանավորված է Բերնարդի ծանր ապրումներով: Ինչպես տեսնում ենք, Բերնարդը սուր քննադատական ներագրում է գործում կնոջ վրա և փորձում նրան ներգրավել իրեն հետաքրքրող հարցի քննարկման մեջ, բայց Ջենին այս անգամ էլ է «խույս տալիս»՝ շարունակելով քննադատել ամուսնուն այն բանի համար, որ նա չի ցանկանում ֆիզիկական վարժություններ անել և գիրանում է: Բերնարդին խիստ զայրացնում է Ջենիի նման վարքագիծը: Ի պատասխան Ջենիի՝ իրեն ուղղված անուղղակի հանդիմանության՝ Բերնարդն անուղղակի բողոք է արտահայտում իրեն անհարկի քննադատելու համար. “*That is it! That is the end! You stand there criticizing me.*”: Ինչպես տեսնում ենք, Բերնարդը բարձրաձայնում է իրեն ուղղված քննադատությունը և հակադարձում

դրան: Սույն երկխոսական միավորում առկա է *երկկողմանի* քննադատման դրսևորում, որովհետև Ջենին շարունակ հակադարձում իրեն ուղղված քննադատական ներազդմանը:

Դիտենք երկկողմանի քննադատման պերլոկուտիվ ազդեցությունն պարունակող հակընդդեմ երկխոսական միավորի մեկ այլ նմուշ:

Internally raging Anthony hurried back to the Ritz to report his discomfiture to Gloria.

"I can just see you," she stormed, "letting him back you down!"

"What could I say?"

"You could have told him what he was. I wouldn't have stood it. No other man in the world would have stood it! You just let people order you around and cheat you and bully you and take advantage of you as if you were a silly little boy. It's absurd!"

"Oh, for Heaven's sake, don't lose your temper."

F. S. F. T. B. A. T. D., 158

Սույն օրինակում երկխոսությունը սկսվում է մեղադրանք արտահայտող անուղղակի խոսքային ակտով, որով Գլորիան քննադատական ներազդում է գործում ամուսնու վրա նրա ապաշնորհության պատճառով. վերջինս չէր կարողացել իրենց տունը վարձակալության համար պայմանավորվածություն ձեռք բերել. *"I can just see you," she stormed, "letting him back you down!"*: Գլորիային համակած բացասական հույզերի մասին է վկայում նաև հեղինակի *"she stormed"* նշագրումը: Հասկանալով իրեն ուղղված քննադատումը՝ Էնթոնին փորձում է արդարացնել իր ձախողումը *"What could I say?"*, ինչն է՛լ ավելի է բորբոքում Գլորիային: Այս անգամ քննադատական ներազդումն ուժեղանում է՝ արտահայտվելով նախ ուղիղ հանդիմանությամբ, ապա՝ ուղիղ

մեղադրանքով. *“You could have told him what he was. I wouldn't have stood it. No other man in the world would have stood it!”*: Ուղիղ հանդիմանությունն արտահայտված է *could* եղանակավորող բայի և *“have told”* պերֆեկտ ինֆինիտիվի համադրությամբ, ինչպես նաև ըղձական անցյալով արտահայտված բայի միջոցով (*“wouldn't have stood”*): Ուղիղ մեղադրանք արտահայտող խոսքային ակտում առկա է շարահյուսական համանմանության ոճական հնարի կիրառություն, որի շնորհիվ ուժեղանում են բացասական գնահատականը և հետևաբար նաև քննադատական ներազդումը. *“You just let people order you around and cheat you and bully you and take advantage of you as if you were a silly little boy.”*: Էնթընին, սակայն, հակադրվում է կնոջը և հակադարձում նրան. *“Oh, for Heaven's sake, don't lose your temper.”*: Մեղադրանք արտահայտող խոսքային ակտով Էնթընին բացասական գնահատական է տալիս նրա վարքագծին: Նրա խիստ բացասական դիրքորոշման մասին է վկայում նաև *“for Heaven's sake”* բացականչությունը: Ինչպես տեսնում ենք, խոսքնաթացի ծավալմամբ աստիճանաբար դրսևորվում է *երկկողմանի* քննադատում, քանզի խոսքնակերը չի ընդունում իրեն ուղղված պարսավանքը, և դրա ուժեղացմանը համընթաց ինքն էլ է սկսում հակադրվել:

Հետևյալ օրինակում երկխոսությունը սկսվում է անուղղակի հանդիմանությամբ, որով կինը պարսավում է ամուսնուն ուշանալու համար:

She was terribly put out at having had to wait, and right away she started, *“Simon, Where have you been? Do you know how late you are?”*

“Shut up!” he said. *“Here's my kid brother. You haven't seen him for two years and can't even say hello but have to start yacking first.”*

S. B. T. A. O. A. M. 494

Հետևյալ հարցական ասույթների գործաբանական գործա-
նույթը անուղղակի հանդիմանությունն է. “*Simon Where have you
been? Do you know how late you are?*”: Սայմոնն ընկալում է իրեն
ուղղված քննադատական ներագրումը և հարձակվողական ռազ-
մավարություն է ընտրում. “*Shut up! Here's my kid brother. You
haven't seen him for two years and can't even say hello but have to
start yacking first.*”: Ուղիղ հրաման արտաբերելով՝ նա հակադարձ
քննադատություն է արտահայտում՝ բացասական գնահատական
տալով կնոջ վարքագծին: Քննարկենք երկկողմանի քննադատում
պարունակող հակընդդեմ երկխոսական միավորի ևս մեկ նմուշ.

Honey: {To Nick, tearfully indignant} *You told me
to shut up!*

Nick: {Impatiently} I'm sorry.

Honey: {Between her teeth} *No you're not.*

Nick: {To Honey, even more impatiently} I'm
sorry. E. A. W. I. A. O. V. W., 140

Սույն երկխոսական միավորում Հանին իր բողոքն է արտա-
հայտում. “*You told me to shut up!*” բացականչական ասույթի մի-
ջոցով՝ ամուսնուն քննադատելով իր նկատմամբ անհարգալից
վերաբերմունք ցուցաբերելու համար: Հեղինակի նշագրումից {To
Nick, tearfully indignant} հասկանում ենք, որ Հանին խիստ վատ
ապրումների մեջ է գտնվում: Նիքը ներողություն է խնդրում Հա-
նիից, չի ցանկանում հակամարտել և չի արձագանքում քննադա-
տական ներագրմանը: Հեղինակի հաջորդ նշագրումը
(Impatiently) վկայում է այն մասին, որ Նիքը զգացել է Հանիի բա-
ցասական վերաբերմունքը, և նրա ներողության գործողությունը
կեղծ է, սոսկ հակամարտությունից խուսափելու խոսքային մար-
տավարություն: Հանին հասկանում է դա և ուժեղացնում է իր
քննադատական ներագրումը դատապարտում արտահայտող
խոսքային ակտով. “*No you're not.*”: Հանիի՝ ամուսնու նկատմամբ

խիստ բացասական դիրքորոշման մասին է վկայում նաև {Between her teeth} նշագրումը: Նիքը դարձյալ կեղծ ներողություն է խնդրում՝ չարձագանքելով իրեն ուղղված քննադատական ներազդմանը:

Ինչպես տեսնում ենք, երկկողմանի քննադատման պերլուկուտիվ ազդեցություն պարունակող հակընդդեմ երկխոսական միավորներում հաղորդակցման երկու կողմերն էլ համակված են բացասական տրամադրվածությամբ և միմյանց վրա քննադատական ներազդեցություն գործելու ցանկությամբ:

Ներկայացնենք երկխոսական միավորներ, որտեղ առկա է միակողմ քննադատական ներազդում: Այլ կերպ ասած՝ հաղորդակցման մասնակիցներից մեկը ոչ մի կերպ չի արձագանքում իրեն ուղղված քննադատմանը:

Հետևյալ օրինակում տատիկն անուղղակի մեղադրանք արտահայտող խոսքային ակտերով քննադատական ներազդում է գործում Օգիի վրա, քանի որ նա ինքն է մեղավոր, որ իրեն հարվածել են. *"Who is to blame? "You know who? "*:

Here the kid hit me and the gang jumped me, Stashu with the rest, tearing buckles from my sheepskin coat and bloodying my nose. *"Who is to blame?" Said Grandma Lausch when I came home. "You know who? You are, Augie, because that's all the brains you have to go with that piss-in-bed accoucherka's son."*

S. B. A. O. A. M. 19

Շարունակելով ներազդումը՝ Լոշ տատիկը դարձյալ անուղղակի մեղադրանք արտահայտող խոսքային ակտերով քննադատում է Օգիին, քանի որ նա անխոհեմ է գտնվել և շփվել սխալ մարդկանց հետ. *"You are, Augie, because that's all the brains you have to go with that piss-in-bed accoucherka's son."*: Օգին չի հակա-

դարձում իրեն ուղղված քննադատական ներազդմանը, ուստի կարող ենք ասել, որ այստեղ *միակողմ ներազդում* է իրագործվել:

"I'm from the consulate. ... *Say, what the hell do you want to come ashore without a passport for? Don't you think we have anything better to do than to take care of a lot of damn fools that don't know enough to come in when it rains? Damn it, I was goin' to play golf this afternoon and here I've been here two hours waiting to get you out of the cooler.*"

"That'll teach you a lesson, I hope. ... Next time you have your papers in order."

"Yesssirree. ... I shu will." J. D. P. 1919. 62

Սույն օրինակում խոսողը անուղղակի հանդիմանություն արտահայտող խոսքային ակտով քննադատական ներազդում է իրագործում դիմացինի վրա, քանզի նա առանց փաստաթղթերի մեկ այլ երկիր է եկել. *"Say, what the hell do you want to come ashore without a passport for?:* Խոսողի բացասական վերաբերմունքն արտահայտված է *"what the hell"* շարույթի միջոցով: Այնուհետև դարձյալ անուղղակի հանդիմանություն արտահայտող խոսքային ակտերով խոսողը քննադատում է խոսակցին, որ նա անխոհեմ վարքագիծ է դրսևորել, և նրան օգնելու համար հյուպատոսը ստիպված է եղել հետաձգել իր բոլոր գործերը. *"Don't you think we have anything better to do than to take care of a lot of damn fools that don't know enough to come in when it rains? Damn it, I was goin' to play golf this afternoon and here I've been here two hours waiting to get you out of the cooler.":* Ի պատասխան իրեն ուղղված քննադատական ներազդման՝ խոսակիցը ոչ միայն չի հակադարձում, այլև հրամանին հետևելու պատրաստակամություն է հայտնում. *Yesssirree.*

... *I shu will*: Սույն հակընդդեմ երկխոսական միավորի քննությամբ պարզ է դառնում, որ այն *միակողմ քննադատում* է պարունակում:

Ուսումնասիրելով քննադատման պերլոկուտիվ ներագդեցության հաղորդակցական դրսևորման առանձնահատկությունները՝ կարելի է եզրակացնել, որ գեղարվեստական դիսկուրսում գոյություն ունի քննադատական ներագդման երկու տարատեսակ՝ *միակողմ* և *երկկողմանի քննադատում*: Հաղորդակցման սույն տարատեսակների քննությամբ տեսնում ենք, որ այն լավ է դրսևորվում հատկապես գեղարվեստական դիսկուրսում, որտեղ տարբեր հարալեզվական միջոցների կիրառմամբ խոսընկերների քննադատական ներագդումն ավելի ակնհայտ է դառնում:

Հարալեզվական միավորների կիրառությունը քննադատական խոսքում

Քննադատական ներագդեցության ուժգնության աստիճանի մասին խոսել ենք խոսքային ակտի իլլոկուտիվ և պերլոկուտիվ մակարդակներին անդրադառնալիս: Այսպես, ուղիղ խոսքային ակտերի՝ ուղիղ հանդիմանության, բողոքի, պախարակման, մեղադրանքի, հրամանի միջոցով իրագործվող քննադատման պերլոկուտիվ ազդեցությունն ավելի խիստ է արտահայտված, քան անուղղակի խոսքային ակտերի միջոցով իրագործվող ներագդումը: Այժմ անդրադառնանք քննադատման ուժգնության աստիճանի ուսումնասիրությանը խոսքի վերհատոյթային մակարդակում, քանի որ խոսընկերները տարբեր խոսքային և ոչ խոսքային միջոցների շնորհիվ արտահայտում են իրենց զգացմունքները, ինչպես նաև իրենց դիրքորոշումը այս կամ այն հարցի վերաբերյալ:

Հայտնի է, որ յուրաքանչյուր լեզու ունի իրեն հատուկ «երաժշտությունը», այսինքն՝ հնչերանգի, ռիթմի և ձայնային

որակների այն համակարգը, որն էլ հենց ստեղծում է տվյալ լեզվին բնորոշ «երաժշտությունը» (Վարդանյան 1989): Յուրաքանչյուր լեզվի արտասանական համակարգի հիմքում առկա են որոշակի օրինաչափություններ, որոնց չիմացությունը կարող է հաղորդակցման գործընթացի ձախողման պատճառ դառնալ: Հնչերանգի ընտրությունը պայմանավորված է խոսքնկերների հուզական վիճակով: Որոշ ուսումնասիրությունների վրա հիմնվելով՝ կարելի ասել, որ անհատի հուզական դաշտի ակտիվության դեպքում փոխվում են նրա խոսքի արագությունը, ձայնի բարձրությունը, ինչպես նաև խոսքային դադարների տևողությունը (Crystal 1969):

Խոսքային ակտերի իմաստային նրբերանգներն ընկալելու և որոշարկելու գործում մեծ է հնչերանգի դերը: Այն կարևորագույն գործիք է, որի շնորհիվ բացահայտվում է խոսքային ակտերի գործաբանական տեսակը, ձևավորվում է դիսկուրսի կառուցվածքը, պարզորոշվում են ներակա իմաստները և այլն: Ինչպես արդեն նշել ենք, գրուցակիցները կարող են արտահայտել իրենց իրական հաղորդակցական նպատակը նաև ոչ խոսքային միջոցների օգնությամբ: Հարկ է նշել, որ ձայնի բարձրացումը կարևոր հաղորդակցական գործառույթ է իրացնում, քանի որ այն օգնում է ոչ միայն ընկալել խոսքային ակտերը, այլև ուղղորդել ամբողջ դիսկուրսի կառուցվածքը:

Ինչպես գիտենք, ասույթը ոչ միայն տեղեկատվություն հաղորդելու միջոց է, այլև խոսողի զգացմունքային ներաշխարհն արտահայտելու գործառույթ ունի: Հարկ է նշել, որ հարալեզուն կարևոր և անբաժանելի գործոն է հաղորդակցման ժամանակ: Անգամ լեզվական տեղեկատվության բացակայության դեպքում էլ կարելի է ընկալել խոսքի հարալեզվական իմաստը⁸:

Նախադասության շարահյուսական կառուցվածքը և հնչերանգը միմյանց լրացնում են: Առաջինը դրան տալիս է ընդհա-

նուր քերականական դասակարգում, իսկ երկրորդը որոշարկում է կոնկրետ խոսքային ակտի տեսակը: Հնչերանգի կարևորագույն բաղադրիչներից է տոնայնությունը (pitch movement), որին բնորոշ գործառույթը խոսքային ակտի բովանդակությունը բացահայտելն է: Վերջինիս միջոցով որոշարկվում է արտաբերվող ասույթի բովանդակությունը: Այս կապակցությամբ Ռ. Լեդը նշում է.

«Տոնայնության գործառույթը տարբեր զգացմունքային նրբերանգներ արտահայտելն է: Որպես կանոն բարձր տոնը արտահայտում է հետաքրքրություն, զգացմունքային ակտիվություն, մինչդեռ ցածր տոնը՝ զգացմունքային պասիվություն, հետաքրքրության բացակայություն, հանգստություն: Մույն տարբերակման հիմքում ընկած է տոնայնության զգացմունքային նրբերանգներ արտահայտելու գործառույթը: Այսպես, բարձր տոնն արտահայտում է ակտիվ հուզական վիճակ, օրինակ՝ զայրույթ կամ զարմանք, ցածր տոնը՝ ձանձրույթ, տխրություն» (Ladd 1996:113):

Դ. Բոլինջերը ներկայացնում է հնչերանգի քերականական գործառույթին բնորոշ հետևյալ չափորոշիչները.

- արտաբերվող ասույթի վերջում տոնն ընկնում է, սակայն անավարտ ասույթի դեպքում այն բարձրանում է,
- հարցերը արտաբերվում են բարձրացող տոնով, քանզի խոսողը ակտիվ զգացմունքային վիճակում է: Վերջինս ցուցաբերում է հետաքրքրություն,
- առկա են տոնային շեշտադրումներ այն բառերի վրա, որոնք պարունակում են հաղորդակցական կարևոր բովանդակություն (Bolinger 1989):

Սակայն Լեդն իր տեսություններում հակառակ կարծիք է արտահայտում՝ նշելով, որ տոնայնությունը (pitch movement) համընդհանուր գործառույթ չունի: Որպես օրինակ վերցնելով ամերիկյան անգլերենի մի քանի տարբերակներ՝ նա նշում է, որ պատմողական նախադասության վերջում բնորոշ է տոնի բարձ-

րացում և ոչ թե անկում, ինչն էլ արտահայտում է հաստատական և ոչ թե հարցական նրբերանգներ: Այլ կերպ ասած՝ ասույթի վերջում առկա տոնի բարձրացումը պարտադիր կերպով հարց կամ անավարտ ասույթ չի պահանջում (Ladd 1980, 1996):

Քննելով հնչերանգի դերը խոսքային ակտերը որոշարկելու գործում՝ հարկ է նշել, որ դրանք միշտ չէ, որ համապատասխանում են արտաբերված նախադասությանը բնորոշ շարահյուսական կադապարներին: Օրինակ՝ *The talk is about politics?* ասույթում առկա է հարցին բնորոշ հնչերանգ (տոնի բարձրացում *final rise* նախադասության վերջում), մինչդեռ վերջինս շարահյուսորեն բնութագրվում է որպես պատմողական նախադասություն (Klaus von Heusinger 1999:23): Մրանք, այսպես կոչված, անուղղակի խոսքային ակտերն են (տվյալ դեպքում՝ հարց), որտեղ առկա է շարահյուսական կառուցվածքի և հաղորդակցական գործառույթի անհամապատասխանություն:

Մեկ այլ օրինակում՝ *Did I make a mistake yesterday!* ասույթի շարահյուսական կադապարը բնորոշ է հարցական նախադասությանը, մինչդեռ այն արտաբերվում է հաստատական ասույթին հատուկ հնչերանգով (նախադասության վերջում տոնն իջնում է՝ *final fall*): Ասույթի շարահյուսական կադապարը և խոսքային ակտը որոշարկող հնչերանգի միջև առկա հակասությունը մի քանի բացատրություն ունի: Շատերը գտնում են, որ ասույթին բնորոշ հնչերանգային նրբերանգները չեզոքացնում են վերջինիս շարահյուսական կադապարը: Ըստ մի այլ տեսության՝ առաջին օրինակը կարելի է որակել որպես անուղղակի խոսքային ակտ (Lieberman & Sag 1975): Եթե խոսողի արտաբերած խոսքային ակտը իմաստից զուրկ է, ապա ունկնդիրն այն ընկալում է որպես ուրիշ խոսքային ակտ, տվյալ դեպքում՝ որպես հարց: Հնչերանգը կարելի է դիտել որպես խոսքային ակտը ուղիղ կամ անուղղակի որակելու կարևորագույն գործոն: Քննելով սույն խնդիրը՝ Յ. Սեզը

և Մ. Լիբերմանը պնդում են, որ անզլերենում գոյություն ունեցող տիլդային նրբերանգը հարցական նախադասությունը հարց է դարձնում: Որպես օրինակ բերվում են իրար հակադրվող նախադասությունները. “Hey Baldwin, the climate here is really bad for you! I've got a suggestion - Why don't you move to California? Why don't you move to California?” (Klaus von Heusinger 1999:23): Առաջին օրինակում առկա հնչերանգային կառուցվածքը պարտադրում է միայն հարցական բովանդակություն, մինչդեռ երկրորդը որակվում է որպես առաջարկ և ոչ թե հարց: Ընդհանրացնելով սույն խնդիրը՝ Մեզը և Մ. Լիբերմանը եզրակացնում են. «Որոշ հնչերանգային նրբերանգներ բացառում են գործարանական մեկնաբանություն՝ պարտադրելով բառացի (literal) մեկնաբանություն»: Ըստ նրանց՝ որևէ հնչերանգային նրբերանգ չի կարող պարտադրել անուղղակի մեկնաբանություն (Sag & Liberman 1975: 496):

Մեզի և Մ. Լիբերմանի առաջադրած տեսության մեջ առկա է երկու կարևոր ձևակերպում.

- հնչերանգային նրբերանգներն ունեն իրենց անկախ իմաստը և պետք է ներառվեն «հնչերանգային լեքսիկոնի» մեջ,
- հնչերանգային նրբերանգները ինքնին ոչ թե իմաստ, այլ ասույթի մասին վերաբերմունք են արտահայտում (Liberman 1975):

Ասույթի հնչերանգին վերագրվող «իմաստը» ավելի ճիշտ կլինի որակել վերաբերմունք կամ զգացմունք, ինչպես, օրինակ՝ զարմանք, վախ կամ բարկություն:

Ք. Փայքը, որը համամիտ է սույն կարծիքին, նշում է. «Ունկնդիրը շատ հաճախ ավելի հետաքրքրված է խոսողի արտահայտած վերաբերմունքով, քան նրա արտաբերած բառերով: Այսինքն՝ նախադասությունն արտաբերվում է ժպիտով, թե՞

քմծիծաղով: Եթե ինչ-որ մեկը վիրավորական բովանդակությամբ ասույթը ժպիտով և ուրախ տոնով է արտաբերում, ապա սույն ասույթն ընդունվում է որպես մեծ հաճոյախոսություն, մինչդեռ եթե հաճոյախոսությունն ասվում է արհամարհական տոնով, ապա այն ընկալվում է որպես վիրավորանք» (Pike 1945: 22): Անդրադառնալով սույն խնդրին՝ արժի նշել, որ երբեմն խոսողը կարող է միտումնավոր կերպով խոսքային իրադրությանը անհամապատասխան հնչերանգ կիրառել՝ իր իրական հաղորդակցական նպատակն արտահայտելու համար: Մակայն վերոնշյալ տեսության վրա հիմնվելով՝ կարելի է ասել, որ Ք. Փայքը հնչերանգը դիտում է որպես հարալեզվական միջոցների անբաժանելի մաս:

Քննելով հնչերանգի դերը խոսքում՝ Դ. Քրիսթըլը մատնանշում է այդ հարցի շուրջ գոյություն ունեցող բազմաթիվ թյուր և հակասական կարծիքներ: Նա մասնավորապես նշում է, որ առկա են երկու սխալ դիտարկումներ, որոնք սխալ են սահմանում հնչերանգը: Ըստ նրա՝ առաջին սխալ տեսակետն այն է, համաձայն որի՝ ասույթի հնչերանգային կադապարը համապատասխանում է դրա շարահյուսական և իմաստային կադապարին⁹:

Հնչերանգը սահմանող երկրորդ թյուր և հակասական մոտեցումը այն որպես միատարր և համապարփակ համակարգ որակելն է: Նման մոտեցումներն առկա են սերողական քերականության տեսություններում, որտեղ հնչերանգը դիտվում է որպես լեզվական տարր, որի միակ գործառույթը շարահյուսական տոնայնություն արտահայտելն է: Մակայն հնչերանգի՝ որպես բազմատարր և բազմագործառույթային լեզվաբանական համակարգի սահմանումը նույնպես սպառիչ պատասխան չի տալիս այն բոլոր հակասական մոտեցումներին, որոնք վերաբերում են սույն լեզվական բաղադրատարրին¹⁰:

Ինչպես արդեն նշել ենք, հնչերանգը որոշակի զգացական երանգավորում է հաղորդում ասույթին՝ արտահայտելով խոսողի

դիրքորոշումը տվյալ իրադրության նկատմամբ: Այս առումով անհրաժեշտ է ուսումնասիրել, թե ինչ հնչերանգով է իրագործվում ասույթի քննադատման պերլոկուտիվ ազդեցությունը հաղորդակցման ժամանակ:

Հայտնի փաստ է, որ արտաբերված ասույթին բնորոշ հնչերանգը կարող է որոշիչ լինել խոսքային ակտի իրական հաղորդակցական իմաստը վերծանելու գործընթացում: Լուսաբանելով բացահայտ պերֆորմատիվների խնդիրը՝ Ջ. Օսթինը նաև անդրադառնում է ձայնի տոնայնությանը, հնչերանգին և շեշտին (Asutin 1962: 73-74): Մեր ուսումնասիրությունների վրա հիմնվելով՝ կարելի է ասել, որ հնչերանգը շատ հաճախ պարտադրում է խոսքային ակտի նոր մեկնաբանություն՝ չեզոքացնելով դրան բնորոշ քերականական կադապարը: Այսպես, օրինակ, ձայնի բարձրացման երկու մակարդակներն էլ՝ բարձրացող տոն (high-rise) և իջնող տոն (low-rise), բնորոշ են դիրեկտիվ և հարցական խոսքային ակտերին, այսինքն՝ հարցերին, խնդրանքներին, պահանջներին: Այս կապակցությամբ Ջ. Հիրշբերգը և Ջ. Փիերիյումբերթը նշում են, որ թե՛ իջնող և թե՛ բարձրացող տոները իրենց մեջ պարունակում են դիրեկտիվներին բնորոշ իլլոկուտիվ իմաստ և ունկնդրից որևէ պատասխան են պահանջում (Pierrhumbert, Hirshberg 1990):

Քննելով հնչերանգի դերը իլլոկուտիվ իմաստի արտահայտման գործում՝ Ա. Վենենշտրոմը նշում է, որ ինչպես իմաստային քերականական կադապարները, այնպես էլ հնչերանգը ասույթի իլլոկուտիվ իմաստը կարող են արտահայտել թե՛ ուղիղ և թե՛ անուղղակի կերպով: Այս կապակցությամբ հարկ է նշել, որ որոշ ասույթներ միաժամանակ արտահայտում են մի քանի իլլոկուտիվ իմաստ (Wennerstrom 2001):

Ուսումնասիրելով այն դեպքերը, երբ ասույթի քերականական, իմաստային կադապարը բնորոշ է հաստատական նախա-

դասություններին, բայց արտաբերվում է բարձրացող հնչերանգով՝ Դ. Շիֆրինը գտնում է, որ իլլոկուտիվ իմաստն արտահայտվում է իմաստային, քերականական և հնչերանգային կադապարներով (Schiffirin 1994):

Փաստական նյութի մանրամասն ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ փորձելով իրագործել քննադատման պերլուկուտիվ ազդեցություն՝ խոսակիցները շատ հաճախ հարալեզվական միջոցներ են կիրառում՝ իրենց հաղորդակցական մտադրությունն իրագործելու համար: Ըստ որոշ լեզվաբանների՝ հարալեզվական միջոցների գործառույթը միայն որոշակի դիրքորոշում արտահայտելն է (Crystal 1969:139): Սուր քննադատական նրբերանգներ պարունակող հաղորդակցական իրադրություններում գրուցակիցներն այնպիսի հարաբերությունների մեջ են գտնվում միմյանց նկատմամբ, որ պարզապես անհրաժեշտ չեն համարում զսպել իրենց համակած զգացմունքները և հաղորդակցման ընթացքում կարող են կիրառել այնպիսի հարալեզվական միջոցներ, ինչպիսիք են փնչոցները կամ փոթկոցները՝ արհամարհանք, գոռոցները՝ զայրույթ, իրադրության կամ գրուցակցի նկատմամբ իրենց ունեցած բացասական դիրքորոշումն արտահայտելու համար:

Հաղորդակցման գործընթացն ուղղորդվում է ոչ միայն լեզվի, այլև ձայնի որոշակի տոների, ելևէջների, շարժումների, դիմախառնի, հայացքի միջոցով: Սույն բաղադրիչների ամբողջությունը կարող է հուշել հաղորդակցման մասնակիցներին, թե ինչպիսի հուզական վիճակում է գտնվում գրուցակիցը: Երբեմն ձայնի ամենաաննշան ելևէջն անգամ կարող է որոշակի տեղեկություն հաղորդել գրուցակցի տրամադրության, նրան համակած դրական կամ բացասական լիցքերի մասին: Խոսելով ձայնի նման ելևէջների մասին՝ Դ. Քրիսթըրը վերջիններիս տալիս է «ձայնային տարբերակիչներ» անվանումը և դրանց թվին է դասում ծիծաղը, քմծի-

ծաղը, լացը, հեկեկոցը և այլն (Crystal 1969): Որոշ գիտնականների հետ համամիտ լինելով՝ Դ. Քրիսթըլը գտնում է, որ սույն նշույթները առկա են հաղորդակցման հարալեզվական մակարդակում:

Փաստական նյութի մեր ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ քննադատական տարրեր պարունակող հաղորդակցական իրադրություններում վերոհիշյալ նշույթների թիվը բավականին նշանակալից է, ընդ որում՝ դրանք բանավոր դիսկուրսում կարող են արտահայտվել համապատասխան հնչերանգի, ձայնին համապատասխան հուզարտահայտչականություն հաղորդելու միջոցով: Այստեղ տեղին է խոսել նաև ձայնի որակի մասին, այսինքն՝ այն ազդեցության, որ կարող է թողնել խոսողի ձայնը ասույթի արտաբերման ընթացքում: Մասնագիտական գրականության մեջ ընդունված է տարբերակել ձայնի նկարագրական որակ (քաղցր, վավաշոտ, խռպոտ ձայն և այլն) և զրուցակցի կամ տվյալ իրադրության նկատմամբ խոսողի դիրքորոշումը արտահայտող ձայնի որակ: Վերջինս զուգակցվում է անհատի վարքագծի որոշակի դրսևորումների հետ և ըստ այդմ էլ կարող է արտահայտել բացասական դիրքորոշում, բարկություն, զայրույթ և այլն: Ըստ Դ. Քրիսթըլի՝ ձայնի նման որակի նպատակն է որոշակի ներգործություն թողնել զրուցակցի վրա և ստեղծել հաղորդակցման միջավայրին համապատասխան մթնոլորտ:

Անդրադառնալով ձայնի մեղեդայնությանը կամ տոնին՝ նշենք, որ խոսելով հնչերանգի փոխազդեցության գործառույթի մասին՝ որոշ լեզվաբաններ (Brazil, Coulthard, Johns, 1980, McCarthy 1991) հաղորդակցման գործընթացում առանձնացնում են գլխավոր և ոչ գլխավոր կամ երկրորդական խոսողներ և ըստ այդմ՝ գլխավոր և երկրորդական ձայնային տոներ: Քննադատական տարրեր պարունակող հաղորդակցական իրադրություններում գլխավոր տոնով խոսողները գրավում են հարձակվողական դիրք՝ հանդես գալով մեղադրողի կամ կշտամբողի դերում, իսկ

երկրորդական տոնով խոսողները պաշտպանվում են:

Եթե բանավոր խոսքում այնպիսի հնչերանգային տարրեր, ինչպիսիք են ձայնի բարձրությունը, արագությունը, դադարները, ունկնդրին որոշ տեղեկություններ են հաղորդում հաղորդակցման մասնակիցների տրամադրվածության, միմյանց նկատմամբ ունեցած զգացմունքների կամ դիրքորոշման վերաբերյալ, ապա գրավոր դիսկուրսում ընթերցողին այդ մասին հուշում են հեղինակի կողմից տեքստում միտումնավոր կիրառված այնպիսի տպագրական միջոցներ, ինչպիսիք են շեղատառը, տեքստի գունավորումը, որոշ ասույթներ ամբողջությամբ մեծատառով կամ սովորականից ավելի մուգ տպատառով ներկայացնելը: Այսպես, օրինակ՝

George: Well, I don't suppose a nightcap'd kill either one of us ... Martha: A nightcap! Are you kidding? We've got guests

George {Disbelieving}: We've got what?

Martha: Guests. **GUESTS**

George: **GUESTS!**

Martha: Yes ... guests ... people ... We've got guests coming over. George: When?

Martha: **NOW!**

George: Good Lord, Martha ... do you know what time it. ... **Who's** coming over?

E. A. W. I. A. O. V. W., 8-9

Վերոնյալ երկխոսական միավորի քննությունը մեզ թույլ է տալիս եզրակացնել, որ հեղինակի կողմից որոշ բառերի մեծատառ գործածությունը լրացուցիչ հուզականություն է հաղորդում հաղորդակցական իրադրությանը: Այսպես, **“GUESTS”** բառը մեծատառով գրելով՝ հեղինակը փորձում է լրացուցիչ տեղեկություն հաղորդել ընթերցողին: Հաղորդակցման մասնակիցներից Ջորջը

իր զարմանքը, միաժամանակ բողոքն է հայտնում Մարթային, ինչի մասին է վկայում նաև բացականչական նշանը:

Մովորաբար տեքստում տեղ գտած նման հնարքները խուսքին որոշակի զգացմունքայնություն են հաղորդում և ընթերցողի ուշադրությունը հրավիրում ասույթի ենթատեքստի վրա: Երբեմն զրուցակիցների ձայնի ելևէջները, տոնի փոփոխությունները, ինչպես նաև հաղորդակցմանն ուղեկցող շարժումները վերարտադրելու նպատակով հեղինակը իր մեկնական ասույթում զետեղում է համապատասխան նկարագրություն, ինչպես ստորև ներկայացված օրինակում:

Martha: {Standing} Whaddya mean you're gonna read? What's the matter with you/
George: {Too calmly} There's nothing matter with me, Martha.\n{.} I'm going to read a book. That's all.\

Martha:{Oddly furious} We've got company/
E. A. W. I. A. O. V. W., 168

Վերոնշյալ հաղորդակցական իրադրության մեջ կինը (Մարթան) իր զարմանքը, միաժամանակ քննադատությունն է արտահայտում Ջորջի վարքագծի վերաբերյալ: Նա չի հասկանում, թե ինչու է Ջորջն ուզում կարդալ: Ջորջը, սակայն, չի կորցնում համբերությունը, ինչի մասին վկայում հեղինակի նշագրումը է {Too calmly}: Ջորջի ցուցաբերած հանգստությունը էլ ավելի է վրդովեցնում Մարթային, որի մասին վկայում է {Oddly furious} նշագրումը:

Գրավոր դիսկուրսի ուսումնասիրության ժամանակ առանձնահատուկ ուշադրություն են պահանջում նաև կետադրական նշանները, որոնք քննադատական տարրեր պարունակող հաղորդակցական իրադրություններում կիրառվելիս կարող են արտահայտել դադար, զայրույթ և այլ հուզական երանգներ: Ընդամին, դրանք նպաստում են քննադատման պերլոկուտիվ ազդեցության իրականացմանը: Ինչպես ցույց է տալիս փաստական

նյութի մեր ուսումնասիրությունը, խոսակիցների բացասական դիրքորոշումն արտահայտելու նպատակով հեղինակը շատ հաճախ կիրառում է «ավելորդ» կետադրական նշան, այսինքն՝ կետադրական նշաններն այստեղ ոչ միայն խոսքը մասնատելու, այլև խոսքին արտահայտչականություն հաղորդելու գործառնությունն են, ինչպես նաև պարզաբանում են, թե ինչպիսի հոգեվիճակում են խոսակիցները (Բեքարյան 2007):

Ստորև ներկայացնենք այն հիմնական կետադրական նշանները, որոնք իրենց առանձնահատուկ գործառնությի շնորհիվ գերիշխում են հակընդդեմ հաղորդակցական իրադրություններում:

1. Բացականչական նշան: Սույն նշանի գործառնությը հայտնի է բացականչական նախադասություններում, սակայն հաճախ այն կարող է տեղ գտնել այնպիսի ասույթների վերջում, որոնք բնավ բացականչական չեն: Նման դեպքերում այդ նշանը մատնանշում է խոսողի դիրքորոշումը կամ վերաբերմունքը ասույթի բովանդակության նկատմամբ: Այսպես, երբեմն բացականչական նշանը կարող է տեղ գտնել նաև հարցական նախադասության վերջում՝ արտահայտելով խոսողի զարմանքը կամ տարակուսանքը տվյալ ասույթի բովանդակության վերաբերյալ (Բեքրյան 2007): Ստորև ներկայացված օրինակում հարցական նշանի փոխարեն հեղինակը կիրառել է բացականչական նշան, քանզի ցանկացել է էլ ավելի ընդգծել Մարթայի զարմանքը և բացասական վերաբերմունքը Ջորջի նկատմամբ:

Martha: Good grief! Don't you know **anything?**

Chicago was a 'thirties musical starring little Miss Alice Faye. Don't you know **anything?**

George: Well, that was before my **time**, but

Martha: Can it! Just cut it out!

E. A. W. I. A. O. V. W., 5-6

2. Տրոհագծի և բազմակետերի միջոցով հաճախ արտահայտ-

վում են գրավոր խոսքում տեղ գտած հուզական դադարները: Հեղինակի կողմից նման միջոցների կիրառումը խոսքում հիմնականում պայմանավորված է հերոսների հոգեվիճակի նկարագրության անհրաժեշտությամբ (Բեքրյան 2007): Այսպես, ստորև բերված երկխոսության մեջ տրոհագծի կիրառումը հուշում է այն ծանր մթնոլորտի մասին, որում ընթանում է երկխոսությունը.

SARAH: About you two last Christmas. In this house. With your wife ill upstairs rolling about with her sister on this very rug.

NORMAN: Oh _ that ... that was just festive fun.

A. N. C., 96

Վերոնջյալ հաղողակցական իրադրության մասնակիցներից մեկը՝ Սառան, կշտամբում է Նորմանին Ծննդյան տոների ժամանակ հիվանդ կնոջը խաբելու համար: Սառայի կողմից արտաբերված ասույթում կիրառելով տրոհագիծը՝ հեղինակը փորձել է ընթերցողին հաղորդել վերջինիս համակած խիստ զայրույթը:

Որոշ հեղինակներ իրենց հերոսների բանավոր խոսքը ճշգրիտ վերարտադրելու նպատակով հակված են դիտավորյալ աղավաղելու բառի ուղղագրությունը կամ կիրառելու սխալ քերականական կաղապարներ՝ օգտագործելով, ասենք, *he'm, youse'm, some'at, amn't you* ձևերը՝ *he's, you're, somewhat, aren't you* բառերի փոխարեն: Օրինակ՝

GINGER: What do he come here, for, then, Shakespeare? Eh? JUMBO: He's gone.

ALBERT: Is he?

JIM: Perhaps he'm listening to us. Laughing.

SPENS: And youse'm a giving some'at to laugh at, amn't you? '

N. E. D. 7., 112-113

Բերված երկխոսությունն ընթանում է Մեծ Բրիտանիայի

գյուղական բնակավայրերից մեկում, որտեղ բնակիչները խոսում են դժվար ընկալելի բարբառով, ինչը խիստ տարբերվում է գրական անգլերենից: Արտասանական աղավաղումներ կիրառելով՝ հեղինակը ընթերցողին իր հերոսների մասին հավելյալ արտալեզվական տեղեկություններ հաղորդելու նպատակ է հետապնդում:

Քննադատման պերլոկուտիվ ազդեցության ուժգնությունը խոսքի վերհատույթային մակարդակում լուսաբանելու նպատակով մենք փաստական նյութ ընտրել ենք ամերիկյան արտադրության երկու ժամանակակից գեղարվեստական անգլերեն ֆիլմերից («Շինդլերի ցուցակը» և «Ադախինները»)՝ առանձնացնելով քննադատական նրբերանգներ պարունակող հաղորդակցական իրադրություններ: Հերոսների խոսքը գրավոր վերարտադրելու նպատակով օգտվել ենք Մ. Հյուինգսի կողմից առաջադրած պայմանական հնչյունական նշանների համակարգից (Hewings 2007):

Նախ վերլուծենք խոսքային ակտերի նմուշներ, որոնք վերցված են «Շինդլերի ցուցակը» կինոնկարից:

Հետևյալ օրինակում խոսակիցը, որը փորձում է քաղծառայողից տեղեկություն ստանալ իր բնակարանի մասին, քննադատում է դիմացիին՝ իր պարտականությունը չկատարելու և պահանջվող տեղեկատվությունը չտալու համար:

“What do you know? You don’t know anything”

Խոսողի խոսքահերթը կազմված է անուղղակի դժգոհություն արտահայտող խոսքային ակտերից, որոնցով նա փորձում է իրագործել քննադատման պերլոկուտիվ ազդեցություն: Սույն անուղղակի խոսքային գործողությունները կարելի է որակել որպես մեղմ քննադատություն արտահայտող, քանի որ խոսողը իր հաղորդակցական մտադրությունն արտահայտում է միջին տոնայնության ասույթով. նա չի գոռում, սակայն նրա խոսքը չի կարելի որակել հանգիստ տոնայնությամբ արտաբերված:

“They come into our house and tell us we don’t live there anymore. It now belongs to a certain SS officer.”

Սույն ասույթն անուղղակի բողոք է արտահայտում և արտաբերվում է հանգիստ ցածրացող տոնով: Ասույթն արտաբերող աղջիկը բողոքում է բնակարանը կորցնելու առիթով: Ելնելով ասույթի տոնայնությունից՝ կարելի է ասել, որ այստեղ խոսքը մեղմ քննադատության մասին է:

Հետևյալ օրինակում երկխոսության մասնակիցներից մեկը քննադատում է քաղճառայողին իր պարտականությունները արդյունավետ չկատարելու համար.

“Aren’t you supposed to be able to help”: ↗

Ասույթի հնչերանգային առանձնահատկությունները մեզ հիմք է տալիս ասելու, որ այն արտահայտում է *ուժեղ քննադատում*: Սույն խոսքային ակտն անուղղակի բողոք է. արտաբերելով վերոնշյալ ասույթը՝ խոսողը փորձում է քննադատման պերլոկուտիվ ազդեցություն իրագործել խոսընկերոջ վրա:

Հետևյալ օրինակում խոսակիցները հրեաներ են, իսկ հաղորդակցումը տեղի ունենում նացիստական Գերմանիայում Երկրորդ աշխարհամարտի ժամանակ:

“What if I just took this thing off” “What they’re gonna do about it” “They’ll shoot you”

Չհանդուրժելով այն փաստը, որ ինքը ստիպված է հագուստի վրա կրել իր հրեական ծագումը մատնանշող լաթի կտոր՝ աղջիկն իր քննադատական վերաբերմունքն է արտահայտում անուղղակի առաջարկ արտահայտող խոսքային ակտով: Ի պատասխան արված առաջարկին՝ հետևում է ուղիղ զգուշացում՝ *“They’ll shoot you”*, որտեղ զեղչված է *“I warn you”* պերֆորմատիվը: Նրա ասույթն արտաբերված է իջնող տոնով, ձայնին բնորոշ է ելնեջների

ցածրություն, ինչը թույլ է տալիս կատարված քննադատման ուժգնության աստիճանը որակել մեղմ:

Հետևյալ օրինակում ասույթն արտաբերողը հրեական համայնքի ներկայացուցիչ է, որը դժգոհում է նացիստական Գերմանիայի քաղաքականությունից.

“What community Jews no longer own businesses”

Սույն օրինակում, խոսողը անուղղակի բողոք է արտահայտում իր կյանքում տեղի ունեցած փոփոխությունների վերաբերյալ, քանի որ դրանք բացասաբար են անդրադարձել իր և համայնքի անդամների կյանքի որակի վրա: Հնչող անուղղակի խոսքային ակտերի վերհատույթային մակարդակի և գեղարվեստական կինոնկարում կիրառված հարալեզվական առանձնահատկությունների քննությունը ցույց է տալիս, որ խոսքը մեղմ քննադատության մասին է:

Այս երկխոսական միավորում ընկերները հրեա վերավաճառողներ են, որոնք քննարկում են իրենց առևտրային գործերը.

Fss.

What?

You don't recognize this

It's shoe polish

In metal container

You asked for shoe polish

In metal containers This is glass this is 'not what I asked for

What's the difference My client sold it to his client who sold it to the German army by the time it got there because of the freezing sold it broke All thousand units

This is not my problem This is not your problem

All right The German army wants to find out

*where it came from, I'm going to make sure that
they find out*
Now it's your problem, You be quiet

Երկխոսական միավորը սկսվում է խոսողներից մեկի կողմից հարալեզվական միջոցի կիրառմամբ, որով նա արտահայտում է իր արհամարհական վերաբերմունքը դիմացինի նկատմամբ՝ “*Fss*”: Սակայն ինչպես պարզվում է, խոսքնկերը չի հասկանում իրեն ուղղված բացասական վերաբերմունքը և փորձում է ճշտել այն՝ արտաբերելով “*What?*” գեղջված հարցական ասույթը: Խոսքնկերներից մեկը, ձեռքում պահած մի մետաղյա տարա, արտաբերում է “*You don't recognize this.*” ասույթը: Վերջինս իր քերականական կադապարով հաստատական է, սակայն խոսողն այն արտաբերում է բարձրացող տոնով, որի պատճառով այն դառնում է քննադատություն արտահայտող հարցական ասույթ: Սակայն այս դեպքում խոսողը դարձյալ չի կարողանում հաջողությամբ իրագործել քննադատման պերլոկուտիվ ազդեցություն, որովհետև ունկնդիրը հավանաբար չի ընկալում իրեն ուղղված ներազդումը և միանգամայն հանգիստ տոնով պատասխանում է նրան. “*It's shoe polish.*”: Հաջորդ հաստատական ասույթները կրկին ուժեղ քննադատում են արտահայտում. “*In metal containers This is glass this is 'not what I asked for.*”, որից հետո խոսքնկերը մեկնաբանում է իրեն ուղղված քննադատությունն ու արձագանքում դրան. “*What's the difference*” հարցական ասույթը արտաբերվում է իջնող տոնով, հանգիստ ձայնով, այսինքն՝ խոսակիցը նախընտրում է հակամարտելու փոխարեն բացատրություն պահանջել: Կրկնելով դիմացինի արտաբերած նույն ասույթը (“*What's the difference My client sold it to his client who sold it to the German army by the time it got there because of the freezing cold it broke All thousand units*”)՝ խոսողն իր քննադատական վերաբերմունքն է արտահայտում դիմացինի վարքագծի նկատմամբ՝ միաժամանակ բացատ-

րելով, թե որն է վերջինիս սխալը: Սույն ասույթը արտաբերվում է իջնող տոնով, սակայն խոսողի բարձր հուզականությունն արտահայտված է հայացքի, դիմախաղի միջոցով: Ունկնդիրը, սակայն կրկին չի ընդունում իրեն ուղղված քննադատությունը, ինչի մասին վկայում է ձայնի հանգստությունը, որով նա արտաբերում է պնդում արտահայտող հաստատական ասույթը. “*This is not my problem,*”: Նա իր խոստումը կատարել է. բերել է պահանջված ապրանքը: Վերջնականապես կորցնելով համբերությունը՝ խոսակիցը բարձրացող տոնով արտաբերում է հետևյալ անուղղակի հարցի վերածված հաստատական ասույթը. “*This is not your problem*”: Հատկանշական է, որ խոսակցի բացասական տրամադրվածությունը արտահայտվում է նաև խոսողի սպառնալիք արտահայտող ժեստերով: Ունկնդիրը, սակայն, կրկին չի ընդունում իրեն ուղղված քննադատումը՝ պնդելով, որ ինքը բերել է իրեն հանձնարարված ապրանքը: Խոսողն այնուհետև մի փոքր հանդարտվում է և իր սպառնալիքն արտահայտում իջնող տոնով արտաբերված ասույթի միջոցով. “*All right The German army wants to find out where it came from I’m going to make sure that they find out.*”: Սակայն սպառնալիքի ուժգնությունն արտահայտված է շարժումների, հայացքի միջոցով. խոսողը սկզբում սպառնալից շփում է քիթը, այնուհետև ագրեսիվ հայացքով նայում է դիմացինին: Խոսակցությանը միջամտում է երրորդ մասնակիցը, որը, իջնող տոնով արտաբերելով անուղղակի նախազգուշացում արտահայտող խոսքային ակտը, նույնպես քննադատում է ունկնդրին. “*Now it’s your problem.*”: Ունկնդիրը, սակայն, բարձրացող տոնով արտաբերելով հրաման արտահայտող “*You be quiet*” ասույթը, հակադարձում է քննադատական ներազդմանը: Հատկանշական է, որ խոսողն իր քննադատական վերաբերմունքը արտահայտում է ագրեսիվ հայացքի միջոցով: Սույն երկխոսության մեջ առկա քննադատական տարրերին բնորոշ հնչերանգային և հարալեզ-

վական առանձնահատկությունների վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ այստեղ առկա է *երկկողմանի քննադատում*, որովհետև խոսակիցներից յուրաքանչյուրը հակադարձում է իրեն ուղղված քննադատմանը, որի պատճառով սույն հաղորդակցական իրադրությունը վերածվում է հակամարտության:

Հետևյալ օրինակում, ի պատասխան պրն Շինդլերի գործնական առաջարկի, հրեա գործարարները իրենց դժգոհությունն են արտահայտում, ինչն էլ զայրացնում է Շինդլերին:

Not good enough ↘
Schindler: Not good enough ↗ *Look where you're living.* ↘ *Look where you've been put* // *Not good enough.* ↘ *A couple of months ago you'd be right* // *not any more* ↘
Money is still money. ↘
Schindler: No, it is not ↘ *That's why we are here.* ↘
Trade goods is the only currency that will be worth anything in the ghetto. ↘ *Did I call this meeting* ↗ *You told Mr. Stern you wanted to speak to me.* ↘ *I am here.* ↘ *I made you a fair offer.* ↘

Շինդլերն իր զայրույթն արտահայտում է բարձրացող տոնով՝ կրկնելով հաստատական ասույթը՝ “*Not good enough.*”: Հաջորդ ասույթները արտաբերվում են բարձր ձայնային ելևէջներով և իջնող տոնով, ինչը վկայում է խոսողի խիստ հուզվածության մասին՝ “*Look where you're living. Look where you've been put.*”: Այդ են վկայում նաև այնպիսի հարալեզվական միջոցների առկայությունը, ինչպիսիք են արհամարհական հայացքը, դադարները: Շինդլերի ձայնն այնուհետև իջնում է, և նա խոսքը շարունակում է՝ ավելի հանգիստ ձայնով արտաբերելով իջնող տոնով հաստատական ասույթներ. “*A couple of months ago you'd be right // not any*

more.?: Հասկապես շեշտելով “*not any more*” ժխտական դերանուն պարունակող արտահայտությունը՝ Շինդլերը իր քննադատական վերաբերմունքն է արտահայտում խոսքնկերների նկատմամբ, ինչին նրանք արձագանքում են իջնող տոնով արտաբերված հաստատական ասույթով. “*Money is still money.*”: Տեսնելով, որ իր քննադատությանը հակադարձում են՝ Շինդլերը կրկնում է այն նոր ուժով՝ փորձելով խոսակիցներին հասկացնել իրենց սխալ դիրքորոշումը: Շեշտը, բարձրացող տոնով արտաբերված ասույթը՝ “*Did I call this meeting*”, մատնանշում են նրա բացասական տրամադրվածությունը: Ինչպես տեսնում ենք, սույն երկխոսական միավորը պարունակում է *երկկողմանի քննադատում*. խոսակիցներից յուրաքանչյուրը քննադատաբար է մոտենում դիմացինի տեսակետին: Նշենք, որ սույն երկխոսական միավորում առկա է *թույլ* քննադատում. խոսակիցները իրենց հաղորդակցական նպատակն իրագործելու համար կիրառում են իջնող տոնով ասույթներ, ինչպես նաև ժամանակ շահելու, հակամարտությունից խուսափելու համար հաճախ դիմում են դադարների օգնությանը:

Հետևյալ օրինակում երկխոսությունը սկսվում է անուղղակի հանդիմանությամբ, որով Շինդլերը քննադատական ներազդում է կատարում հաշվապահի վրա.

Schindler: Just prete 'nd for Christ's sake Stern:
Is that all ↗ ↘ ↙
Schindler: I am trying to thank you I'm saying I
couldn't have done this witout you ↘ ↙
The usual thing
would be to acknowledge my gratitude That would
also by the way be the courteous thing ↘ ↙
Stern: You're welcome ↘ ↙

Հաշվապահը չի կարողանում կամ չի ուզում ընդունել Շինդ-

լերի շնորհակալությունը: Հատկանշական է, որ ասույթն արտաբերված է իջնող տոնով, սակայն շեշտելով *prete 'nd* բառը՝ Շինդլերն ուզում է, որ խոսքնկերն ընդունի իր սխալը: Սակայն դա նրան չի հաջողվում, քանզի Շտեռնը ընդհատում է նրան՝ հակադարձելով հարցով. “*Is that all.*” ասույթը: Սակայն իջնող տոնով արտաբերված հաստատական ասույթներով Շինդլերը անուղղակի հանդիմանության գործողություն է իրականացնում՝ կրկին փորձելով խոսակցին հասկացնել նրա սխալը. “*I am trying to thank you. I'm saying I couldn't have done this without you. The usual thing would be to acknowledge my gratitude. That would also by the way be the courteous thing.*”: Սույն երկխոսական միավորում առկա հնչերանգային և հարալեզվական տարրերի քննությունից կարելի է եզրակացնել, որ այն պարունակում է *թույլ* քննադատում, այսինքն՝ *միակողմ քննադատում*, քանզի Շտեռնը չի հակադարձում Շինդլերի քննադատական ներազդմանը:

Հետևյալ երկխոսության մեջ Շինդլերն անուղղակի հանդիմանում է իր հաշվապահին սխալ աշխատող ընտրած լինելու համար:

Schindler: By the way ↗ *do 'n 't ever do that to me again*
Did you happen to notice that that man had one arm ↗
Stern: Did he ↘
Schindler: Wha 't's his use ↘ *Stern: Very useful* ↘

Բարձրացող տոնով արտաբերելով “*By the way*” արտահայտությունը՝ նա մի պահ դադար է տալիս, ինչը խոսում է նրա խիստ հուզված հոգեվիճակի մասին: Հրամայական ասույթը, որտեղ հատկապես շեշտված է “*do 'n 't*” ժխտական բառը, ոչ թե արգելք է, այլ անուղղակի հանդիմանություն, որով նա քննադատում է Շտեռնի սխալ վարքագիծը: Հատկանշական է, որ հանդիմանու-

թյունն արտաբերելիս Շինդլերի դեմքն արտահայտում է զայրույթ, արհամարհանք:

Բարձրացող տոնով արտաբերելով հաջորդ հարցական ասույթը՝ *“Did you happen to notice that that man had one arm”*՝ Շինդլերը դարձյալ անուղղակի հանդիմանում է Շտեռնին: Շտեռնի պատասխանից դատելով՝ նա ընդունում է իրեն ուղղված քննադատությունը, քանզի նրա ընդհանուր հարցական ասույթն արտաբերվում է իջնող տոնով: Կրկին շեշտելով *Wha ‘t’s* հարցական բառը՝ Շինդլերը փորձում է հասկացնել Շտեռնին իր սխալը: Շտեռնի դիմախաղից, ժեստերից կարելի է եզրակացնել, որ նա ակամա ընդունում է իր մեղքը և խուսափում է նայել Շինդլերի դեմքին: Ինչպես տեսնում ենք, սույն կոնֆլիկտային իրադրությունը չի վերածվում հակամարտության, որովհետև խոսակիցն ընդունում է իրեն ուղղված քննադատումը:

Հետևյալ օրինակում հաղորդակցումը դարձյալ տեղի է ունենում Երկրորդ աշխարհամարտի ժամանակ նացիստական Գերմանիայում, որտեղ հրեաները ճնշվում, խտրականության են ենթարկվում:

Schindler: I lo ‘st a day of production Ralph //I lost a worker //I expect to be compensated Ralph: File a grievance to the economic office
Schindler: Would that do any good
Ralph: Of course not. A one ‘ armed mac ‘hinist //
Oscar Schindler: He was a metal press operator //
Quite ski ‘lled

Շինդլերը բողոքում է մի բարձրաստիճան գինվորականի, որի հրամանով իր հրեա աշխատողները գործարանում աշխատելու փոխարեն ստիպված են ձյուն մաքրել. *“I lo ‘st a day of production Ralph //I lost a worker //I expect to be compensated”*: Երկ-

խոսության մեջ դադարների առկայությունը, ինչպես նաև արտաբերվող ասույթների արագությունը պայմանավորված են Շինդլերի հուզվածության բարձր աստիճանով: Ի պատասխան իրեն ուղղված քննադատման՝ զինվորականը արտաբերում է խորհուրդ պարունակող հաստատական ասույթ, որը, սակայն, ուղեկցվում է արհամարհական ժպիտով, ինչը վկայում է այն մասին, որ Շինդլերի քննադատական ներագրումն իր նպատակին չի ծառայել. խոսքերը չի գոչում արարքի համար: Բարձրացող տոնով արտաբերելով հարցական ասույթը՝ *“Would that do any good”* Շինդլերը չի երկմտում և շարունակում է իր քննադատական դիրքորոշումն արտահայտել տեղի ունեցածի վերաբերյալ, ինչը, սակայն, կրկին չի թողնում ակնկալվող ազդեցությունը. զինվորականը արհամարհական ծիծաղում է՝ ժխտելով իր իսկ տված խորհուրդը: Այնուհետև, հատկապես շեշտելով յուրաքանչյուր բառը, նա արտաբերում է հետևյալ ասույթը. *“A one ‘armed mac ‘hinist // Oscar”*, որով նա անուղղակի հանդիմանում է Շինդլերին՝ հաշմանդամ բանվոր վարձելու համար:

Խոսողի կողմից դադարի կիրառումը մատնանշում է նրա հուզված լինելու մասին: Սույն երկխոսական միավորի ճիշտ մեկնաբանումը պարտադրում է հենքային գիտելիքի ակտիվացում՝ հատկապես կարևորելով այն հարատեքստը, որում տեղի է ունենում հաղորդակցումը: Այս հաղորդակցական իրադրության մասնակիցները շատ լավ գիտեն, որ վարձելով հրեա բանվորների՝ Շինդլերը փորձում է փրկել նրանց կյանքը: Ի պատասխան իրեն ուղղված հանդիմանության՝ Շինդլերը արտաբերում է հետևյալ ասույթները՝ *“He was a metal press operator // Quite ski ‘lled”* հատկապես շեշտելով *ski ‘lled* բառը, որով նա կրկին փորձում է ընդգծել դիմացինի անիրավացիության աստիճանը: Սույն երկխոսական միավորը պարունակում է *երկկողմանի քննադատում*, որովհետև Շինդլերը և զինվորականը փոխադարձ քննադատական նե-

րագրում են իրականացնում միմյանց վրա:

Ներկայացնենք «Աղախիններ» գեղարվեստական ֆիլմից վերցված երկխոսական միավորներ, որտեղ առկա են քննադատական նրբերանգներ: Հետևյալ օրինակում անուղղակի հանդիմանություն արտահայտող խոսքային ակտերն արտաբերվում են իջնող տոնով. Էլիզաբեթը հանդիմանում է Էյբրլինին դանդաղկոտության համար. *Elisabeth: Aibilee 'n the girls are upon up and the table isn't set Set out the desert forks please Aibilee 'n the girls are upon up and the table isn't set.* Դատելով խոսքնկերոջ պատասխանից՝ կարելի է ասել, որ Էլիզաբեթին հաջողվում է իրականացնել քննադատման պերլոկուտիվ ազդեցություն, որովհետև Էյբրլինը լռում է, այսինքն՝ ընդունում է իր մեղքը:

Հետևյալ օրինակում քննադատական ներագրումն իրականանում է հարալեզվական միջոցների շնորհիվ.

Elisabeth: Who's that on the phone Aibleen

Aibileen: Miss Celia Foote

Hilly: Very Angry Look

Elisabeth: I've never called her back Hi 'lly Hilly:

She can't take hint can she?

Երկխոսության մասնակիցներից Հիլին իր բացասական վերաբերմունքն ի ցույց է դնում ջղային, ագրեսիվ հայացքով: Ի պատասխան իրեն ուղղված քննադատման՝ Էլիզաբեթը սկսում է արդարանալ՝ նշելով, որ ինքը չի շփվում անցանկալի անձի հետ: Հատկապես շեշտելով գրուցակցի անունը՝ Էլիզաբեթը ցանկանում է, որ Հիլին իրեն հասկանա և խրախուսի: Սույն երկխոսական միավորում առկա քննադատական տարրերի ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել, որ այն *միակողմ քննադատում* է պարունակում, որովհետև Էլիզաբեթը չի հակադարձում խոսքնկերոջը, այլ փորձում է իրեն արդարացնել:

Հետևյալ օրինակում Սկիթըրն անուղղակի հանդիմանությամբ իր քննադատական վերաբերմունքն է արտահայտում Հիլիի նկատմամբ, որովհետև նա ուզում է, որ աֆրոամերիկացիներն օգտվեն առանձին զուգարաններից:

Skeeter: *I wish you just built you ' a bathroom outside Hilly*

Hilly: You're not to joke about the colored situation I'll do whatever it takes to protect my childre 'n

Հիլին դրանից շատ է վրդովվում և իջնող տոնով արտաբերելով ուղիղ արգելք արտահայտող խոսքային ակտ՝ հակադարձում է իր հասցեին արված քննադատությանը. “*You're not to joke about the colored situation.*”: Հատկանշական է, որ այդ պահին Հիլիի դեմքին հայտնվում է ագրեսիվ, վճռական արտահայտություն:

Մեր ուսումնասիրությունները հիմք են տալիս ասելու, որ խոսքի վերհատության մակարդակում քննադատումը հիմնականում արտահայտվում է իջնող տոնով: Սուր քննադատում արտահայտելիս հաղորդակցվողների խոսքն առանձնանում է բարձր արագությամբ, ձայնային բարձր ելևէջներով, դադարների հաճախակի կիրառմամբ: Խոսքի վերհատության մակարդակում մեղմ քննադատությունը դրսևորվում է հանգիստ ձայնային ելևէջներով, դանդաղ խոսքով: Ամփոփելով կարող ենք եզրահանգել, որ իլլոկուտիվ մակարդակում քննադատումը հնարավոր է արտահայտել, բացասական նրբերանգներ պարունակող այնպիսի խոսքային ակտերի միջոցով, ինչպիսիք են արտահայտչականների դասին պատկանող *հանդիմանությունը վիրավորանքը, բողոքը, դժգոհությունը*, ինչպես նաև հանձնառական խոսքային ակտերի դասին պատկանող *սպառնալիքը*: Փաստական նյութի քննությունից պարզ է դառնում, որ իլլոկուտիվ մակարդակում քննադատական վերաբերմունքը կարող է արտահայտվել նաև

այնպիսի խոսքային ակտերի միջոցով, որոնք չեն պարունակում բացասական նրբերանգներ: Այսպես, օրինակ, դիրեկտիվ խոսքային ակտերի դասին պատկանող հրամանն ինքնին չի արտահայտում բացասական նրբերանգներ, սակայն հաղորդակցվելիս այն կարող է դառնալ խոսողի քննադատական վերաբերմունքն արտահայտելու գործիք: Արտաբերելով ուղիղ հրաման արտահայտող իլլոկուտիվ ակտ. խոսակիցները խոսքնկերոջը ստիպում են դադարեցնել տվյալ հասարակական նորմը խախտող որևէ վարքագիծ: Հատկանշական է, որ քննադատական ներագրում գործելիս խոսողները անուղղակի հրաման արտահայտող խոսքային ակտեր չեն կիրառում: Նույն դիրեկտիվների դասին պատկանող զգուշացումները նույնպես կիրառվում են խոսողի քննադատական դիրքորոշումն արտահայտելու նպատակով:

Քննադատման ներագրեցության քննությունը խոսքի վերհատույթային մակարդակում ցույց տվեց, որ ինչպես հնչերանգը, այնպես էլ հարալեզվական և շարժաբանական միջոցները կարող են արդյունավետ լինել խոսողի քննադատական վերաբերմունքն արտահայտելու գործում: Չնայած այն փաստին, որ հնչերանգը դիտվում է լեզվական միջոց, իսկ հարալեզուն՝ արտալեզվական, խոսողի հաղորդակցական նպատակն արտահայտելու ժամանակ վերոնշյալ երկու միջոցներն էլ կիրառվում են: Նշենք, որ գրավոր դիսկուրսում հեղինակի նշագրումները նույնպես նպաստում են քննադատական ներագրման առկայությունը որոշարկելուն: Այսպես, հեղինակի կողմից փակագծերում արված այնպիսի նշագրումներ, ինչպիսիք են {With outlandish horror}, {Viciously triumphant}, ընթերցողին հնարավորություն են ընձեռում որոշարկելու քննադատման առկայությունը: Հատկանշական է, որ գրավոր դիսկուրսում նույն ասույթի կրկնությունը, դադարների կիրառումը, ասույթում առկա իմաստային տարրերից մեկի հատուկ առոգանությամբ արտաբերումը նույնպես օգնում են որոշարկել

առկա քննադատական նրբերանգները: Մեր ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում ասելու, որ խոսքի վերհատույթային մակարդակում քննադատումը կարող է արտահայտվել նաև ոչ լեզվական միջոցներով: Այսպես, խոսակիցները իրենց սուր քննադատումը կարող են արտահայտել արհամարհական քմծիծաղի, ջղային հայացքի, արհամարհական ժեստերի միջոցով: Դրանք կարող են նույնքան արդյունավետ լինել խոսողի քննադատական վերաբերմունքն արտահայտելու գործում, որքան լեզվական միջոցների՝ հնչերանգի, բառերի, արտահայտությունների, խոսքային ակտերի կիրառումը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Քննելով քննադատման հասարակական երևույթի ծագումը, դրա իմաստային դաշտը՝ կարելի է նշել, որ «քննադատություն» բառը ժամանակի ընթացքում իմաստային փոփոխությունների է ենթարկվել: Այսպես, մինչև 17-րդ դարը, այն միայն *գրաքննադատություն* էր նշանակում: Այնուհետև այդ հասկացությունը իմաստային փոփոխության ենթարկվեց՝ ձեռք բերելով ընդհանրական «պախարակել» և նեղ «զարգացած ճաշակ» իմաստները: 19-րդ դարում Է. Կանտը «քննադատություն» բառը նոր իմաստով կիրառեց, այն է՝ գիտելիքի քննադատական ուսումնասիրություն: Փիլիսոփաներ Ք. Փոփերի և Ի. Լակատտսի կարծիքով քննադատությունը գիտական գործունեության անբաժանելի մաս է, ուստի ինչպես գրաքննադատությունը, այնպես էլ գիտական քննադատությունը դարձան հաճախ կիրառվող արտահայտություններ (<http://en.wikipedia.org/wiki/Criticism>):

1970-ական թթ. ի հայտ եկավ դիսկուրսի քննադատական վերլուծություն գիտաճյուղը (van Dijk 1977): Առկա են քննադատության՝ որպես բացասական վերաբերմունքի հետևյալ սահմանումները՝ քննադատություն՝ (փոխբ.) պարսավ, պախարակություն, դատապարտություն (Ադայան 1976): Պարսավ, յարձակում որևէ անձի կամ գործունեության վրա (Մալխասեանց 2010): Պարսավ, պարսավանք, պախարակություն (Սուքիասյան 1967):

2. Բարկությունը հույզ է, որը պայմանավորված է անհատի՝ վիրավորված, դրժված կամ սխալ ընկալված լինելու մեկնաբանմամբ և հակվածություն է դրսևորում համապատասխան փոխհատուցմամբ: Քանի որ բարկությունը հաճախ ի հայտ է գալիս կոնֆլիկտային փոխհարաբերություններում, ապա այն քննության է առնվում նաև հակամարտաբանների կողմից (Ռոստոմյան 2013, Goleman 1995):

3. Բացասական հույզերի լեզվական դրսևորման գործարանական քննությունը ցույց է տալիս, որ տեղեկության կողավորման և ապակողավորման ժամանակ խոսողներն առաջնորդվում են իրենց հենքային գիտելիքներով, մասնավորապես հուզական ներաշխարհում՝ հիշողության պահեստարանում ամբարված գիտելիքով, ուստի միմյանց հանդեպ տաժած բացասական հույզերը կարող են բացասաբար անդրադառնալ խոսընկերների միջանձնյա փոխհարաբերությունների վրա (Ռոստոմյան 2013):

4. Բրաունը և Լևինսոնը դրական քաղաքավարությունը սահմանում են որպես հաղորդակցման մի տեսակ, որտեղ բովանդակությունը չի կարևորվում, հաղորդակցվողները ուզում են հաստատել և պահպանել բարիդրացիական հարաբերություններ (Brown & Levinson 1987):

5. Փ. Գրայսի առաջադրած կարգախոսները պահանջում են հաղորդակցվել հստակ, անկեղծ արդյունավետ և ըստ էության: Հատկանշական է, որ սույն կարգախոսների խախտումը կարող է հաղորդակցման ձախողման, իսկ որոշ դեպքերում՝ նաև հակամարտության հանգեցնել:

6. Մույն տեսության համաձայն, եթե անհատը ցանկանում է հաջող հաղորդակցական ակտ իրականացնել, ապա նա պետք է տեղեկատվությունը բացահայտ կերպով արտահայտի, ինչի շնորհիվ ունկնդիրը խոսողի արտաբերած ասույթի նպատակադրված հաղորդակցական իմաստը ճիշտ կմեկնաբանի (Lakoff 1973):

7. Ներասույթային մակարդակում խոսքին հուզական նրբերանգ հաղորդող բառային միջոցները կարելի է բաժանել դրական կամ բացասական խմբերի: Ասույթին բացասական ներիմաստ հաղորդող սաստկական բառեր ու շարույթներ՝ who/what/why/where, what the hell, the hell, damned, bloody, for God's sake և այլն (Ռոստոմյան 2013):

8. Սակայն հարկ է նշել, որ, ի տարբերություն որոշ հնչերանգային միջոցների, հարալեզվական միջոցների գործառույթը միայն որոշակի դիրքորոշում արտահայտելն է (Crystal 1969:139): Մինչդեռ հնչերանգային միջոցները կարող են ունենալ քերականական, վերաբերմունքային, գեղագիտական գործաբանական և այլ գործառույթներ: Հաղորդակցման գործընթացի բնույթը կարելի է մեկնաբանել ոչ միայն լեզվի, այլև ձայնի որոշակի տոների, ելևէջների, դիմախառի, հայացքի միջոցով: Զրուցակիցներին բնորոշ հնչերանգային հատկանիշները կարող են նրանց սցիպակական դիրքը, իրական ինքնությունը բացահայտելու գործիք դառնալ: Հարալեզուն ինքնին նպաստում է հաղորդակցման ժամանակ դրական կամ բացասական մթնոլորտ ստեղծելուն: Հարկ է նշել, որ հնչերանգը կարող է կիրառվել երկու ձևով՝ նախ՝ որպես անձնական վերաբերմունք արտահայտելու միջոց, որի դեպքում իրականացվում է վերջինիս հարալեզվական գործառույթը, այնուհետև՝ որպես այս կամ այն խոսքային ակտի իլլոկուտիվ իմաստը որոշարկելու միջոց, այսինքն, թե ինչպես է ներկայացվում ասույթի բովանդակությունը (propositional content):

9. Որպես հնչերանգի սխալ մեկնաբանման օրինակ՝ նա նշում է այն սահմանումը, ըստ որի՝ հարցերն արտաբերվում են բարձրացող տոնով, իսկ հաստատական նախադասությունները՝ իջնող, ինչն էլ հարցական ասույթները հաստատական ասույթներից տարանջատելու հիմք է դառնում: Գոյություն ունի կարծիք, համաձայն որի՝ բարձրացող տոնը արտահայտում է հարցին բնորոշ իմաստ: Սակայն, ինչպես նշում է Դ. Քրիսթըլը, ուսումնասիրությունները փաստում են, որ բարձրացող հնչերանգը կարող է ոչ միայն հարցեր արտահայտել, իսկ հարցերն էլ ոչ միայն բարձրացող հնչերանգով են արտաբերվում (Crystal 1969): Ասույթի ճիշտ մեկնաբանումը կախված է մի շարք կարևորագույն գործոններից, որոնցից արժի նշել իմաստային, քերականական, իրադ-

րային, ոչ լեզվական հարատեքստը: Օրինակ՝ “He’s coming,” “He’s coming” միևնույն ասույթը հնչերանգի միջոցով հաստատական ասույթից վերածվում է հարցականի, մինչդեռ նման փոխատեղությունը հետևյալ օրինակում՝ “What’s he doing?” What’s he doing, կարող է հակասության պատճառ դառնալ, որովհետև «հարցը» չի կարող փոխակերպվել «հարցի»: Վերոնշյալ օրինակը կարելի է որակել որպես շփոթվածության, զարմանքի արտահայտում, որտեղ առկա է հնչերանգի վերաբերմունքային գործառույթը: Այս հակասությունը հնարավոր չէ բացատրել քերականական չափորոշիչներով. այն ավելի շատ վերաբերում է ասույթի զգացմունքային նրբերանգները որոշարկելուն: Հիմնվելով վերոնշյալ օրինակների վրա՝ կարելի ասել, որ հնչերանգը կարող է կարևոր, որոշիչ տարր լինել խոսքային ակտեր վերլուծելիս:

Ասույթի հնչերանգային և իմաստային կաղապարների նույնացնելը մեկ այլ պատճառով կարելի է դիտել որպես հակասական տեսակետ, որովհետև, ըստ սույն մոտեցման, ասույթի հնչերանգային գործառույթն առաջնային է, ինչն էլ անտեսում է հնչունաբանության մի քանի այլ կարևոր ոլորտներ: Այս կապակցությանը արժի նշել, որ հնչերանգը՝ որպես ձայնի բարձրության (pitch) լեզվական դրսևորում, անկախ և ինքնուրույն մի համակարգ է, որը, սակայն, անքակտելիորեն կապված է առոգանության այլ տեսակների (loudness, duration) և հարալեզվական միջոցների հետ (ոնգայնություն) (Crystal 1969):

10. Սույն տեսության համաձայն՝ հնչերանգին վերագրում են չորս գործառույթներ.

1. քերականական, որտեղ ձայնի բարձրությունը կիրառվում է որպես ձևաբանական և շարահյուսական տարբերակիչ միջոց,
2. իմաստային, որտեղ հնչերանգը կիրառվում է դիսկուրսի իմաստային համակարգը կազմակերպող տարր: Օրի-

նակ՝ ասույթում առկա նոր տեղեկատվությունը իրականացվում է հնչերանգի միջոցով,

3. վերաբերմունքային, որտեղ անձնական զգացմունքներն ասույթով արտահայտելու համար կիրառվում են այնպիսի հնչերանգային նրբերանգներ, որոնք բնորոշ են զայրույթ, շփոթվածություն պարունակող հուզական վիճակներին,
4. սոցիալական, որտեղ խոսողի հնչերանգը կարող է նրա սոցիալական և մասնագիտական պատկանելության մասին տեղեկատվություն հաղորդել (Crystal 1969):

ԳԼՈՒԽ 3

ԽՈՍՔԻ ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ՆԵՐԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԻՐԱԳՈՐԾՈՒՄԸ ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ

Երկրորդմանի քննադատման յուրահատկություններն անզլերենում

Հակընդդեմ երկխոսության իլլոկուտիվ մակարդակի վերլուծությունը (գլուխ 2.2) ցույց տվեց, որ հակամարտելիս որոշակի իլլոկուտիվ ակտերի՝ հանդիմանության, բողոքի, պախարակման, մեղադրանքի, սպառնալիքի միջոցով խոսընկերները քննադատական ներազդեցություն են իրագործում: Կատարված ուսումնասիրության վրա հիմնվելով՝ կարող ենք եզրակացնել, որ քննադատական ներազդեցությունը հնարավոր է իրականացնել տարբեր աստիճանի ուժգնությամբ, ինչը պայմանավորված է խոսողի դիրքորոշմամբ և իրագործվում է հաղորդակցական ռազմավարության ընտրությամբ՝ ուղիղ և անուղղակի խոսքային ակտերի կիրառությամբ:

Մեր կատարած հետազոտությունից (գլուխ 2-2.2) պարզ դառնում, որ բացահայտ քննադատական ներազդեցությունը խոսքային մարտավարության տեսակ է, որով խոսակիցները բացեիբաց են արտահայտում իրենց բացասական դիրքորոշումը: Խոսողի բացահայտ քննադատական վերաբերմունքը խոսընկերոջ հանդեպ, ըստ այդմ՝ քննադատական ներազդեցությունն արտահայտվում է բացասական գնահատական արտահայտող բառերով, ուղիղ խոսքային ակտերով, երբեմն էլ՝ վիրավորական արտահայտություններով: Նման ձևով իրագործվող քննադատման պերլոկուտիվ ազդեցությունը կարելի է անվանել *բացահայտ քննադատում*:

Հակընդդեմ երկխոսական միավորների քննությամբ ի հայտ

եկան նաև ոչ բացահայտ քննադատում պարունակող երկխոսական միավորներ, որոնց բնորոշ է անուղղակիության բարձր աստիճան: Դա պայմանավորված է խոսողի կողմից լեզվական քաղաքավարության նորմերը պահպանելու, ինչպես նաև հակամարտությունից խուսափելու ցանկությամբ: Ոչ բացահայտ քննադատական ներազդեցությունը իրագործվում է անուղղակի խոսքային ակտերով և կարելի է բնութագրել որպես *ներակա* քննադատում: Ուսումնասիրելով քննադատական ներազդեցության հաղորդակցական տարատեսակները (տե՛ս ենթագլուխ 2.3)՝ մենք որոշարկեցինք քննադատական պերլոկուտիվ ներազդման միակողմ և երկկողմանի բնույթ ունեցող երկխոսական միավորներ, որոնցից յուրաքանչյուրում քննադատական ներազդեցությունը կարող է իրագործվել բացահայտ կամ ներակա քննադատման եղանակով: Հետևաբար քննադատման պերլոկուտիվ ազդեցություն պարունակող հակընդդեմ երկխոսական միավորները տեսականորեն կարելի է դասակարգել հետևյալ սկզբունքով. միակողմ բացահայտ, միակողմ ներակա, երկկողմանի բացահայտ, երկկողմանի ներակա:

Պետք է խոստովանենք, որ փաստական նյութի քննությունը ցույց է տալիս, որ քննադատման պերլոկուտիվ ազդեցությունը հազվադեպ է իրագործվում միայն բացահայտ (այսինքն՝ ուղիղ խոսքային ակտերով) կամ միայն ներակա (այսինքն՝ անուղղակի խոսքային ակտերով) խոսքային մարտավարությամբ: Իրական խոսքային իրադրություններում, երկխոսական միավորներում այս մարտավարությունները զուգորդվում են, և այդ պատճառով էլ մեր քննությունը կտանենք ըստ դրանց հաղորդակցական բնույթի՝ առանձնացնելով միակողմ և երկկողմանի քննադատական ներազդում պարունակող երկխոսական միավորներ: Բացահայտ կամ ներակա խոսքային մարտավարության ընտրությամբ է պայմանավորված պերլոկուտիվ քննադատական ազդեցության

դրսևորման ուժգնության աստիճանը՝ ուժեղ քննադատում՝ ուղիղ խոսքային ակտերի կիրառման դեպքում, թույլ քննադատում՝ անուղղակի խոսքային ակտերի կիրառման դեպքում:

Հետևյալ երկխոսական միավորում առկա է *երկկողմանի քննադատում*, քանի որ խոսակիցներից երկուսն էլ նախընտրում են առձակատման գնալ:

I was sore as hell for a while when you let Mama talk and didn't say anything," I told him. "You know damn well I can't do much about kid unless I quit school and take care of him. But if Mama wants him home you should leave that up to her. *And you shouldn't have sat there and let her make a holy show of herself."*

"She got you dead to rights, Augie. *You know you've been pretty damn sloppy. But anyway we wouldn't have had the kid more than another year. Even if you were in there pitching, which you're not."*

S. B. A. O. A. M. 64

Սույն օրինակում Օգին անուղղակի հանդիմանություն արտահայտող խոսքային ակտերով քննադատական ներազդեցություն է գործում խոսքընկերոջ վրա: Նրան համակած խիստ բացասական հույզերի մասին է վկայում հեղինակի կողմից *"sore as hell"* շարույթի կիրառումը: Խոսքի ընթացքում Օգիի բացասական դիրքորոշումը եղբոր նկատմամբ աստիճանաբար ուժգնանում է, և նա քննադատական ներազդեցությունն իրագործում է ուղիղ հանդիմանություն արտահայտող խոսքային ակտով. *"And you shouldn't have sat there and let her make a holy show of herself."*: Չընդունելով իրեն ուղղված քննադատական ներազդումը՝ Սայմոնը հակադարձում է եղբորը՝ ուղիղ մեղադրանք արտահայտող

խոսքային ակտով քննադատելով նրան շարունակ անհաջողությունների հանդիպելու համար. “*You know you’ve been pretty damn sloppy.*”:

Հետևյալ երկխոսական նմուշում առկա են կոնֆլիկտային հարաբերություններ. խոսքնկերները թշնամաբար են տրամադրված միմյանց նկատմամբ:

ROCHE: I'm from Limerick. SPENS: Where?

ROCHE: Limerick. The kingdom of Munster.

Ireland. JUMBO: Fuck the Irish!

SPENS: Might have knowed. *You'm a dirty-looking sod. And all you Irish'm filthy dirty. Filthy dirty tongues, too, the bloody lot in you.*

ROCHE: *You English have always persecuted us. You English have always deliberately misunderstood us. The Saxon mind detests the poetry of Gaelic soul. Detests and loathes it.*

N.E.D. 7. 83-84

Իմանալով, որ Ռոչն իռլանդացի է՝ Ջամբոն քննադատական պերլոկուտիվ ներազդեցություն է իրագործում լուտանք արտահայտող ուղիղ խոսքային ակտով. “*Fuck the Irish!*”: Համաձայնելով ընկերոջ հետ՝ Սփենսն ուղիղ մեղադրանք արտահայտող խոսքային ակտով քննադատական ներազդեցություն է գործում Ռոչի նկատմամբ. “*You'm a dirty-looking sod. And all you*”: Սփենսի խիստ բացասական դիրքորոշման մասին է վկայում ներասույթային մակարդակում “*dirty-looking sod, filthy*” շարույթների առկայությունը: Հատկանշական է, որ Սփենսի խիստ բացասական դիրքորոշումը ուժգնացնելու նպատակով հեղինակը շարույթների կրկնության հնարին է դիմել: Այս երկխոսական միավորը պարունակում է *երկկողմանի քննադատում*, որն իրագործվում է բացահայտ խոսքային մարտավարությամբ:

Հետևյալ երկխոսական միավորում առկա է *երկկողմանի* քննադատման ընթացք, սակայն նախաձեռնությունը խոսքնկերներից մեկինն է: Այս երկխոսական նմուշը պարունակում է *բացահայտ և ներակա* քննադատման դրսևորումներ:

George: *STOP IT, MARTHA!*

Martha: {Irritated} Whadda you want?

George: { Too patiently} I'd thought you were telling the story of our courtship, Martha ... I didn't know you were going to start in on the other business.

Martha: {So-thereish} Well, I am! George: *I wouldn't, if I were you.*

E. A. W. I. A. O. V. W. 82

Երկխոսությունը, որի մասնակիցները ամուսիններ են, ծավալվում է լարված հաղորդակցական իրադրության պայմաններում, քանի որ կինը՝ Մարթան, պատրաստվում է խոսել խիստ անձնական թեմայի մասին հյուրերի ներկայությամբ: Չորջը դեմ է դրան և ուղիղ հրաման արտահայտող խոսքային ակտով քննադատում է Մարթայի վարքագիծը. “*STOP IT, MARTHA!*”: Հեղինակը մեծատառերով է ներկայացնում Չորջի հրամայական ասույթը՝ ընթերցողին տեղեկություն հաղորդելով նրան համակած խիստ բացասական հույզերի ուժգնության և արգելական հրամանի սաստկության աստիճանի մասին: Մարթայի՝ զայրացած տոնով հնչող հարցը ցույց է տալիս, որ նրան դուր չի եկել Չորջի քննադատական ներազդումը, և նա չի ցանկանում ենթարկվել հրամանին. “Whadda you want?”: Մրան հետևում է հաստատական ասույթով արտահայտված անուղղակի հրաման, որտեղ Չորջը երկար-բարակ պարզաբանում է Մարթային, թե ինչի մասին խոսել, իսկ ինչի մասին՝ ոչ: Ինչպես տեսնում ենք, Չորջի խոսքում առկա չէ բացահայտ քննադատական ներազդում, քանի

որ այս անգամ նա ցանկանում է փոխել կնոջ վարքագիծը՝ օգտագործելով իր հեղինակությունը. “I'd thought you were telling the story of our courtship, Martha ... I didn't know you were going to start in on the other business.”:

Ջորջի խոսքային մարտավարության փոփոխությունը՝ անցումը ներակա քննադատական ներագդման, հաջողությամբ չի պատկվում, որովհետև Մարթան չի ընդունում իր հասցեին արված քննադատումը և չի պատրաստվում փոխել իր մտադրությունը. “Well, I am!”: Ինչպես տեսնում ենք, Մարթան բացահայտ կերպով հակադարձում է խոսողի քննադատական ներագդեցությանը, սակայն քանի որ նրանց խոսակցությանը ներկա են օտար մարդիկ, Ջորջը չի ցանկանում սրել իրավիճակը և դարձյալ ներակա քննադատում է կատարում անուղղակի խորհուրդ արտահայտող խոսքային ակտով. “I wouldn't, if I were you.”:

Վերլուծենք ևս մեկ երկխոսական միավոր, որտեղ առկա է *երկկողմանի քննադատում*. այս դեպքում ևս քննադատումը դրսևորվում է ինչպես բացահայտ, այնպես էլ ներակա.

SARAH: *All right. Don't make a fuss.*

REG: What?

SARAH: *Don't start losing your temper over a little thing like that.*

REG: *Now, don't you start on about people losing their tempers. If anyone's got a temper in this room, we know who that is.*

A. N. C. 75

Սույն երկխոսական միավորը սկսվում է ուղիղ հորդոր արտահայտող հրամայական ասույթներով, որոնցով Սառան բացասական է գնահատում Ռեգի բնավորությունը և դրդում է նրան ետ կանգնել անցանկալի արարքներից. “All right. Don't make a fuss. Don't start losing your temper over a little thing like that.”: Հասկա-

նալով իրեն ուղղված քննադատական ներազդեցությունը՝ Ռեզն առճակատման է գնում՝ իրականացնելով ուղիղ հորդոր արտահայտող խոսքային ակտ, որով նա փորձում է համոզել կնոջը դադարեցնել քննադատումը. *“Now, don't you start on about people losing their tempers.”*: Շարունակելով իր հաղորդակցական գիծը՝ Ռեզն իրագործում է անուղղակի հանդիմանություն արտահայտող խոսքային ակտ. *“If anyone's got a temper in this room, we know who that is.”*: Հասկանալով քննադատական ներազդեցության հակադարձումը՝ Սառան այս անգամ քննադատման պերլուկուտիվ ակտ է իրագործում նախ անուղղակի բողոք *“I don't know how you have the nerve to say that.”*, այնուհետև՝ անուղղակի մեղադրանք արտահայտող խոսքային ակտերով. *“It wouldn't be surprising if I did have a temper living with you”*: Սույն երկխոսական միավորը սկսվում է բացահայտ քննադատական ներազդմամբ, սակայն Սառան, ընթացքում փորձելով էլ ավելի չսրել իրավիճակը, նահանջում է և ներակա քննադատում է իրագործում:

Հետևյալ երկխոսական միավորի քննությունից պարզ է դառնում, որ խոսակիցները նախընտրում են իրագործել *երկկողմանի* քննադատական ներազդում, որտեղ խոսակիցներից Ջորջը նախընտրում է *ներակա* քննադատում, իսկ Մարթան՝ *բացահայտ*:

Martha: Daddy has green eyes, too.

George: *He does not! Your father has tiny red eyes ... like a white mouse. In fact, he is a white mouse.*

Martha: *You wouldn't dare say a thing like that if he was here! You're a coward! E.*

E. A. W. I. A. O. V. W. 75

Ջորջը ժխտում է Մարթայի հաստատական ասույթի ստորոգման իմաստի իսկությունը. *“He does not!”*: Սակայն քանի որ նա դա անում է մեծ եռանդով, սաստկությամբ (ինչը նկատելի է՝

դատելով բացականչական նշանից), ապա ակնհայտ է, որ Ջորջի պերլոկուտիվ ներագդեցության նպատակը քննադատությունն է: Քանի որ խոսքը Մարթայի հոր մասին է, որին Ջորջը ատում է, ապա պնդում արտահայտող հաստատական ասույթում նա բացասական գնահատական է տալիս աներոջը՝ անուղղակիորեն քննադատելով Մարթային, որ այդպիսի հայր ունի. “ *Your father has tiny red eyes ... like a white mouse. In fact, he is a white mouse.* ”: Ի պատասխան ամուսնու վիրավորական արտահայտությունների՝ Մարթան մեղադրանք արտահայտող ուղիղ խոսքային ակտ է կատարում, այնուհետև՝ ուղիղ նախատինք. “*You wouldn't dare say a thing like that if he was here! You're a coward!*”, որով հակադարձում է քննադատական ներգործությանը:

Քննելով հետևյալ հակընդդեմ երկխոսության նմուշը՝ կարելի է եզրակացնել, որ հաղորդակցումը տեղի է ունենում լարված մթնոլորտում, որտեղ առկա են *բացահայտ և ներակա քննադատման* դրսևորումներ:

LINDA: *You shouldn't have criticised him, Willy, especially after he just got off the train. You mustn't lose your temper with him.*

WILLY: *When the hell did I lose my temper? I simply asked him if he was making any money. Is that a criticism?*

A. M. T. D. O. S. 7

Սույն երկխոսական միավորում խոսողներն ամուսիններ են: Ուղիղ հանդիմանություն արտահայտող խոսքային ակտով Լինդան իր բացասական վերաբերմունքն է արտահայտում ամուսնու նկատմամբ, քանի որ նա անհարկի քննադատել էր իրենց որդուն. “*You shouldn't have criticised him.*”: Ի պատասխան իրեն ուղղված հանդիմանության՝ Ուիլլին անուղղակի դժգոհություն է արտահայտում հարցական ասույթով “*When the hell did I lose my*

temper?”՝ չհամաձայնելով իրեն ուղղված քննադատական ներգործությանը: Ուիլլի խիստ բացասական վերաբերմունքի մասին է վկայում “*When the hell*” արտահայտության առկայությունը: Սույն երկխոսական միավորը պարունակում է *երկկողմանի* քննադատում, քանզի Ուիլլին, չընդունելով իրեն ուղղված հանդիմանությունը, իր հերթին հակադարձում է կնոջը անուղղակի դժգոհություն արտահայտող խոսքային ակտով:

Հետևյալ օրինակում դարձյալ առկա է *երկկողմանի քննադատում*: Եթե անդրադառնալու լինենք հարատեքստին, ապա հարկ է նշել, որ Վիկտորը եղբորից 500 \$ է պարտք խնդրել, որպեսզի ուսումը շարունակի, սակայն Ուոլթերը մերժել է նրան:

WALTER (*casting aside his caution, his character at issue*): Victor, my five hundred dollars was not what kept you from your degree! You *could have left Pop and gone right on-* he was perfectly fit.

VICTOR: And twelve million unemployed, What was that, my neurosis? I hypnotized myself every night to scrounge the outer leaves of lettuce from the Greek restaurant on the corner? The good parts we cut out of rotten grapefruit ... ?

WALTER: I'm not trying to deny _

VICTOR(*leaning into WALTER's face*): We were eating garbage here, *buster!* B. A. P. 7. 135

Ուղիղ հանդիմանություն արտահայտող խոսքային ակտով Ուոլթերը քննադատում է եղբորը նրա համար, որ վերջինս վճռական չի եղել ուսումը շարունակելու հարցում. “*You could have left Pop and gone right on-* he was perfectly fit”: Ի պատասխան իրեն ուղղված քննադատական ներազդեցության՝ Վիկտորը անուղղակի բողոք արտահայտող խոսքային ակտերով հակադարձում է եղբորը՝ քննադատելով նրան իրենց հորը ֆինանսապես երբևէ օգ-

նաձ չլինելու համար: Հասկանչական է, որ անուղղակի բողբոքն արտահայտված է հարցական ասույթների միջոցով. “And twelve million unemployed, What was that, my neurosis? I hypnotized myself every night to scrounge the outer leaves of lettuce from the Greek restaurant on the corner? The good parts we cut out of rotten grapefruit ... ?”: Չկարողանալով հակադարձել եղբորը՝ Ուոլթերն անավարտ է թողնում անհամաձայնությունն արտահայտող խոսքային ակտը. “I’m not trying to deny _”: Վիկտորն անուղղակի բողբոք արտահայտող խոսքային ակտով շարունակում է իր հաղորդակցական ռազմավարությունը՝ եղբոր նկատմամբ քննադատական ներագրում իրագործելով. “*We were eating garbage here, buster!*”: Վիկտորին համակած խիստ բացասական զգացմունքների մասին է վկայում սույն ասույթում “*buster*” վիրավորական բառի, ինչպես նաև բացականչական նշանի առկայությունը: Սույն երկխոսական միավորը պարունակում է *երկկողմանի քննադատում*, քանի որ հաղորդակցման սկզբում Ուոլթերը հարձակվողական դիրք է գրավում, ինչի մասին վկայում է ուղիղ հանդիմանությունն արտահայտող խոսքային ակտը, մինչդեռ Վիկտորը, կտրականապես չընդունելով իրեն ուղղված քննադատումը, հակադարձում է եղբորը:

Հետևյալ օրինակի հարատեքստից երևում է, որ հաղորդակցման մասնակիցներն ունեն կոնֆլիկտային հարաբերություններ: Հարկ է նշել, որ խոսակիցներից Մարթան ավելի է հակված հակամարտելու, ուստի նա նախընտրում է բացահայտ քննադատական մարտավարությունը, մինչդեռ Ջորջը կիրառում է ներակա մարտավարություն՝ գերադասելով ինքնապաշտպանությունը:

Martha: Well, what's the name of the picture?

George: I really don't know, Martha. ... Martha:

Well, think!

George: I'm tired dear, ... it's late ... and besides...

Martha: *I don't know what you're so tired about ... you haven't done anything all day; you didn't have any classes or anything ...*

George: *Well, I'm tired. ... If your father didn't set up these goddamn Saturday orgies all the time...*

Martha: *Well, that's too bad about you, George. ...*

George {grumbling} *Well that's how it is, anyway*

E. A. W. I. A.O. V. W. 6-7

Ուղիղ մեղադրանք արտահայտող խոսքային ակտով Մարթան քննադատական ներազդեցություն է իրագործում ամուսնու վրա՝ ասելով, որ նա ամբողջ օրը ոչինչ չի արել. “*I don't know what you're so tired about ... you haven't done anything all day; you didn't have any classes or anything ...*”: Ջորջը հակադարձում է իրեն ուղղված քննադատական ներազդեցությանը անուղղակի բողոք արտահայտող խոսքային ակտով, որով նա իր բացասական վերաբերմունքն է արտահայտում Մարթայի հոր հոգնեցուցիչ երեկույթների վերաբերյալ. “*Well, I'm tired. ... If your father didn't set up these goddamn Saturday orgies all the time...*”: Մարթան ուղիղ հանդիմանություն արտահայտող խոսքային ակտով շարունակում է քննադատական ներազդեցությունը. “*Well, that's too bad about you, George*”: Ինչպես տեսնում ենք, սույն հակընդդեմ երկխոսական նմուշը պարունակում է *երկկողմանի քննադատում*, քանզի խոսակիցներից ոչ մեկը չի գնում փոխզիջման:

Հետևյալ երկխոսական նմուշի քննությունից պարզ է դառնում, որ այստեղ *երկկողմանի քննադատություն* է իրականացվում:

JENNY: Sure to break something.

BERNARD: A glass, they're only hired. Half a crown. JENNY: *Half a crown's a half a crown.*

BERNARD: *I know half a crown's a half a crown.*

JENNY: We're not made of money.

BERNARD: *No, but ...* N. E. D. 186

Եթե անդրադառնանք հարատեքստին, ապա պետք է նշել, որ ամուսինների վիճաբանության պատճառն այն է, որ իրենց որդին բաժակ է կոտրել, իսկ մայրը բարկացել է նրա վրա: Բերնարդն իր բացասական դիրքորոշումն է արտահայտում կնոջ նկատմամբ, քանի որ, ըստ նրա, Ջենին չպետք է իրենց որդուն հանդիմաներ էժանագին բաժակի համար。“ A glass, they're only hired. Half a crown.”:

Ջենին հակադարձում է անուղղակի մեղադրանք արտահայտող խոսքային ակտով՝ “*Half a crown's a half a crown*”: Քննադատման պատճառն այն է, որ Բերնարդը չգիտի դրամի արժեքը, իսկ վերջինս չի ընդունում մեղադրանքը և հակադարձում է Ջենիին անուղղակի պնդում արտահայտող հետևյալ ասույթով. “*I know half a crown's a half a crown*”: Ջենին անուղղակի մեղադրանք արտահայտող խոսքային ակտով շարունակում է քննադատական ներազդումն ամուսնու նկատմամբ. “*We're not made of money*.” Երկխոսությունը եզրափակվում է անհամաձայնությունն արտահայտող խոսքային ակտով՝ “*No, but*”, որն անավարտ է մնում:

Ներկայացնենք *Էրկկոդմանի քննադատական* ներազդման ևս մեկ նմուշ, որտեղ խոսակիցներն իրենց հաղորդակցական նպատակն իրականացնելիս կիրառում են ներակա քննադատման խոսքային մարտավարություն:

“Why, Eveline, I thought of you as a person who wouldn't be taken in by a big bluff like that. The guy's nothing but a goddam megaphone. ...

Honestly, Eveline, it's not that I expect you to fall for me, I know very well you don't give a damn about me, and why should you? ... But Christ, a damn publicity agent.”

“Now, Jerry,” said Eveline with her mouth full of hors d'oeuvres, “you know very well I'm fond of you ... *It's just too tiresome of you to talk like that.*”

J. D. P. 1919. 301

Սույն երկխոսական միավորում Ջերին անուղղակի նախատինք արտահայտող խոսքային ակտերով քննադատման պերլուկուտիվ ներագդեցություն է իրագործում Էվրլինի վրա այն բանի համար, որ նա կապվել է անարժան մարդու հետ. “*Why, Eveline, I thought of you as a person who wouldn't be taken in by a big bluff like that. The guy's nothing but a goddam megaphone.*”: Ջերիի խիստ բացասական հույզերի մասին է վկայում նաև “*goddam*” սաստկական շարույթի առկայությունը: Ի պատասխան Ջերիի քննադատման՝ Էվրլինը հակադարձում է նրան անուղղակի մեղադրանք արտահայտող խոսքային ակտով. “*It's just too tiresome of you to talk like that.*”: Սույն երկխոսական միավորում առկա է *երկկողմանի քննադատում*, որտեղ խոսակիցները, կատարելով անուղղակի հանդիմանություն և մեղադրանք արտահայտող խոսքային ակտեր, իրենց անհամաձայնությունն են արտահայտում:

Հաջորդ երկխոսական նմուշի քննությունից պարզ է դառնում, որ խոսակիցները, առճակատման ձգտելով, երկկողմանի քննադատական ներագդում են գործում միմյանց վրա:

JENNY: Like that woman in that play. BERNARD:
What play?

JENNY: Oh, I don't know, Strindberg. BERNARD:
Don't go highbrow on me. JENNY: *I thought everyone knew that.*

N.E.D. 7. 150

Սույն օրինակի հարատեքստի քննությունը ցույց է տալիս, որ Բերնարդին դուր չի գալիս կնոջ մեծամիտ վարքագիծը: Բեր-

նարդն իր քննադատական ներազդումը կնոջ նկատմամբ իրագործում է ուղիղ հրաման արտահայտող խոսքային ակտով, որով նա արգելում է կնոջն իրեն «վերնից նայել» նրա համար, որ ինքը չգիտի հայտնի կինոռեժիսոր Ստրինդբերգին. “*Don't go highbrow on me*”: Ջենին պաշտպանում է իր տեսակետը և անուղղակի հանդիմանություն արտահայտող խոսքային ակտով հակադարձում է ամուսնուն՝ նշելով, որ բոլորը ճանաչում են այդ հայտնի ռեժիսորին. “*I thought everyone knew that*”:

Հետևյալ երկխոսական նմուշը պարունակում է երկկողմանի քննադատական ներազդում, իսկ խոսակիցներն ունեն լարված հարաբերություններ:

Martha: *You didn't do anything; you never do anything; you never mix. You just sit around and talk.*

George: *What do you want me to do? Do you want me to act like you? Do you want me to go around all night braying at everybody the way you do?*

E. A. W. I. A. O. V. W. 7

Մարթան անուղղակի մեղադրանք արտահայտող խոսքային ակտերով քննադատական ներազդեցություն է իրագործում ամուսնու վրա, քանի որ նա չի հաղորդակցվում իրենց հյուրերի հետ. “*You didn't do anything; you never do anything; you never mix. You just sit around and talk.*”: Չընդունելով կնոջ մեղադրանքը՝ Ջորջն անուղղակի անհամաձայնություն արտահայտող խոսքային ակտով ինքն է քննադատում կնոջն այն բանի համար, որ նա չի կարողանում քաղաքավարի շփվել իրենց հյուրերի հետ. “*What do you want me to do? Do you want me to act like you? Do you want me to go around all night braying at everybody the way you do?*”: Ջորջն իր բացասական վերաբերմունքն է արտահայտում կնոջ վարքագծի վերաբերյալ: Նրա խիստ բացասական հույզերի մա-

սին է վկայում նաև *braying (գռալ)* սաստկական բայի առկայությունը: Սույն երկխոսական միավորը պարունակում է *երկկողմանի քննադատում*, որն ընթանում է ներակա և բացահայտ խոսքային մարտավարությամբ:

Հետևյալ երկխոսական միավորում խոսակիցները *երկկողմանի քննադատում* իրականացնելու համար կիրառում են անուղղակի խոսքային ակտ և ըստ այդմ՝ ներակա քննադատական ներազդեցություն իրագործում:

REG: *Sarah please, would you kindly stop talking. You have talked at me since I got up this morning_ you have talked at me over breakfast_*

SARAH: *It happens the only way I can get through to you_*

REG: *You talked solidly in the car for an hour_ nearly causing us to have a very serious accident ...*

SARAH: *Which was entirely your fault.*

REG: *And ever since we've been here, you haven't stopped for a second. Now, for the love of God, shut up. [Slight pause]*

SARAH: *I will not be spoken to like that. [Tearful now] I will not have you raising your voice to me like that. Just who do you think it is you're talking to?*

REG: *I think, like you, I'm talking to a brick wall. I'm going for a walk.*

A. N. C. 36

Սույն օրինակում խոսակիցներից Ռեգն անուղղակի իլլուկուտիվ իմաստ արտահայտող խոսքային ակտերով քննադատման պերլուկուտիվ ներազդեցություն է իրագործում կնոջ վրա: Այսպես, անուղղակի բողոք արտահայտող խոսքային ակտով նա

քննադատում է կնոջն այն բանի համար, որ կինն անդադար խոսում է՝ այսպիսով հոգնեցնելով Ռեզին. *“Sarah please, would you kindly stop talking”*: Սառան էլ անուղղակի մեղադրանք արտահայտող խոսքային ակտ է կատարում և նշում, որ ինքը միայն խոսելու միջոցով կարող է հաղորդակցվել ամուսնու հետ. *“It happens the only way I can get through to you”*: Ռեզն իր քննադատական դիրքորոշումը կնոջ շատախոսության վերաբերյալ արտահայտում է անուղղակի բողոք արտահայտող խոսքային ակտով, համաձայն որի՝ Սառայի շատախոսության պատճառով նրանք կարող էին լուրջ վթարի ենթարկվել. *“You talked solidly in the car for an hour_ nearly causing us to have a very serious accident”*: Սառան հակադարձում է անուղղակի մեղադրանք արտահայտող խոսքային ակտով՝ նշելով, որ վթարի մեղավորը հենց ամուսինն է: Ներասույթային մակարդակում հեղինակը կիրառել է *solidly, entirely* սաստկական մակբայները, որոնք էլ նկարագրում են խոսակիցների հոգեկան ծանր ապրումները: Ռեզն ամեն կերպ փորձում է իրագործել իր հաղորդակցական նպատակը, այն է՝ քննադատական ներազդեցությունը, և ուղիղ հորդոր արտահայտող խոսքային ակտով կնոջը դրդում է լռել. *“Now, for the love of God, shut up.”*: Հեղինակի *“for the love of God”* արտահայտության կիրառման շնորհիվ ընթերցողը կարողանում է պատկերացնել Ռեզի խիստ բացասական հույզերը: Սառան մասնավորապես անուղղակի հանդիմանություն արտահայտող խոսքային ակտերի շարքով քննադատում է ամուսնուն նրա համար, որ գոռալով իր վրա՝ նա անհարգալից վերաբերմունք է ցուցաբերել. *“I will not be spoken to like that. [Tearful now] I will not have you raising your voice to me like that. Just who do you think it is you're talking to”*:

Եզրափակելով կարելի է ասել, որ *երկկողմանի քննադատումը* կարող է դրսևորվել բացահայտ և ներակա՝ ուղիղ և անուղղակի խոսքային ակտերի միջոցով: Բացահայտ ներազդման դեպ-

քում խոսակիցը միանգամից ընկալում է խոսողի հաղորդակցական նպատակը՝ քննադատում, և հակված է հակադարձելու դրան: Ընդ որում՝ խոսակիցների՝ քննադատական ներագրում իրագործող լեզվական միջոցների ընտրությունը պայմանավորված է նրանց համակած բացասական հույզերի ուժգնության աստիճանով, ինչպես նաև նրանց առճակատման գնալու ցանկությամբ: Այլ կերպ ասած՝ իրագործելով բացահայտ քննադատական ներագրում՝ խոսակիցները նախընտրում են հակամարտել, մինչդեռ արտահայտելով իրենց քննադատական վերաբերմունքը անուղղակի խոսքային ակտերով (այսինքն՝ ներակա քննադատում իրականացնելով)՝ նրանք փորձում են հարթել ստեղծված կոնֆլիկտային իրավիճակը, զսպել խոսընկերոջը:

Միակողմ քննադատման ներագրեցության դրսևորումն անզերենում

Ինչպես նշել ենք, քննադատական ներագրեցության տարատեսակները՝ *երկկողմանի* կամ *միակողմ քննադատումը*, արդյունավետ խոսքային ռազմավարության ձևեր են, որով խոսողները փորձում են լուծել իրենց խոսքային կամ ոչ խոսքային խնդիրները:

Փաստական նյութի քննությամբ պարզ դարձավ, որ երկկողմանի խոսքային մարտավարության կիրառմամբ խախտվում են լեզվական քաղաքավարության չափանիշները, երբ խոսակիցներից յուրաքանչյուրը ավելի կարևորում է անձնական շահը: Մույն ենթագլխում քննության կառնենք խոսքային մարտավարության այլ դրսևորում՝ *միակողմ քննադատման պերլոկուտիվ ներագրեցության* կիրառումը: Պետք է ասել, որ քննադատական ներագրեցության հաղորդակցական սույն տարատեսակի գործադրումը պայմանավորված է մի շարք սոցիալ-հոգեբանական գործոններ-

րով, ինչպիսիք են ունկնդրի կողմից սեփական սխալն ուղղելու պատրաստակամությունը կամ լարված միջանձայա հարաբերությունները հարթելու, էլ ավելի չարելու ցանկությունը: Փաստական նյութի քննությամբ լուսաբանենք լեզվական միջոցների կիրառման առանձնահատկությունները, որոնց միջոցով խոսողները *միակողմ քննադատման պերլոկուտիվ ներազդեցություն* են իրագործում:

Քննենք *միակողմ քննադատում* պարունակող երկխոսական նմուշներ, որոնցում դրսևորվում է բացահայտ կամ ներակա քննադատում:

Հետևյալ երկխոսական միավորը պարունակում է *միակողմ քննադատում*, ինչը պայմանավորված է խոսընկերների հասարակական դիրքով. շարքային զինվորը իրավունք չունի առարկելու իրենից ավելի բարձր կոչում ունեցող զինվորականին:

[SMILER drops gun] HILL: *Leave it! Smiler you nasty squirming imbecile! Can't you hear me? Can't you hear anything? Don't anything go through your thick skull? Look at you. Slob! Your buttons, your blanco, your shoes – look at them.*

N.E.D.7. 54

Սերժանտ Հիլը շարքային զինվոր Սմայլերի նկատմամբ իր խիստ քննադատական վերաբերմունքը արտահայտում է ուղիղ հրաման և լուտանք արտահայտող խոսքային ակտերով. *“Leave it! Smiler you nasty squirming imbecile!”*

Սերժանտը մասնավորապես քննադատում է շարքային Սմայլերին՝ իր հրամանները ճիշտ չկատարելու համար: Ինչպես տեսնում ենք, օգտվելով պաշտոնական դիրքից՝ Հիլը բացահայտ քննադատություն է իրագործում, և նրան համակած բացասական հույզերն արտածվում են *“nasty squirming imbecile! Slob!”* վիրավորական արտահայտությունների միջոցով:

Հետևյալ երկխոսական նմուշի քննությունից պարզ է դառնում, որ խոսակիցներից Ջորջը որպես խոսքային մարտավարություն է ընտրում *բացահայտ քննադատական ներազդումը*, իսկ խոսակիցը չի հակադարձում իրեն ուղղված ներազդմանը:

Nick: Sir?

George: I said, musical beds is the faculty. ... Never mind. *I wish you wouldn't go "Sir" like that ... not with the question mark at the end of it. You know? Sir? I know it's meant to be sign of respect for your {Winces} elders ... but ... uh ... the way you do it. ... Uh ... Sir? ... Madam?*

Nick: {With a small, noncommittal smile} No disrespect intended.

E. A. W. I. A. O. V. W. 34

Եթե անդրադառնալու լինենք սույն օրինակի հարատեքստին, ապա հարկ է նշել, որ Նիքը փորձում է հարգալից վերաբերմունք ցուցաբերել Ջորջի նկատմամբ, մինչդեռ, ըստ Ջորջի, “sir” բառը արտաբերելով հարցական հնչերանգով՝ Նիքն ուղղակի մատնանշում է վերջինիս տարիքը: Ուղիղ հանդիմանություն արտահայտող խոսքային ակտով Ջորջը քննադատական ներազդեցություն է իրագործում Նիքի վրա. “*I wish you wouldn't go "Sir" like that ... not with the question mark at the end of it.*”: Ջորջին հաջողվում է իրագործել քննադատման պերլոկուտիվ ներազդեցություն. ի պատասխան իրեն ուղղված հանդիմանության՝ Նիքը հաստատական խոսքային ակտով փորձում է մեղմել Ջորջի զայրույթը. “No disrespect intended.”: Հեղինակի նշագրումը նույնպես փաստում է այն մասին, որ հակված չէ հակամարտության. {With a small, noncommittal smile}:

Հետևյալ երկխոսական միավորը բնորոշվում է հաղորդակցական ծանր մթնոլորտով:

Nick: Honey ... I didn't mean to ... honestly, I didn't mean to. ... Honey: *You ... you told them.*

...

Nick: Honey ... I didn't mean to. ...

Honey: *{With outlandish horror} You ... told them! You told them! OOOOOHHHH! Oh, no, no, no! You couldn't have told them ...oh, noooo!*

Nick: Honey, I didn't mean to. ...

Honey: *{Grabbing her belly} Ohhhhh ... nooooo.*

E. A. W. I. A. O. V. W. 147

Եթե անդրադառնալու լինենք հարատեքստին, ապա հարկ է նշել, որ Նիքը կնոջ գաղտնիքը հայտնել է անծանոթ մարդկանց, և իմանալով այդ մասին՝ Հանին ծանր ապրումների մեջ է հայտնվել: Խոսքերը ընդամենը ժխտում է խոսողի հաստատական ասույթի ստորոգման իմաստի իսկությունը: Նիքը սխալ արարք է գործել և հասկանալով դա՝ փորձում է ինքն իրեն արդարացնել. “Honey ... I didn't mean to”: Հանիի հոգեկան ծանր ապրումների մասին են վկայում “*You ... you told them.*” ասույթի բազմակի կրկնությունը, ինչպես նաև հեղինակի հետևյալ նշագրումը. *{With outlandish horror}*: Արտաբերելով ժխտական մասնիկ պարունակող “*Oh, no, no, no!*” ասույթը՝ Հանին իր զայրույթը, սարսափը, ինչպես նաև քննադատական վերաբերմունքն է արտահայտում Նիքի արարքի վերաբերյալ: “*You couldn't have told them ...oh, noooo!*” ուղիղ հանդիմանություն արտահայտող խոսքային ակտով Հանին շարունակում է իր քննադատական ներազդեցությունը: Սույն երկխոսական միավորը պարունակում է *միակողմ քննադատում*, որովհետև Նիքն ընդունում է իր մեղքը և փորձում ինչ-որ կերպ արդարանալ:

Հետևյալ երկխոսական նմուշը պարունակում է *բացահայտ - ներազդման* դրսևորում:

“Don't be a sap, Augie, and fall into the first trap life digs for you. Young fellows brought up in bad luck, like you, are naturals to keep the jails filled – the reformatories, all the institutions.

S. B. A. O.A. M. 138

Եթե անդրադառնալու լինենք հարատեքստին, ապա հարկ է նշել, որ Օգին ակամայից դարձել է հանցագործության մասնակից, ինչի համար էլ պրն Եյնհորնը խիստ քննադատում է նրան: Այսպես, ուղիղ հրաման արտահայտող խոսքային ակտով *“Don't be a sap, Augie, and fall into the first trap life digs for you ”* պրն Եյնհորը հորդորում է Օգինին չընկճվել: Եյնհորնի բացասական դիրքորշումը նաև արտահայտված է *sap (հիսար)* ամերիկյան սլենգային բառով: Այնուհետև եզրահանգում արտահայտող ուղիղ խոսքային ակտով պրն Եյնհորնը շարունակում է իր հաղորդակցական ռազմավարությունը՝ քննադատական ներազդումը. *“Young fellows brought up in bad luck, like you, are naturals to keep the jails filled – the reformatories, all the institutions”*: Օգին չի հակադարձում պրն Եյնհորնին՝ ընդունելով իր մեղքը:

Հետևյալ օրինակում Դիքի և Նեդի գծտության պատճառն այն է, որ Դիքը խիստ քննադատել էր Նեդին, քանի որ նա փորձել էր անձանոթ նավաստու հետ գնալ բար, ինչը, ըստ Դիքի, բավականին վտանգավոր է:

It was Ned moving about the room in the blue dusk. "Dick," he began to mumble as soon as the door closed behind him, *"never be sore."* He stood in the middle of the room with his hands in his pockets swaying. *"Never be sore, Dick, at things fellows do when they're drunk. ...Never be sore at anything fellows do. Be a good fellow and make me*

a cup of tea." Dick filled the kettle and lit the alcohol flame under it. "Fellow has to do a lotta damn fool things, Dick."

"But people like that ... picking up a sailor in Scollay Square ... so damn risky," he said weakly.

Ned swung around towards him laughing easily and happily, "And you always told me I was a damn Backbay snob."

J. D. P. 1919. 110-111

Հորդոր արտահայտող ուղիղ խոսքային ակտով Նեդը քննադատական ներազդեցություն է իրագործում Դիքի վրա՝ փորձելով ետ պահել նրան անցանկալի վարքագծից. *"Never be sore, Dick, at things fellows do when they're drunk. ...Never be sore at anything fellows do."* Դիքը փորձում է իրեն արդարացնել խոստովանություն արտահայտող խոսքային ակտով: Նրա ձայնի տոնից պարզ է, որ նա ընդունում է իր սխալը: Սույն երկխոսական միավորում առկա է *միակողմ քննադատում*, քանի որ Դիքը ընդունում է իր մեղքը և չի հակադարձում ընկերոջը:

Հետևյալ օրինակում նույնպես խոսքընկերները հակամարտում են:

RUTH: I can see as well as you. It's only people I sometimes can't see very clearly. NORMAN: *Our house is knee deep in unused pairs of glasses.*

RUTH: And most of the time that's preferable.

NORMAN: *It's like a sale at an optician's.*

RUTH: Norman ...

NORMAN: *Thousands of pairs of glasses.*

A. N. C. 49

Նորմանի դժգոհության պատճառը ակնոց կրելու՝ կնոջ դժկամությունն է: Անուղղակի բողոք արտահայտող խոսքային

ակտով Նորմանը քննադատում է կնոջը նրա համար, որ վերջինս գնում է ակնոցներ, սակայն չի կրում. *“Our house is knee deep in unused pairs of glasses.”*: Անուղղակի բողոք արտահայտող խոսքային ակտերով Նորմանը փորձում է կնոջը ստիպել ակնոց կրել կամ էլ դադարել գնել դրանք. *“It’s like a sale at an optician’s. Thousands of pairs of glasses.”*: Ռուբը չի հակառակվում ամուսնուն, ինչից կարելի է եզրակացնել, որ սույն երկխոսական միավորը պարունակում է *միակողմ քննադատական ներազդեցություն*:

Հետևյալ երկխոսական միավորում խոսակիցներից մեկը՝ Օգին, դարձյալ նախընտրում է չհակադարձել տիկին Ռենլինգին:

“And you know,” said Mrs. Renling after a time,
“the girl hasn’t had her eyes off you since she came
in. *Is there something between you already? Augie!*
Have you done something? Is that why you’re low?
What have you done?”

“I haven’t done anything,” I said.

“You better not!” She was on me sharp and shrewd,
just like a police matron. “You’re too attractive to
women for your own good, and you’ll end up in
trouble. So will she; she’s got hot pants, that little
miss.

S. B. A. O. A. M. 169

Տիկին Ռենլինգը հարցական ասույթների շարքով անուղղակիորեն մեղադրում է Օգին անվայել արարքի համար. *“Is there something between you already? Augie! Have you done something? Is that why you’re low? What have you done?”*: Ի պատասխան քննադատական ներազդեցության՝ Օգին ժխտում արտահայտող ասույթով կտրականապես հերքում է որևէ վատ արարքի հնարավորությունը. “I haven’t done anything.”: Սրան հետևում է ուղիղ խորհուրդ, որով տիկին Ռենլինգը փորձում է Օգին ետ պահել

սխալ արարքներից. “*You better not!*”: Սույն երկխոսական միավորում առկա է *միակողմ քննադատում*, քանի որ իրեն արդարացնելով՝ Օգին ոչ մի կերպ չի հակադարձում միսիս Ռենլինգին:

Ներկայացնենք ևս մեկ երկխոսական նմուշ որտեղ *միակողմ քննադատումն* արտահայտված է ներակա կերպով:

ANNIE: *What on earth made you think I wanted to go off and sit in some dreary hotel room on my own?*

TOM: Yes, it did seem rather odd, I must say.

ANNIE: How long have you known me?

TOM: Oh _ years ...

ANNIE: Years. And in all that time have I ever even hinted that I'd like to go off on my own?

TOM: Not as far as I know.

ANNIE: [angrily] *Then what the hell should I suddenly decide to do it now.*

TOM: Well, I don't know. *Simmer down.*

ANNIE: *Why didn't you say _ Annie will you be all right on your own? Would you like company? Someone to come along too? Someone to talk to? Why didn't you think of saying it? Just once ...*

TOM: Oh, come on ...

ANNIE: *Or was the whole prospect just too awful?*

TOM: No_

A. N. C. 29

Սույն երկխոսության մեջ Էնին խիստ բացասաբար է տրամադրված Թոմի նկատմամբ, քանի որ նա չի ցանկացել Էնիի հետ մեկնել ճամփորդության: Կատարելով անուղղակի հանդիմանություն արտահայտող խոսքային ակտ՝ Էնին քննադատում է Թոմին՝ իրեն չուղեկցելու համար. “*What on earth made you think I*

wanted to go off and sit in some dreary hotel room on my own?": Ներասույթային մակարդակում Էնիի խիստ բացասական դիրքորոշումն արտահայտված է “*What on earth*” խոսակցական արտահայտության, ինչպես նաև “*dreary*” որոշիչով: Էնին կրկին կիրառում է անուղղակի խոսքային մարտավարություն և շարունակում քննադատել Թոմին անուղղակի բողոք արտահայտող խոսքային ակտով. “*Then what the hell should I suddenly decide to do it now.*”: Ի պատասխան իրեն ուղղված քննադատման՝ Թոմը գնում է թույլ առճակատման՝ կատարելով ուղիղ հորդոր արտահայտող խոսքային ակտ, որով նա հորդորում է Էնիին հանդարտվել. “*Well, I don't know. Simmer down.*”: Էնին անուղղակի մեղադրանք արտահայտող խոսքային ակտով շարունակում է քննադատական ներազդեցությունը, որով նա անուղղակի մեղադրում է Թոմին իր նկատմամբ անտարբեր գտնվելու համար “*Why didn't you say _ Annie will you be all right on your own? Would you like company? Someone to come along too? Someone to talk to? Why didn't you think of saying it?*”: Վերոնշյալ երկխոսական միավորը *միակողմ քննադատական ներազդեցություն* է պարունակում, քանի որ Թոմը չի փորձում հակաճառել Էնիին:

Հետևյալ օրինակում հարատեքստի շնորհիվ է միայն, որ կարող ենք ընկալել խոսակիցների հաղորդակցական նպատակները, քանի որ նրանք իրենց հաղորդակցական նպատակն իրականացնում են անուղղակի խոսքային ակտերով: Այսինքն՝ հետևյալ երկխոսական նմուշը *միակողմ ներազդեցություն* է պարունակում:

BERNARD: *You haven't done anything silly?*

JENNY: I don't think so.

BERNARD: No, I mean that job you talked about.

You haven't got one behind my back?

JENNY: *Suppose I did.*

BERNARD: *You could jolly well go and un-get-it.*

N. E. D. 162-63

Եթե անդրադառնալու լինենք հարատեքստին, ապա հարկ է նշել, որ Բերնարդը կնոջը կտրականապես արգելել է աշխատել: Բերնարդն անուղղակի դատապարտում արտահայտող խոսքային ակտով քննադատում է կնոջն անխոհեմ վարքագծի համար. “*You haven't done anything silly?*”: Հատկանշական է, որ այստեղ նույնպես հարցական ասույթն արտահայտված է հաստատական նախադասության միջոցով: Հեղինակի կողմից լեզվական միջոցների նման ընտրությունը թերևս կարելի բացատրել այն փաստով, որ հեղինակը փորձում է գրավոր դիսկուրսը կենդանի խոսքին մոտեցնել:

Շարունակելով քննադատական ներազդեցությունը՝ Բերնարդը անուղղակի դատապարտում արտահայտող խոսքային ակտով ցանկանում է պարզել իսկությունը. “No, I mean that job you talked about. *You haven't got one behind my back?*”: Ի պատասխան իրեն ուղղված քննադատման՝ Ջենին խուսափում է ուղիղ պատասխան տալուց. “*Suppose I did.*”: Բերնարդը, սակայն, փորձելով գնալ առճակատման, անուղղակի հորդոր արտահայտող խոսքային ակտ է կատարում, որով կնոջը դրդում է հրաժարվել աշխատանքից. “*You could jolly well go and un-get-it.*”: Ներասույթային մակարդակում Բերնարդի բացասական դիրքորոշումն արտահայտված է *jolly well* հեզնական արտահայտությամբ: Վերոնշյալ երկխոսական միավորում առկա է *միակողմ քննադատում*, քանի որ չցանկանալով հակամարտել ամուսնու հետ՝ Ջենին խուսափողական պատասխաններ է տալիս նրան:

Հետևյալ օրինակում խոսակիցներից Էդվինը կիրառում է ներակա քննադատում, որի անուղղակիության աստիճանը այնքան բարձր է, որ իրադրային հարատեքստի միջոցով է հնարավոր ապակողմավորել նրա կատարած խոսքային ակտի քննադատական

նրբերանգները:

She went in her room to get ready and began to dawdle around powdering her face and looking at herself in the glass. *"Hey, Anne, for gosh sakes, we haven't got all night," he yelled through the door.*

J. D. P. 1919. 269

Էնն ու Էդվինը պայմանավորված են և պետք է գնան սահադաշտ՝ իրենց ընկերներին հանդիպելու, սակայն Էնը հայելու առաջ երկար հարդարվում է և ուշանում է: Էդվինը, կատարելով անուղղակի բողոք արտահայտող խոսքային ակտ, քննադատական ներազդեցություն է իրագործում Էնի վրա, քանի որ նրա պատճառով իրենք ուշանում են. *"Hey, Anne, for gosh sakes, we haven't got all night."*Ներասույթային մակարդակում Էդվինին համակած բացասական հույզերն արտահայտված են *for gosh sakes* խոսակցական արտահայտությամբ: Սույն երկխոսական միավորում առկա է *միակողմ քննադատում*, քանի որ Էնը ոչ ի կերպ չի արձագանքում իրեն ուղղված քննադատմանը՝ նախընտրելով լռությունը կիրառել որպես իր խոսքային մարտավարություն:

Հետևյալ երկխոսական միավորում առկա է *միակողմ քննադատում*, քանզի Էնին չի հակադարձում Սառայի՝ իր հասցեին ուղղված քննադատմանը՝ մասամբ ընդունելով իր մեղքը:

SARAH: You were planning to go with Norman to East Grinstead? ANNIE: Yes. He couldn't get anywhere else.

SARAH: *You're not serious?*

ANNIE: Yes.

SARAH: *But how could you even think of it?*

ANNIE: Well, I wanted a holiday...

SARAH: *Yes but _ this wouldn't be just a holiday...*

I mean, I mean, you just go off on holiday with your sister's husband.

ANNIE: It was only a weekend. I needed a holiday.

A. N. C. 25

Մառան քննադատում է Էնիին, քանի որ նա պատրաստվում է քրոջ ամուսնու հետ մեկնել ռոմանտիկ ճամփորդության: Մառայի քննադատական վերաբերմունքն արտահայտված է անուղղակի հարցով. *“You're not serious?”*: Հատկանշական է, որ իր քերականական կառուցվածքով սույն ասույթը հաստատական է, և միայն հարցական նշանն է ցույց տալիս դրա իրական իլլուկուտիվ իմաստը: Էնին չի հակադրվում, իսկ Մառան շարունակում է քննադատական ներգործությունը, այս անգամ՝ անուղղակի կշտամբանքով. *“But how could you even think of it?”*: Մա նույնպես ցանկալի պերլուկուտիվ ազդեցություն չի թողնում, քանզի Էնին հանգիստ բացատրում է իր արարքի դրդապատճառները, ինչն էլ ավելի է զայրացնում Մառային: Սույն հաստատական խոսքային ակտով՝ *“I mean, I mean, you just go off on holiday with your sister's husband”*, նա բացահայտորեն իր բացասական վերաբերմունքն է արտահայտում Էնիի արարքի նկատմամբ: Երկխոսությունը եզրափակում է ուղիղ կշտամբանք արտահայտող խոսքային ակտը, որտեղ Մառան բացահայտորեն քննադատում է Էնիի վարքագիծը. *“Well, you could have gone on your own.”*: Քննելով սույն երկխոսական միավորը՝ կարելի է ասել, որ այստեղ առկա է քննադատական ներազդեցության աստիճանական ուժգնացում. խոսակիցը իր բացասական դիրքորոշումը դիմացինի նկատմամբ սկզբում արտահայտում է անուղղակի խոսքային ակտով, սակայն հետագայում է նախընտրում է ավելի բացահայտ խոսքային ռազմավարություն՝ ուղիղ կշտամբանք:

Հետևյալ երկխոսական միավորի քննությունից պարզ է դառնում, որ այն պարունակում է *միակողմ քննադատում*, քանի որ

խոսակիցը ձգտում է մեղմացնել իր հասցեին ուղղված քննադատական ներազդեցությունը:

"You always have been honest, Simon. Now Augie brought us home every cent."

"Have been? I am!" he said mounting up on his pride and tallest falsehood-spurning dignity.

"I brought you my wages for twelve weeks, and thirty bucks besides."

S. B. A. O. A. M. 40

Սայմընն ամիսներ շարունակ գումար է տուն բերել, սակայն այդ պահին պակասեցրել է գումարի չափը: Տասիկը փորձում է պարզաբանել դրա պատճառը անուղղակի մեղադրանքի միջոցով. "You always have been honest, Simon.": Սայմընը, սակայն, անուղղակի անհամաձայնություն արտահայտող խոսքային ակտով չի ընդունում, որ ինքն անագնիվ է. *"Have been? I am!"*: Այնուհետև կատարելով անուղղակի բողոք արտահայտող խոսքային ակտ՝ Սայմընը նշում է, որ նա շաբաթական իր ողջ աշխատավարձը միշտ տուն է բերել և հանձնել մորը՝ իրեն ոչինչ չպահելով: Սայմընի քննադատական ներազդեցության ուժգնությունն արտահայտված է բացականչական նշանով:

Հետևյալ երկխոսական նմուշը պարունակում է *միակողմ քննադատական ներազդում*, քանի որ խոսակիցներից Բերնարդը չի հակադարձում իրեն ուղղված ներազդմանը:

BERNARD: Have you got a pipe-cleaner?

JACK [Indicating the money]: *Why don't you buy one?*

BERNARD: I haven't been out yet.

JACK: *On a beautiful morning like this? You frowsty old thing. N. E. D. 179*

Այսպես, ի պատասխան Բերնարդի խնդրանքի՝ Ջեքն անուղ-

ղակի կերպով հանդիմանում է նրան, քանի որ նա չի հոգում իր մասին և չի գնում իրեն անհրաժեշտ իրը. *“Why don't you buy one?”*: Ի պատասխան Ջեքի հանդիմանության՝ Բերնարդն արդարանում է՝ նշելով, որ ինքը դեռ չի հասցրել տանից դուրս գալ. *“I haven't been out yet.”*: Շարունակելով քննադատական ներազդեցությունը՝ Ջեքն անուղղակի հանդիմանություն արտահայտող խոսքային ակտով քննադատում է Բերնարդին նրա համար, որ նա նախընտրում է տանը մնալ, և չվայելել այդ գեղեցիկ առավոտը. *“On a beautiful morning like this?”*: *“You frowsty old thing”* լուտանք արտահայտող ասույթը նույնպես Ջեքի բացասական դիրքորոշման մասին է վկայում:

Փաստական նյութի քննությունը թույլ է տալիս եզրակացնել, որ *միակողմ քննադատումը* հիմնականում արտահայտվում է ներակա կերպով, քանզի շատ հաճախ խոսակիցները, հաղորդակցվելիս արտաբերելով անուղղակի խոսքային ակտեր պարունակող ասույթներ, նախընտրում են մեղմել իրենց ասածի բացասական հետևանքները: Սակայն միշտ չէ, որ անուղղակի խոսքային ռազմավարության կիրառումը հանգեցնում է անկոնֆլիկտ շփման:

Հակընդդդեմ երկխոսական միավորների առանձնահատկությունների քննությունից պարզ է դառնում, որ քննադատման պերլոկուտիվ ազդեցությունը դրսևորվում է երկու խոսքային մարտավարության միջոցով՝ միակողմ և երկկողմանի ներազդեցությամբ: Հատկանշական է, որ թե՛ միակողմ և թե՛ երկկողմանի քննադատական ներազդեցությունը կարող են ներակա (անուղղակի խոսքային ակտերով) և բացահայտ (ուղիղ խոսքային ակտերով) կերպով արտահայտվել: Սա թերևս պայմանավորված է այն հանգամանքով, որ խոսակիցները ցանկանում են տարբեր աստիճանի քննադատական ներազդեցություն իրագործել: Երկկողմանի քննադատական ներազդեցությունը հիմնականում պայմանա-

վորված է խոստղների առճակատման գնալու ցանկությամբ կամ էլ ունկնդրի կողմից իր թերացումը մասամբ ընդունելու պատրասատակամությամբ: Միակողմ քննադատական ներագդեցության խոսքային մարտավարության առանձնահատկությունն այն է, որ դիմացինը նախընտրում է ոչ մի կերպ չարձագանքել իրեն ուղղված քննադատմանը՝ այսպիսով զսպելով իրեն համակած զգացմունքները և խուսափելով հակամարտահարույց իրավիճակներից:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով կարող ենք նշել, որ լեզուն մարդկանց կենսագործունեությունն ապահովող հզոր գործիք է, որի միջոցով նրանք կարգավորում են իրենց հասարակական հարաբերությունները, լուծում կենսական խնդիրներ, ձևավորվում են որպես անհատ: Ընդամին, խոսքը ոչ միայն տեղեկատվություն հաղորդելու միջոց է, այլև ներագղելու՝ խոսքի հասցեատիրոջ վարքը, նրա զգայական ներաշխարհը, վերաբերմունքը, մտածմունքները փոփոխելու նպատակով: Մարդկանց՝ իրենց բնույթով հասարակական էակաների փոխհարաբերությունների հիմքում ընկած է սուբյեկտիվ չափորոշիչ, գործոն, որով առաջնորդվելով՝ նրանք արտածում են իրենց մտքերը՝ ձևակերպելով դրական կամ բացասական դիրքորոշմամբ բնութագրվող խոսք:

Սույն ուսումնասիրության խնդրո առարկան բացասական դիրքորոշմամբ բնութագրվող խոսքային դաշտն է, մասնավորապես խոսքնկերոջ վրա քննադատական ներագղեցություն գործելու նպատակով կատարվող խոսքային գործունեությունը: Գործաբանական լեզվաբանության մեջ խոսքի սույն իմաստային դաշտը կոչվում է պերլոկուտիվ, իսկ կատարվող խոսքային գործողությունը՝ պերլոկուտիվ ակտ:

Ըստ խոսքային ակտերի տեսության տեսաբանների՝ Ջ. Օսթինի, Ջ. Մըրլի, Ջ. Յուլի, Ս. Լևինսոնի՝ խոսքային ակտի պերլոկուտիվ իմաստային բաղադրիչը չի իրագործվում պայմանադրական հենքով: Այդ պատճառով սույն իմաստային բաղադրիչի առանձնահատկությունների բնութագրումը դառնում է խնդրահարույց, իսկ պերլոկուցիայի՝ խոսքի միջոցով ներագրման գործառույթը՝ անորոշ: Այն ընդունված տեսակետը, որ միայն խոսողը կարող է որոշարկել իր խոսքային գործունեությամբ առաջացած պերլոկուտիվ ազդեցության բնույթը, հաղորդակցումը դարձնում

է միակողմանի խոսքային գործունեություն՝ մենախոսություն: Սակայն, ինչպես գիտենք, ցանկացած խոսք ուղղված է որևէ ունկնդրի, և պերլոկուտիվ ակտի ճիշտ մեկնաբանումը պայմանավորված է ունկնդրի ճիշտ մտահանգում կատարելու կարողությամբ, որն իրագործվում է տվյալ հաղորդակցական իրադրությունը բնութագրող համատեքստային և հարատեքստային ցուցիչների կիրառմամբ: Ընդամին, մեր կատարած հետազոտության արդյունքները փաստում են, որ կոնֆլիկտային խոսքային իրադրություններում պերլոկուտիվ ակտը կարող է իրագործվել որոշ պայմանադրական հենքով և սահմանափակվել իլլոկուտիվ ակտերի որոշակի իմբերի գործադրմամբ: Հակընդդեմ երկխոսական միավորներում դրսևորվող քննադատման պերլոկուտիվ ազդեցության ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ խոսողը կարողանում է ուղղորդել իր կատարած խոսքային ակտի միջոցով առաջացած ազդեցության բնույթը, քանի որ դա նրա հաղորդակցական նպատակի մաս է կազմում:

Հակընդդեմ երկխոսական միավորում առկա հարատեքստային ցուցիչների ուսումնասիրությունը ցույց տվեց նաև, որ քննադատական խոսքային մարտավարությունների իրագործումը պայմանավորված է խոսողի ունեցած բացասական դիրքորոշմամբ և իրականացում է խոսքային ակտերի որոշակի իմաստային տարատեսակների կիրառմամբ: Այնուամենայնիվ, պետք է ընդունենք այն հանգամանքը, որ պերլոկուցիան միշտ չէ, որ հաղորդակցական նպատակի մաս է դառնում, և խոսքային գործունեության ընթացքում իլլոկուտիվ ակտերի գործադրմամբ ձևավորվող պերլոկուցիաները կարող են նաև անսպասելի, անկանխատեսելի ելքեր ունենալ:

Ի դեպ, մեր ուսումնասիրությունը թույլ է տալիս նաև տարանջատում մտցնել պլանավորված և չպլանավորված քննադատական պերլոկուտիվ ակտերի միջև: Երկու դեպքում էլ ներագո-

ման իմաստը ճիշտ ապակողավորելու համար ունկնդրին անհրաժեշտ է հենքային գիտելիք ունենալ և ճիշտ մտահանգում կատարել: Անզլերեն գեղարվեստական դիսկուրսում քննադատման խոսքի դրսևորման ուսումնասիրությունը ցույց տվեց նաև, որ լինելով հակոտնյա հասարակական հարաբերությունների լեզվական դրսևորում՝ այն կարող է իրագործվել ուժգնության տարբեր աստիճաններով՝ ուժեղ քննադատական ներազդեցություն, որն իրագործվում է ուղիղ խոսքային ակտերով, և թույլ քննադատական ներազդեցություն, որն իրականացվում է անուղղակի խոսքային ակտերով: Այս դեպքում առաջնային է դառնում խոսքի կառավարման հասարակական գործոնը, և գործի են դրվում լեզվական քաղաքավարության մարտավարական մեխանիզմները:

Տեսական և փաստական նյութի վերլուծությունը հնարավորություն է ընձեռում պնդելու, որ խոսքային ակտի իլլոկուտիվ մակարդակում քննադատական ներազդեցությունը կարող է իրագործվել ինչպես բացասական ներիմաստ պարունակող խոսքային ակտերով (արտահայտչական խոսքային ակտերի դասին պատկանող հանդիմանության, բողոքի, մեղադրանքի, լուտանքի, նախատինքի միջոցով), այնպես էլ այնպիսի խոսքային ակտերով, որտեղ բացասական ներիմաստ առկա չէ (դիրեկտիվների դասին պատկանող հրամանները, զգուշացումները, հարցականների դասին պատկանող հարցերը): Սույն խոսքային ակտերը քննադատական խոսքային մարտավարությունների շարքին են դասվում տվյալ համատեքստում առկա կոնֆլիկտային իրավիճակի հետևանքով:

Քննադատման ներազդեցությունը կատարվում է ուղիղ խոսքային ակտերի միջոցով այն դեպքում, երբ խոսողը ցանկանում է առճակատման գնալ: Ուղիղ խոսքային ակտերով իրագործվող քննադատման պերլոկուտիվ ազդեցությունը *բացահայտ* խոսքային մարտավարության հաղորդակցման տարատեսակ է, որն

իրագործվում է հանդիմանություն, բողոք, նախատինք, մեղադրանք, լուտանք, սպառնալիք, զգուշացում, հրաման արտահայտող խոսքային ակտերով: Իսկ *ներակա քննադատման պերլոկուտիվ ազդեցությունը* խոսքային մարտավարության տարատեսակ է, որն իրագործվում է անուղղակի խոսքային ակտերով (հանդիմանություն, նախատինք, սպառնալիք, զգուշացում, հրաման): Քննությունը ցույց է տալիս, որ խոսքային մարտավարության սույն տարատեսակի ընտրությունը պայմանավորված է խոսողի խոսքային ակտի հետևանքով ի հայտ եկած բացասական հետևանքները մեղմելու ցանկությամբ: Հակընդդեմ երկխոսական միավորներում առկա քննադատական վերաբերմունքի հաղորդակցական դրսևորումների քննությունը հաստատում է, որ խոսքային ակտի պերլոկուտիվ մակարդակում խոսքնկերների կոնֆլիկտային հարաբերությունները կարող են դրսևորվել *միակողմ երկկողմանի* ներազդեցությամբ: *Քննադատական ներազդման միակողմ* դրսևորումը խոսքում պայմանավորված է քննադատվողի կողմից սեփական մեղքն ընդունելու կամ առճակատման չգնալու ցանկությամբ: *Երկկողմանի քննադատական դրսևորումը* հակամարտահարույց հաղորդակցական տարատեսակ է, որտեղ խոսակիցներից քննադատվողը չի ընդունում իրեն ուղղված քննադատումը՝ նախընտրելով հակադարձել խոսողին: Միակողմ ու երկկողմանի քննադատական ներազդումն իրագործվում է ուղիղ և անուղղակի խոսքային ակտերով (հանդիմանություն, նախատինք, բողոք, լուտանք, մեղադրանք, սպառնալիք, զգուշացում, հրաման, հորդոր և այլն): Ներասույթային մակարդակում քննադատման պերլոկուտիվ ազդեցությունն իրագործվում է բացասական իմաստային երանգ ունեցող բառերի, անպարկեշտ խոսակցական արտահայտությունների, սաստկական հավելում ունեցող բառերի օգնությամբ:

Քննադատման պերլոկուտիվ ազդեցություն իրագործող խոս-

քային ակտերի հնչերանգային և առոգաբանական առանձնահատկությունների քննությամբ պարզ է դառնում, որ քննադատման պերլոկուտիվ ակտը հիմնականում իրագործվում է իջնող տոնով, խոսքին բնորոշ են նաև դադարները: Ուժեղ քննադատական ներազդեցություն իրագործելիս հաղորդակցվողների խոսքն առանձնանում է արագությամբ, ձայնային բարձր ելևէջներով, դադարների հաճախակի կիրառմամբ: Քննադատումը կարող է արտահայտվել նաև այնպիսի հարալեզվական միջոցներով, ինչպիսիք են՝ արհամարհական քմծիծաղը, ջղային հայացքը, գլխի և ձեռքերի արհամարհական շարժումները, նյարդային ձայները: Մեղմ քննադատություն իրագործելիս խոսողի խոսքին բնորոշ են հանգիստ ձայնային ելևէջներ, դանդաղ տեմպ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Բեքարյան Լ.**, Միջանձնյա հակամարտության խոսքային դրսևորումը ժամանակակից անգլերենում, Ատենախոսություն Բան. գիտ. թեկն. գիտ. աստ. հայց. համար, Երևան, 2007, 187 էջ:
2. **Պարոնյան Շ.**, Լեզվաճանաչողություն և դիսկուրս, Երևան, ԵՊՀ հրատ., 2011, 297 էջ:
3. **Պարոնյան Շ., Բեքարյան Լ.**, Միջանձնյա հակամարտության խոսքային դրսևորումները ժամանակակից անգլերենում // «Օտար լեզուները բարձրագույն դպրոցում», թիվ 8, Երևան, ԵՊՀ հրատ., 2007, էջ 98-107:
4. **Ռոստոմյան Ա.**, Հույզերի խոսքային և ոչ խոսքային դրսևորումները որպես լեզվաճանաչողական քննության առարկա, Ատենախոսություն Բան. գիտ. թեկն. գիտ. աստ. հայց. համար. Երևան, 2013, 159 էջ:
5. **Վարդանյան Ս.**, Գործնական հնչյունաբանության ձեռնարկ, Երևան, ԵՊՀ հրատ., 1989, 163 էջ:
6. **Дейк Т. А.**, Язык. Познание. Коммуникация, Москва, “Прогресс”, 1989, 312 с.
7. **Чахоян Л. П.**, Синтаксис диалогической речи современного английского языка, Москва, “Наука”, 1979, 159 с.
8. **Antaki, C.**, Explaining and Arguing: The Social Organization of Accounts, London: Sage Publications, 1994, 222 pages.
9. **Auer, P., Di Luzzio, A.**, The Contextualization of Language, John Benjamins, 1992, 402 pages.
10. **Austin, J. L.**, How to Do Things with Words, Oxford: Oxford University Press, 1980, 192 pages.
11. **Bach, K. & Harnish, R. M.**, Linguistic Communication and Speech Acts, Cambridge, MA: MIT Press, 1979, 352 pages.

12. **Bolinger, D.**, *Intonation and Its Uses*, London: Edward Arnold, 1989, 470 pages.
13. **Bonito, J., Sanders, R.**, Speakers' footing in a collaborative writing task: A resource for addressing disagreement while avoiding conflict, *Research on Language and Social Interaction* 34 Taylor & Francis, 2002, pp. 481-514.
14. **Brazil, D.**, The Place of Intonation in a Discourse Model, in M. Coulthard and M. Montgomery (eds.), *Studies in Discourse Analysis*, London: Routledge and Kegan Paul, 1980, 205 pages.
15. **Briggs, Ch.**, *Disorderly Discourse: Narrative, Conflict & Inequality*, Oxford, Oxford University Press, 1996, 248 pages.
16. **Brown, G., Yule, G.**, *Discourse Analysis*, Cambridge: Cambridge University Press, 1983, 283 pages.
17. **Brown, P., & Levinson, S. C.**, *Politeness: Some Universals in Language Usage*, Cambridge: Cambridge University Press, 1987, 345 pages.
18. **Brown, P.**, Politeness and Language, In N. J. Smelzer & P. Baltes (Eds.), *The international encyclopedia of the social and behavioral sciences*, Vol. 17 Oxford: Elsevier, 2001, pp. 11620-11624.
19. **Bunt**, Dynamic interpretation in text and dialogue in Taylor, M. M., Bouwhuis, D. G. & Neel, F. (Eds.), Philadelphia: John Benjamins, 1996, pp. 139-166.
20. **Campbell, P.**, A Rhetorical View of Locutionary, Illocutionary and Perlocutionary Acts, *Quarterly Journal of Speech* 59, 1973, pp. 284-296.
21. **Clayman, S.**, Disagreements and Third Parties: Dilemmas and Neutralism in Panel News Interviews, *Journal of Pragmatics* 34, 2002, pp. 1385-1401.
22. **Cohen, T.**, Illocutions and Perlocutions, *Foundations of Language*, 11, 1973 pp. 492-503.

23. **Cole, P.**, *Radical Pragmatics*, New York: Academic Press, 1981 328 pages.
24. **Coulthard, M.**, *An Introduction to Discourse Analysis*, London: Longman Group, Ltd., 1977, 224 pages.
25. **Crystal, D.**, *Prosodic Systems and Intonation in English*, Текст. /D. Crystal. –L.: CUP, 1969, 382 pages.
26. **Cummings, L.**, *Pragmatics: A Multidisciplinary Perspective*, Edinburgh: Edinburgh University Press, 2005, 336 pages.
27. **Cutting, J.**, *Pragmatics and Discourse: A Resource Book for Students*, Florence, KY, USA: Routledge, 2002, 201 pages.
28. **Davis, S.**, *Pragmatics: A Reader*, Oxford: Oxford University Press, 1991, 595 pages.
29. **Davis, S.**, Perlocution, In: John Searle et al. eds. 1980, pp. 37-55.
30. **Dersley, I.**, Wooton, A., In the Heat of Sequence: Interactional Features Receding Walkouts from Argumentative Talk, *Language in Society* 30: Cambridge University Press, 2001, pp. 611-638.
31. **Dijk, T. A. van.**, *Cognitive Processes in Comprehension* Proceedings of the 12th Carnegie Mellon Symposium of Cognition, Eds. P. Carpenter, M. Just, Hillsdale, 1977a, pp. 3-33.
32. **Dijk, T. A. van.**, *Text and Context Explorations in the Semantics and Pragmatics of Discourse* London: Longmans, 1977b, 261 pages.
33. **Dorril, M. A.**, *Disagreement in Japanese: Three Case Studies (Conversation, Argumentation, Cross-Cultural Communication)* Unpublished PhD thesis, 1997, <http://www.umi.com>.
34. **Duranti, A., Goodwin, C.**, *Rethinking Context: Language as an Interactive Phenomenon*, Cambridge University Press, 1992, 366 pages.
35. **Eemeren, F. van, & Grootendorst, R.**, *Speech Acts in Argumentative Discourse*, Dordrecht, Holland: Foris, 1984, 215 pages.

36. **Eemeren, F. van, & Grootendorst, R.**, A Systematic Theory of Argumentation: The Pragma-dialectical Approach, Cambridge: Cambridge University Press, 2004, 216 pages.
37. **Felix-Brasdefer, J. C.**, Politeness in Mexico and the United States, USA: John Benjamins Publishing Company, 2008, 195 pages.
38. **Gaines, R. N.**, Doing by Saying: Toward a Theory of Perlocution, Quarterly Journal of Speech 65, 1979, pp. 207-217.
39. **Garfinkel, H.**, Studies in Ethnomethodology, Cambridge, UK: Polity Press, 1967, 304 pages.
40. **Gazdar, G.**, Speech Act Assignment” in Joshi, A. K. et al (Eds.), Elements of Discourse Understanding 1981, pp. 64-83.
41. **Gibbs, R. W. Jr.**, A new look at literal meaning in understanding what is said and implicated, Journal of Pragmatics 34, 2002, pp. 457-486.
42. **Gibbs, R. W. Jr.**, The Poetics of Mind: Figurative Thought, Language and Understanding, Cambridge: Cambridge University Press, 1994, 527 pages.
43. **Giora, R. & O’Fein, O.**, Irony comprehension: the graded salience hypothesis, International Journal of Humor Research 12(4), 1999, pp. 425-436.
44. **Glucksberg, S.**, Metaphor, Current Directions in Psychological Science, 7 1998, pp. 39-43.
45. **Goffman, E.**, Forms of Talk, Philadelphia, Pennsylvania: University of Pennsylvania Press, 1981, 335 pages.
46. **Goffman, E.**, Interaction Ritual: Essays on Face to Face Behavior, Chicago: Aldine Publishing Company, 1967, 270 pages.
47. **Goffman, E.**, Replies and Responses, Language and Society, Vol. 5, 1976, pp. 257-313.
48. **Goleman, D.**, Emotional Intelligence, New York, Toronto, London, Sydney, Auckland: Bantam Book, 1995, 368 pages.

49. **Grice, H. P.**, Further Notes on Logic and Conversation, in *Syntax and Semantics: Pragmatics*, V. 9, P. Cole (ed.), New York: Academic Press, 1978, pp. 183-197.
50. **Grice, H. P.**, Logic and Conversation, In P. Cole & J. Morgan (Eds). *Syntax and Semantics*, Vol. 3 New York: Academic Press, 1975, pp. 22-40.
51. **Grice, H. P.**, Meaning, Philosophical review, New York: Academic Press, 1957, pp. 377- 388.
52. **Gruber, H.**, Questions and Strategic Orientation in Verbal Conflict Sequences, *Journal of Pragmatics*, 33, 2001, pp. 1815-1857.
53. **Gu, Y.**, An Outline of Conversational Rhetoric, *Rhetoric Studies* 5, 1991, pp. 20-27.
54. **Gu, Y.**, Pragmatics and Rhetoric: A Collaborative Approach to Conversation, In: H. Parret, ed., *Pretending to Communicate*, Berlin: Walter Lie Gruyter, 1993, pp. 112-127.
55. **Gu, Y.**, The Impasse of Perlocution, *Journal of Pragmatics* 20: North Holland, 1993, pp. 405-432.
56. **Gumperz, J.**, Interactional linguistics: a personal perspective, In Schiffrin, D., D. Tannen and H. Hamilton (eds.) *The Handbook of Discourse Analysis*. Oxford: Blackwell, 2001, pp. 215-228.
57. **Gumperz, J. J.**, *Discourse Strategies*, Cambridge: Cambridge University Press, 1982, 225 pages.
58. **Halliday, M., Hasan, R.**, *Cohesion in English*, London: Longman, 1976, 392 pages.
59. **Harnish, R.**, Logical form and implicature In Bever T, Katz J & Langendoen D T (eds.) *An integrated theory of linguistic ability*, New York: Crowell, 1976, pp. 313-392.
60. **Harre', R.**, Rules in the Explanation of Social Behavior, in P. Collett (ed.), *Social Rules and Social Behavior*. Oxford: Basil Blackwell 1977(a), pp. 173-180.

61. **Harre', R.**, The Ethogenic Approach: Theory and Practice in L. Berkowitz (ed.), *Advances in Experimental Psychology*, Vol. 10, New York: Academic Press, 1977(b), pp. 283-314.
62. **Harre', R.**, *Personal Being: A Theory for Individual Psychology*, Oxford: Blackwell, 1984, 299 pages.
63. **Harre', R.**, Selves in Talk, *British Journal of Social Psychology* 25, 1986(a), pp. 271-273.
64. **Heringer, J.**, *Some Grammatical Correlates of Felicity Conditions and Presuppositions*, Mimeo: Indiana University Linguistics Club, 1972, 110 pages.
65. **Heusinger, von K.**, *Intonation and Information Structure*, University of Konstanz, 1999, 236 pages.
66. **Hirschberg, J., & Ward, G.**, The Interpretation of the High Rise Questions in English, in *Journal of Pragmatics* 24(5), 1995, pp. 407-412.
67. **Holtgraves, T.**, *Language as Social Action: Social Psychology and Language Use*, Lawrence Erlbaum Associates Publishers Mahwah: New Jersey London, 2002, 253 pages.
68. **Itakura, H.**, Describing Conversational Dominance, *Journal of Pragmatics* 33, 2001, pp. 1859-1880.
69. **Johnson, D. W., Johnson, R. T.**, *Teaching Students to Be Peacemakers*, Edina, MN, Interaction Book Company, 1995. www.co-operation.org/pages/peace/html
70. **Kakava, Ch.**, *Discourse and Conflict //Handbook of Discourse Analysis*. Ed. By D. Schiffrin, D. Tannen, H. Hamilton, Oxford, Blackwell Publishing, 2003, pp. 650-671.
71. **Kallia, A.**, Linguistic Politeness: The Implicature Approach, *Multilingua*, 23(1/2), 2004 pp. 145-169.
72. **Krabbe, C. W.**, Profiles of Dialogue as a Dialectical Tool //Advances in Pragma- Dialectics. Ed. Frans H. van Eemeren. –

- SicSat/Amsterdam vale Press/Newport News, Virginia, 2002, pp. 13-28.
73. **Labov, W.**, *Sociolinguistic Patterns*, Philadelphia: University of Pennsylvania Press, 1972, 344 pages.
 74. **Ladd, R.**, *Intonational Phonology*, R. Ladd. Cambridge: CUP, 1996, 219 pages.
 75. **Laforest, M.**, *Scenes of Family Life: Complaining in Everyday Conversation*, *Journal of Pragmatics* 34, 2002, pp. 1595-1620.
 76. **Lakoff, G.**, *Pragmatics and Natural Logic*, in Keenan (Ed), 1975, 46 pages.
 77. **Lakoff, R.**, *Talking Power*, New York: Basic Books, 1990, 324 pages.
 78. **Lakoff, R.**, *The Logic of Politeness; or, minding your p's and q's*, In C. Corum, S. Cedric & A. Weiser (Eds.), *Papers from the ninth regional meeting*, Chicago Linguistic Society, 1973, pp. 292-305.
 79. **Leech, G.**, *Principles of Pragmatics*, New York: Longman, 1983, 250 pages.
 80. **Levinson, S.**, *Pragmatics*, Cambridge: Cambridge University Press, 1983, 376 pages.
 81. **Levinson, S.**, *Presumptive Meanings*, Cambridge, MA: MIT Press, 2000, 480 pages.
 82. **Lieberman, M. & Sag, I.**, *Prosodic form and discourse function*, In *Papers from the Tenth Regional Meeting*, Chicago Linguistic Society, 1974, pp. 416-427.
 83. **McCarthy, M.**, *Discourse Analysis for Language Teachers*, Cambridge: Cambridge University Press, 1991, 205 pages.
 84. **McKinlay, A., McVittie, C.**, *Social Psychology and Discourse*, United Kingdom: Wiley – Blackwell, 2008, 328 pages.
 85. **Morales-Lopez, E.**, *Prego-Vazquez, Domingo-Seco, Interviews between employees and customers during a company restructuring process*, *Discourse & Society*, 16, 2005, pp. 225-226.

86. **O'Connel, S.**, Managing Disagreement to Avoid Confrontation in Sports Talk Radio// Applied Linguistics M. A. Essay, Teachers College, Columbia University, 2002.
87. **Piazza R.**, Conflict Discourse in Italian Film Scripts/
www.public.iastate.edu/~goodwin/conf/piazza.pdf.
88. **Pike, K.**, General Characteristics of Intonation, edited by D. L. Bolinger, Hermondsworth: Penguin Books Ltd., 1945, pp. 53-82.
89. **Pomerantz, A.**, Agreeing and Disagreeing with Assessments: Some features of preferred/ dispreferred turn shapes, In J. M. Atkinson & J. Heritage (Eds.), Structures of social action: Studies in conversation analysis, Cambridge: Cambridge University Press, 1984, pp. 57-101.
90. **Potter, J. & Wetherell, M.**, Discourse and Social Psychology: Beyond Attitudes and Behavior, London: Sage Publishing Company, 1987, 256 pages.
91. **Reichman, R.**, Getting Computers to Talk Like You and Me: Discourse, Context, Focus and Semantics (an ATN model), Cambridge, Mass., London: MIT Press, 1985, 144 pages.
92. **Ross, J.**, On declarative sentences, in Jacobs, R. & Rosenbaum, P. (Eds.), 1970, pp. 222- 272.
93. **Sadock, J.**, On testing for conversational implicature, In Cole P (ed.) Syntax and Semantics, Vol. 9, Pragmatics, New York: Academic Press, 1978, pp. 281-297.
94. **Sadock, J.**, Speech act distinctions in grammar, In Newmeyer F (ed.) Linguistics: the Cambridge survey, Cambridge: Cambridge University Press, 1988, pp. 183-1998.
95. **Sadock, J.**, Speech acts, In Horn L R & Ward G (eds.) The handbook of pragmatics. Oxford: Blackwell, 2004, pp. 53-73.
96. **Sadock, J.**, Toward a linguistic theory of speech acts, New York London: Academic Press, 1974, 168 pages.

97. **Sadock, J.**, Whimperatives, *Journal of Linguistics*, Vol. 15, Issue 02, Cambridge: Cambridge University Press, 1979, pp. 225-244.
98. **Schiffrin, A.**, Modeling Speech Acts in Conversational Discourse”, The University of Leeds School of Computing, 2005, 312 pages.
99. **Schiffrin, D.**, *Approaches to Discourse:*, Oxford: Blackwell, 1994, 470 pages.
100. **Searle, J. R.**, *Consciousness and Language*, Cambridge: Cambridge University Press, 2002, 269 pages.
101. **Searle, J. R.**, *Expression and Meaning: Studies in the Theory of Speech Acts*, Cambridge: Cambridge University Press, 1979, 187 pages.
102. **Searle, J. R.**, *Indirect Speech Acts*, In P. Cole & J. Morgan (Eds.), *Syntax and Semantics*, Vol. 3, New York: Academic Press, 1975, pp. 59-82.
103. **Searle, J. R.**, *Mind, Language and Society: Philosophy in the Real World*, New York: Basic Books, 1999, 192 pages.
104. **Searle, J. R.**, *Speech Acts*, Cambridge: Cambridge University Press, 1969, 203 pages.
105. **Shotter, J.**, *Social Accountability and Selfhood*, Oxford: Blackwell, 1984, 253 pages.
106. **Smith, P.**, *Speech act theory, discourse structure and indirect speech acts*, Leeds: University of Leeds, 1991, 245 pages.
107. **Strawson. P.**, *Intention and convention in speech acts*, *The Philosophical Review* 73: Cornell University, 1964, pp. 439-460.
108. **Strawson. P.**, *Austin and Locutionary Meaning*, In I. Berlin et al., 1973, pp. 46-68.
109. **Strawson. P.**, *Meaning and Truth*, In *Logico-linguistic Papers*. London: Methuen, 1971, pp. 170-189.
110. **Strawson. P. F.**, *On referring*, *Mind New Series* Vol. 59, No. 235: Oxford University Press, 1950, pp. 320-344.

111. **te Molder, H., & Potter, J.,** Conversation and Cognition, Cambridge: Cambridge University Press, 2005, 279 pages.
112. **Temple, J., Honeck, R.,** Proverb Comprehension: The primacy of literal meaning, Journal of Psycholinguistic Research 28: Springer US, 1999, pp. 41-70.
113. **Tuffin, K.,** Understanding Critical Social Psychology, London: Sage Publications, 2005, 204 pages.
114. **Verschueren, J.& Ola Ostman, J.,** Key Notions for Pragmatics, Amsterdam, Philadelphia: John Benjamins Publishing Company, 2009, 267 pages.
115. **Weiser, A.,** Deliberate Ambiguity, Papers from the 10th Regional Meeting of the Chicago Linguistics Society, 1974, pp. 723-731.
116. **Wennerstrom, A.,** The Music of Everyday Speech: Prosody and Discourse Analysis, Oxford University Press: 2001, 338 pages.
117. **Widdowson, H. G.,** Text, Context, Pretext. Critical Issues in Discourse Analysis, New York: Blackwell Publishing, 2004, 179 pages.
118. **Wilson, D., Sperber, D.,** Relevance, Oxford: Basil Blackwell, 1995, 326 pages.
119. **Wharton, T.,** Pragmatics and Non-Verbal Communication, Cambridge University Press, 2009, 219 pages.
120. **Yule, G.,** Pragmatics, Oxford: Oxford University Press, 2002, 127 pages.

Գեղարվեստական գրականության ցանկ

1. A. M. T D. O. S. – Arthur Miller, Death Of Salesman, Heinmann Plays Series, 1994, 117 pages.
2. A. N. C. – Alan Ayackbourn, The Norman Conquests, London; New York: Frenth, 1975, 181 pages.
3. B.A. P. 7.– Best American Plays seventh series 1967-1973 edited

with an introduction by Clive Barnes New York: Crown Publishers, 1975, 585 pages.

4. E. A. W. A. O. V. W. – Edward Albee, Who's Afraid Of Virginia Woolf? New York, Pocket Books, 1966, 116 pages.
5. F. S. F. T. B. A. T.D. – F. Scott Fitzgerald, The Beautiful And The Damned, 247 pages.
6. J. D. P.1919. – John Dos Pasos, 1919, New York: New American Library, 1960, 471 pages.
7. N. E. D. 7. – New English Dramatists 7 United Kingdom: Penguin Books, 1968, 221 pages.
8. S. B. A. O. A. M. – Saul Bellow, Adventures Of Augie March, USA: Penguin Books, 1966, 617 pages.

Բառարաններ

1. **Ա. Սուքիասյան**, Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Երևան, Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատ., 1967, 683 էջ:
2. **Է. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, «Հայաստան» հրատ., հատ. 1, 2, 1976, 1641 էջ:
3. **Ս. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան: Չորս հատորով, ԵՊՀ հրատ., 2010, 648 էջ:

Ֆիլմեր

1. “The Help”: directed by Tate Taylor, starring Emma Stone, Viola Davis
2. “Schindler’s List”: directed by Steven Spielberg, starring Liam Neeson, Ben Kingsley

Համացանցային կայքեր

- <http://en.wikipedia.org/wiki/Criticism>

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐՓԻՆԵ ՀԱՄԼԵՏԻ ՄԱԴՈՅԱՆ

**ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ ԽՈՍՔԻ
ԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ
ԱՆԳԼԵՐԵՆՈՒՄ**

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
չրատ. խմբագրումը՝ Մ. Հովհաննիսյանի

Տպագրված է «Time to Print» օպերատիվ տպագրությունների սրահում:
ք. Երևան, Խանջյան 15/55

Ստորագրված է տպագրության՝ 27.05.2021:

Չափսը՝ 60x84 ¹/₁₆: Տպ. մամուլը՝ 12,25:

Տպաքանակը՝ 100:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am



ՎՐԱՏԱՐԱԿՅՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2021
publishing.y-su.am